

12-14(405-407)
30.04.2015
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գիտարար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ՀԻՇՈՒՄ ԵՄ ԵՎ ՊԱՏԱՆՋՈՒՄ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ- ԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԿՈ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՈՒՐԵՐԶԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒ- ԹՅԱՆ ՉՈՐՏԵՐԻ ՀԻՇՎԱԿԻ ՕՐ-



Սիրելի՛ հայրենակիցներ

Այսօր ողջ հայ ժողովուրդը, բոլոր հայերն աշխարհի տարբեր ծայրերում ոգեկոչվում են Հայոց ցեղասպանության 1.5 միլիոն անմեղ զոհերի հիշատակը:

Այսօր աշխարհի բոլոր հայկական եկեղեցիներում հնչող զանգերն ազդարարում են Մեծ եղեռնի 100-րդ տարեկիցը, և ամեն մի դողաճիցի հետ նորոգվում են մեր 100-ամյա ցավն ու մորմոքը:

Մեր ազգի հիշողության մեջ 1915-ի վերքերը չեն սպիացել և չեն էլ կարող սպիանալ, քանի դեռ 20-րդ դարակազմի աշխարհի աչքի առջև Օսմանյան կայսրության կողմից հայ ժողովրդի դեմ իրականացված այդ հրեշավոր ոճրագործությունը չի ստացել արժանի գնահատական, քանի դեռ այդ հանցավոր քաղաքականությունը շարունակվում է նաև մեր օրերում՝ ամեն անգամ ստանալով նոր կերպարանք ու նոր անուն:

Մենք խորապես շնորհակալ ենք ու երախտապարտ բոլոր այն ժողովուրդներին ու պետություններին, ովքեր օգնության ձեռք մեկնեցին թուրքական յաթաղանից հրաշքով փրկված մեր հայրենակիցներին՝ ապաստան և ապրելու հնարավորություն տալով տասնյակ հազարավոր հայ ընտանիքների ու որբերի: Նրանք հետագայում դարձան այդ երկրների արժանի քաղաքացիներ՝ նշանակալի ներդրում ունենալով իրենց երկրորդ հայրենիքի զարգացման գործում: Շնորհակալ ենք բոլոր նրանց, ովքեր իրենց ծայրը բարձրացրին բարբարոսների դեմ՝ մարդասիրական, բարոյական ու քաղաքական գորակցություն հայտնելով մեր ժողովրդին, ճանաչեցին ու դատապարտեցին Հայոց ցեղասպանությունը:

Հայ ժողովուրդը, որ աշխարհի ամենահին քաղաքակրթության կրողներից է, իր բազմադարյա պատմության ընթացքում տեսել է շատ արհավիրքներ, տարել անասելի զրկանքներ ու դիմակայել անհամար փորձությունների, սակայն երբեք չի կորցրել իր հույսն ու հավատը և ամեն անգամ դարձել է ավելի ամուր, ուժեղ ու իմաստուն: Ցեղասպանության ենթարկվելով և կորցնելով գրեթե ամեն ինչ՝ հայն աչքի լույսի պես պահել ու փայփայել է իր հավատքն ու լեզուն, մշակույթն ու ազգային ինքնությունը: Եվ դա օգնել է մեզ տարիներ հետո կերտել փառավոր հաղթանակներ և վերականգնել հայոց անկախ պետականությունը:

Այսօր Մայր Հայաստանը, ազատ ու անասան Արցախը և հայրենավեր Սփյուռքը միասին ու ձեռք ձեռքի կառուցում են իրենց կյանքի ճանապարհը. դա հայ ժողովրդի հավերժության ճանապարհն է, արդարության ու լույսի հաղթանակի ճանապարհը:

ԽՈՆԱՐՅՈՒՄ՝ ԵՂԵՌՆԱԶԱՐԿ ՆԱՅԱՏԱԿՆԵՐԻ



Հայոց ցեղասպանության 100-ամյա տարեկիցը սթափության ու զոհության կոչ էր համայն աշխարհի մարդկությանը՝ չուրանալ ու չմոռանալ անցյալ դարասկզբին հայ ժողովրդի նկատմամբ Օսմանյան թուրքիայի իրականացրած անմախաղեպ ոճրագործությունը: Զճանաչել ու չդատապարտել՝ նշանակում է կանաչ լույս վառել նորանոր ցեղասպանությունների առաջ, ինչն էլ, ցավոք, արվեց նախորդ հարյուրամյակի ընթացքում՝ զարհուրելի պատկերներով լցնելով մարդկության հիշողությունը...

Ապրիլի 24-ին Արցախը ևս ոգեկոչվեց Մեծ եղեռնի զոհերի հիշատակությամբ:

Նախօրեին, երեկոյան ժամը 19.15-ին, Արցախի վանքերում ու եկեղեցիներում ևս դրդանջեցին զանգերը՝ 100 անգամ առ երկինք հղելով անմեղ նահատակների լուռ բողբոջը: Այնուհետև կատարվեց Սրբոց տոն՝ ի հայցում սրբերի բարեխոսության: Հաջորդ օրը Ստեփանակերտի Հուշահամալիրում տեղի ունեցավ Ցեղասպանության զոհերի հիշատակին կառուցված «Անլռելի զանգակատուն» հուշակոթողի բացման հանդիսավոր արարողությունը, որին մասնակցում էին պետական այրեր՝ ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի գլխավորու-

կողմից Հայոց ցեղասպանությանն անպայման պատշաճ գնահատական է տրվելու, այն ճանաչվելու և դատապարտվելու է: Իսկ դրան հասնելու առիավտյան հայոց անկախ պետականությունն է, մեր հզոր զինուժը, համազգային միասնությունն ու սեփական ուժերին ապավինումը:

Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի հանդիսապետությամբ հուշակոթողն օծվեց: Տերունական արդթք հնչեցնելով, Սրբազանը նաև ազգի հարատևության հավատ ներշնչեց ներկաներին՝ մասնավորապես

ասելով. «Մենք պետք է պաշտպան կանգնենք մեր կյանքին, ցեղասպանության ճանաչմանը, Արցախի հարցի արդարացի լուծմանը: Արդարությունն իր պաշտպանների, իր մարտիկների կարիքն ունի: Եվ մենք չենք ընկճվելու, չենք հոգնելու, ցեղասպանություն անողները Աստծո դեմ են մեղք գործում, քանզի կյանքը Աստծո պարգևն է: Իսկ մենք ձեզ հետ միասին Աստծո պաշտպաններն ենք»:

Խոնարհումը եղեռնազարկ նահատակների հիշատակի առաջ՝ բյուրավորների լուռ երդումն է, մեռելոց ողբն ու կոչը ապրողաց:

«ԼՍԱՐԱՐ»



ՊԱՐԱԿՈՉ

100 զանգ կհնչի այդ օր,
100 սիրտ կնվա այդ օր,
100 հունը կպայթի հողից,
100 կյանք կհառնի նորից:

100 զանգ կհնչի այդ օր,
100 գլուխ կհակվի այդ օր,
100 մարդ կծնկի հողին,
100 աղոթք կհառնի երկին:

100 զանգ կհնչի այդ օր,
100 ճիչ կլսվի այդ օր,
100 սիրտ կցնծա խիղճից,
100 ծաղիկ կընծյուղվի հողից:

100 զանգ կհնչի այդ օր,
100 կոչ կլսվի այդ օր,
100 միտք կզարթնի նիրհից,
100 երգ կծնվի ցավից:

100 զանգ կհնչի այդ օր,
100 կակաչ կբացվի այդ օր,
100 լուռ սիրտ կհորդի ցավից,
100 մոռ կվառվի կսկզբից:

Եվ այսպես 100 ու 100 անգամ
Այս քար աշխարհի խղճին ենք թողնում
Մեր ծովածավալ վիշտը անամոք
Ու զնուն դեպի պայծառ ապագան:

Սուրբյա ՂԱԶԱՐՅԱՆ



ՇԻՇՈՒՄ ԵՄ ԵՎ ՊԱՇԱՆՁՈՒՄ

ՏԱՐՔԵՐ ՍԵՐՈՒՆՂՆԵՐ՝ ՄԵՎ ԱՍԵԼԻՔ...

Հայոց մեծ եղեռնի 100-րդ տարելիցի կապակցությամբ միջոցառումների շրջանակում...

Ներկա էին ԼՂՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Մարատ Մուսայեյանը, կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը, բարձրաստիճան այրեր, ոլորտի պատասխանատուներ: Իսկ հիմնական հանդիսատեսը միջին և ավագ տարիքի դպրոցականներն էին, ում էլ ուղղված էր երեկոյի ասելիքը: Միջոցառումը կազմակերպել էր ԼՂՀ ԿԳՆ նախարարոցական և արտադպրոցական բաժնի վարիչ Աննա Այվազյանը: Թե բեմի ձևավորումը, թե գրական-երաժշտական ընտրանին, թե մատուցման ձևը վկայում էին կազմակերպչի բարձր ճաշակի մասին: Բեմեզրին վառվող մոմերը, ետնաբեմի կենտրոնում «Հիշում եմ և պահանջում» արդար դատի նշանաբանի ներքո Ցեղասպանության 100-րդ տարելիցի խորհրդանշան անմոռուկը, Մեծ ու Փոքր Մասիսների և Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի պատկերներն արդեն իսկ դահլիճում ստեղծել էին ոգեղեն մթնոլորտ, որն ամբողջացրին մասնակիցների հուզաթաթախ երգն ու ասմունքը, պարային գեղեցիկ բեմադրություններն ու աղոթքը:

Ելույթ ունեցողների միջև տարիքային սահմանափակում չկար: Ծրագրում ընդգրկված էին մանկապարտեզի սաներից մինչև ավագ սերունդ, ինչը, կազմակերպչի խոսքով, խորհրդանշում էր հայ ժողովրդի հավաքական ամբողջությունը: Բոլոր սերունդների ասելիքն աշխարհին նույնն է՝ «Հիշում եմ և պահանջում»: Միջոցառումն սկսվեց տեսաերիզի ցուցադրությամբ, որտեղ փաստավավերագիր լուսանկարներն ու ցեղասպանության թեմայով ստեղծված ֆիլմերից հատվածները վերադարձրեցին անցած դարասկզբին հայության և ողջ մարդկային քաղաքակրթության դեմ իրագործված հրեշավոր ոճիրագործության անամոք ցավը: Իսկ Արևմտյան Հայաստանի քաղաքների ու գյուղերի, չքնաղ բնաշխարհի ու մշակութային հուշարձանների տեսարանները ներկաներին մտովի տեղափոխեցին մեր կորուսյալ դրախտավայրը, որի մշ-

տարթուն կարոտով են ապրում աշխարհով մեկ սփռված հայության բեկորներն ու նրանց սերունդները: Կարերն ուղեկցվում էին արցախցի երգահան Իրինա Փիրույանի՝ ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով գրած երգով, որում մատաղ սերունդը վստահեցնում է, թե ինչը Արաբոյի, Անդրանիկի քաջ հետնորդն է: Հնչում է աստվածային Կոմիտասի ձայնը. «Ամենայն հայոց երգի վեհափառը» սորոնջում է խաբեությանը սպանված Մուկաց Միրզայի մահը: Ապա Ասկերանի եկեղեցու հովիվ տեր Էմանուելի «Հայր մեր»-ին է միանում դահլիճը: Կոմիտասյան «Կռուկնի» հնչյունների ներքո միջոցառման անենափոքրիկ մասնակիցները՝ մանկապարտեզի սաները՝ հրեշտակաթև ճերմակ զգեստներ հագած, բեմից իջան դահլիճ և իրենց ձեռքով պատրաստած անմոռուկներ նվիրեցին ներկաներին:

Ասմունքողները ներկայացրին «Հավերժական հայը» գրական-գեղարվեստական կոմպոզիցիան, որն ընդմիջվում էր Մակար Եկմայանի Պատարագից «Մուրբ-սուրբ» շարականով ու «Ով հայոց աշխարհ» երգով, ինչպես նաև Կոմիտասի «Տեր, կեցո դու գձայս» անունան կատարումով: Ցավոք, դասական երգարվեստի այս գոհարները շատ հազվադեպ են հնչում մեր բեմերից, և հարկ է արժանվույնս գնահատել «Մշակած» պետական կամերային երգչախմբի գեղարվեստական ղեկավար և խմբավար Մարինե Մեսրոպյանի ճաշակն ու հավատարմությունը հայ երգին: Որպես Մեծ եղեռնի գրական հուշակոթող՝ ծրագրի մաս էին կազմել նաև Պարույր Սևակի «Անլուծելի գանգակատուն» պոեմից հատվածներ: Հատկանշական է, որ երեկոյին մասնակցած բոլոր աշակերտներն ասմունքի տարբեր մրցույթների մրցանակակիրներ էին, որոնց հաջողվել է հավատարմի մնալով բանաստեղծական խոսքին՝ դրան հավելել նաև իրենց հուզաշխարհի երանգներն ու ներքին էներգիան: Ողջունելի ուրույններ էր նաև այն, որ երեկոյի կազմակերպիչն ինքը՝ Աննա Այվազյանը, նույնպես ելույթ ունեցողների թվում էր: Նրա կատարմամբ «Քելե, լաո» երգը հնչեց որպես հրավեր-պատգամ՝ ուղղված մատաղ սերունդին՝ տեր կանգնելու այն հողին, որ սրբացել է մեր

պապերի աճյուններով. «Մըր հեր ընդեղ, մըր մեր ընդեղ կը ծաղկին, Անուշ կիլան, մընուռ ձեռով կը կանչին, Քելե, լաո, քելե երթանք մըր երգիր»...

Ի դեպ, ոչ միայն ասմունքողները, այլև դուրուկահար Արթուր Մկրտումյանը և երգիչ Պողոս Աբեյանը նույնպես մրցույթներում հաղթող ճանաչված մրցանակակիրներ են: Երևանաբնակ արցախցի երգչուհի Մաղենա Ասրյանի «Կանգ առեք, հայեր» երգի գեղեցիկ մեկնաբանությամբ հանդես եկավ Պ. Աբեյանը: Հեղինակը մեր իրականության ամենացավոտ հարցին է անդրադարձել՝ «Էլ ո՞նք համար է անկախությունը, որ հեռանում է հայությունը»: Երգի ասելիքն անչափ արդիական ու համահունչ է մեր օրերին՝ երկիրն անայացնող արտագաղթի՝ «Ճերմակ ջարդի» մասին է խոսքը, որը Պ. Սևակն առավել վտանգավոր էր համարում «կարմիր եղեռնից»: Օտար ափերում բարեկեցություն փնտրողներին, կարծում են, տեղին է հիշեցնել բանաստեղծի այս խոսքերը.

...Եվ արժի՞ ասել, որ ինչպես երեկ, այնպես էլ այսօր
օտարության մեջ ազատ լինելն էլ այլ
գերություն է,
իսկ տան մեջ նույնիսկ գերի լինելը՝ այլ
ազատություն:

Ստեփանակերտի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի սաները ներկայացան պարային գեղեցիկ բեմադրություններով՝ պարի լեզվով հանդիսատեսին փոխանցելով երեկոյի հայրենաշունչ ոգին:

Տարբեր սերունդներ՝ մեկ ասելիք, որ է հայրենապաշտություն և հայրենատիրություն: Երեկոն իրենց մասնակցությամբ իմաստավորեցին ավագ սերնդի ներկայացուցիչները. ԱրՊՀ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Սիրուն Բաղդասարյանը և՛ ասմունքում էր, և՛ երգում, մայրաքաղաքի հ. 1 հիմնական դպրոցի երգի դասատու Գայանե Հարությունյանի կատարմամբ հնչեց «Դե յամանը», հ. 2 հիմնական դպրոցի ուսուցչուհի Նանար Ավետիսյանն իր ասմունքով հուզեց շատերին: Երեկոյի ընթացքում հնչեցին Կոմիտասի երգերից՝ երգչուհի Լիլիթ Սաֆարյանի ինքնատիպ կատար-

մամբ և Ծովինար Մնացականյանի նվագակցությամբ: Հայր Էմանուելն իր հզոր ձայնով նույնպես միացավ ելույթ ունեցողներին. «Ձայն մը հնչեց» և «Ձարթիր, լաո» հայրենասիրական երգերն այդ երեկո նրա շուրթերին նոր իմաստ ու արժեք ստացան, քանզի երբ հոգևոր հայրն է ի զեն կոչում, այդ ազգին պարտություն չկա:

Իսկ երբ միջոցառման մասնակից անենափոքրիկ երաժիշտ Արսեն Սաֆարյանը հնչեցրեց 88-ին արցախցիներին միավորած շեփորականչը, սկսվեց ծրագրի՝ Արցախյան ազատամարտին նվիրված հատվածը՝ նույնպես ասմունքով, երգով ու պարով: Ուշագրավ մի մանրամասն ևս. երեկոյի կազմակերպիչ Աննա Այվազյանը մեզ տեղեկացրեց, որ գրեթե նույն այս ծրագրով 1988-ի ապրիլին, արհամարհելով ամեն վտանգ, Շարժման մի խումբ ակտիվիստներ առաջին անգամ Արցախում նշեցին Եղեռնի տարելիցը: Մասնակիցների թվում էին Աննա Այվազյանը, Սիրուն Բաղդասարյանը, բեմադրիչ Լեոնիդ Հարությունյանը, բժշկուհի Լյուդմիլա Գրիգորյանը, ում քաջ հայտնի է այս երեկոյի նախապատմությունը: Հենց նա էլ մեզ համար մի գաղտնիք բացահայտեց՝ ասելով. «Այն բանաստեղծությունները, որտեղ դուք չէիք կռահում հեղինակին, իմացեք՝ դրանց հեղինակը տ. Աննան է»: Արժուրեղով երեկոն՝ բժշկուհին հավելեց. «Թող սա լինի մեր ազգային արժեքների վերածննդի յուրօրինակ սկիզբ: Եթե մենք կարողանանք պահել այս նշանոցը, չի ուշանա հայ ոգու հաղթանակը և կլինի մեծ տոն»:

Կարին-երգուհուն է Աննա Այվազյանի նախնիների բնօրրանը, գաղթի տառապալից ճամփաները նրանց հասցրել են Ջավախք: Հարցիս՝ ի՞նչ ապրումներով է համակված ապրիլյան այս օրերին՝ որպես ցեղասպանությունից հրաշքով վերապրածների սերունդ, նա պատասխանեց. «Անցած օրը մի հետաքրքիր երագ տեսա՝ ես երգումնում երգում եմ «Երգում» երգը: Արթնացա և ասացի՝ սա պետք է կատարվի, որովհետև տատիս մըմուռը ես երբեք չեմ մոռանա»...

Ինձ մնում է միայն հավելել. «Թող Աստված երագդ կատարի»:

Մելանյա ՄԻՆՈՅԱՆ

ՎԵՐԱԾՆՎԱԾ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ՝ ԱՆԹԵՂՎԱԾ ՎԻՇՏ

Հայոց դարավոր պատմության ընթացքում 20-րդ դարավերջին մենք ազգովի հպարտացանք՝ ազատագրելով ու ծաղկեցնելով Արցախը, ազատագրելով ու շենացնելով Հակարի և Թարթուս գետերի հովիտները, թուրքերի կողմից բռնագրավված մեր հայրենիքի այլ տարածքներ: Հայոց մեծ եղեռնի հարյուրամյա տարելիցին ներկայանում ենք հավատով լի, և Քաջաթաղի ազատագրված ու կայացող շրջանի բոլոր համայնքներում ու դպրոցներում կայանում են մեր ամենամեծ վիշտը դատապարտող ու պահանջատիրական միջոցառումներ: Ապրիլի 24-ին բազմամարդ էր Բերձորի Վահան Թեքեյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցի դահլիճը: Սուրբ Համբարձման եկեղեցում շրջանի հոգևոր հովիվ Հայր Աթանաս վարդապետի կողմից մատուցած Սուրբ Պատարագին և Սրբադասման կարգի արարողությանը մասնակից քաջաթաղցիներն այստեղ ներկա եղան գրական-գեղարվեստական միջոցառման: Օրը դարձյալ մռայլ ու անձրևոտ էր, իսկ Բերձորի Վահան Թեքեյանի անվան հ.1 միջնակարգ դպրոցի դահլիճում ոգեկոչում էր Հայոց մեծ եղեռնի զոհերի հոգիներին: Շրջանի մի քանի դպրոցների աշակերտները մոտ մեկ ժամ կերպարավորել էին 100 տարի առաջ տեղի ունեցած Հայոց ցեղասպանության զոհերին, նրանց դահիճներին, վերստին ապրող հային: Շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի առաջատար մասնագետ

Արաքսյա Այվազյանի կազմակերպմամբ՝ Այգեհովիտի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Արփինե Թադևոսյանի գրած բեմագրով և Բերձորի մանկապարտեզի աշխատակից Էլիանար Հայրապետյանի մշակմամբ Բերձորի հ. 1 և հ. 2, Այգեհովիտի, Տիգրանավանի, Վարդուտի, Գողթանիկի համրակրթական դպրոցների



աշակերտները, Բերձորի մանկապարտեզի և արվեստի դպրոցի պարի խմբակի սաներն արհեստավարժ դերասաններ էին դարձել և ներկաներին հիացրին իրենց խաղով, որին զուգահեռ էկրանին մեծ արհավիրքի մասին պատմող կարդեր էին ցուցադրվում: Վարդուտի, Այգեհովիտի, Տիգրանավանի, Գողթանիկի և Բերձորի հ.1 դպրոցների աշակերտներ Տիգրանուհին, Ռուզաննան, Լուսինեն, Գայանեն և Արենը հանդես եկան ասմունքով՝ նկա-

րագրելով հային ու նրա դարավոր թշնամի թուրքի քաղաքականությունը: Որոշ հատվածներում հնչեցին Շիրազի, Սևակի և Ս. Կապուտիկյանի բանաստեղծություններից, իսկ մնացածը բեմագրի հեղինակին էին: Ներկայացրին հատված, թե ինչպես են երիտթուրքերը ծրագրել հայության ոչնչացումը, նշելով, որ հայերի ոչնչացումը, այդ թվում և երեխաների ու կանանց, բխում էր Թուրքիայի շահերից: Հանդես եկավ նաև Գրիգոր Ջոհրապը (Բագրատ Եսայան), ով Թալեաթ փաշայից (Արեն Հովհաննիսյան) պատասխան էր պահանջում: Թուրքերն իրենց երթույթով խաբեցին Ջոհրապին՝ ցավ հայտնելով, որ իրենց ազգի մեջ չկա նրա նման մեկը: Հանդես եկան նաև Ռուբեն Սևակն (Արցախ Պողոսյան) ու Դանիել Վարուժանը (Դավիթ Մամիկոնյան): Եղեռնին զոհ գնացած մեր մեծ բանաստեղծները գիտակցում էին իրենց վախճանը, բայց ունեին երագանք, որ վաղն իրենց հիշողներ լինեն, այսինքն՝ հայ ժողովրդի ճանապարհը շարունակվի: Սևագետ աղջիկները մարմնավորեցին Մեծ եղեռնին զոհ գնացած բյուրավոր հայուհիներին և իրենցով կառուցեցին Մեծ եղեռնի հուշահամալիրի մանրակերտը: Կայացավ լուսնային րոպե: Այնուհետև արդեն վառ գույներով հանդես եկան Բերձորի արվեստի դպրոցի պարի խմբակի սաները՝ «Ձայն մը հնչեց» երգի հնչյունների ներքո կատարելով ռազմա-

կան պար, խորհրդանշելով հայոց ֆիդայիներին ու Սարդարապատի հերոսներին:

Նկարագրվեց նաև հայոց վրեժը: Յաթադանին զոհ գնացածների հոգիները կանչեցին Հայոց վրեժի աստվածին, և իրականացավ «Նեմեսիս»-ը: Սողոմոն Թեղեկյանը, Արշավիր Շիրակյանը, այլ վրիժառուներ գնդակահարեցին Մեծ եղեռնի կազմակերպիչներին՝ երիտթուրքերի պարագլուխներ Թալեաթին, Էմվերին, մյուս ճիվղաներին: Եկավ նաև օրը վերածննդի. սպիտակազգեստ մեր փոքրիկները, մարմնավորելով նոր կյանք ու ծլարձակում, փյունիկ թռչուն, բեմ էլան ու իրենց ծնողներին, բոլորիս վստահեցրին, որ դատապարտում են, պահանջատեր են, որ հիշելու են, Հայաստան աշխարհի գալիքն են, պահանջատեր Հայոց Դատի և մի օր տեր են դառնալու կորուսյալ մեր հայրենիքին:

Միջոցառմանը ներկա էին շրջվարչակազմի ղեկավար Սուրեն Խաչատրյանը, այլ պաշտոնյաներ, տարբեր դպրոցների ուսուցիչներ, աշակերտներ: Հյուրերի թվում էին Շուշիի թատրոնի տնօրեն Լեոնիդ Հարությունյանը, ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության ներկայացուցիչներ, ովքեր բարձր գնահատեցին ներկայացումը: Կազմակերպիչ Արաքսյա Այվազյանը նշեց, որ միջոցառումը կայացավ համատեղ ուժերով և կարևորեց մասնակից դպրոցների, Բերձորի պետական մանկապարտեզի սաների և ուսուցիչների դերը:

Զոհրաբ ԸՈՔՈՅԱՆ

ՀԻՇՈՒՄ ԵՄ ԵՎ ՊԱՆԱՆՁՈՒՄ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Հայոց ցեղասպանությունը վերաբերում է 1915-1923 թվականներին հայտնի և հետազոտված ժողովուրդի և հայտնի և հետազոտված ժողովուրդի և հայտնի և հետազոտված ժողովուրդի...

պոնիան, Ռուսաստանը, եվրոպական երկրները: «Մետրիս»-ի սարքավորումները օգտագործում են մինչև 10-նիկական հետազոտություններում՝ դեղերի պատրաստման համար, հոգեբանության և մոլեկուլյար բիոլոգիայի բնագավառներում:

հայտնի չէր): Եզրակացությունը հաստատվել է լաբորատոր փորձերով: Հետևաբար, ընդհանրացրեց բանախոսը, Հայոց ցեղասպանությունը մեր ազգի վրա գեներալական ազդեցություն է թողել: 2013 թվականին նա երևանում կազմակերպեց միջազգային կոնֆերանս՝ ցեղասպանության գեներալական հետազոտությունների վերաբերյալ: Այն աշխարհում մանատիպ առաջին միջոցառումն էր:

տարեկան, իրենց աչքի առջև ծնողներին սպանելու պատմությանը: Ֆրանսիայում գործեր ուսումնասիրելիս պատահաբար պարզել է, որ նույնը պատմել է թուրք գինվորը /Մրան հոգեբուժարան էին տարել/: Նա պատմել է նույն օրը, նույն պահին կատարված այդ սպանության մասին: «Տարբեր երկրներում տարբեր անձանց, տարբեր ազգերի ներկայացուցիչներ կողմից տրվել է նույն ցուցմունքը ժամանակի տարբեր պահերի», - փաստերը համադրելով նշեց Լ. Բաղդասարյանը՝ դրանք համարելով ցեղասպանության մասին վկայող անժխտելի ապացույցներ:

հայկական եկեղեցու՝ Մեծ եղեռնի հերթական տարեկիցի կապակցությամբ կազմակերպած հավաքին ակտիվորեն մասնակցում էին նաև թուրք գիտնականներ: Եվ ահա թե ինչ հարցեր էին բարձրացնում նրանք՝ ինչն է լրատվամիջոցները Հայոց ցեղասպանությանը չեն անդրադառնում, ինչն է եվրոպան լուրն է...

Լ. Բաղդասարյանը ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր է: Ավարտել է Երևանի պետական լինգվալիստիկական համալսարանի ռադիոֆիզիկայի ֆակուլտետը: Այնուհետև սովորել է Մոսկվայի բուհերից մեկում՝ բժշկական կիբեռնետիկայի գծով, ուսումը շարունակել՝ Սանկտ-Պետերբուրգի համալսարանում: Երկու տարի ասպիրանտուրայում ուսանելուց հետո տեղափոխվել է Նիդերլանդներ: Այստեղ ավարտել է ասպիրանտուրան: Գիտական ուղղությունը բժշկական սարքավորումների նախագծումն է: Տեխնիկական մեծագույնը է աշխատում «Մետրիս» ձեռնարկությունում, որն արտադրում է բուժասարքավորումներ, բայց ավելի շատ զբաղվում է գիտահետազոտական աշխատանքներով: Քսան տարի առաջ ստեղծված այս ձեռնարկության թողարկած սարքավորումները արտահանվում են 38 երկրներ, որոնց թվում Հայաստանը չկա: Հիմնական շուկաներն են Ամերիկային Միացյալ Նահանգները, Գերմանիան, Ռուսաստանը, Եվրոպայի երկրները:

2005 թվականին «Մետրիս»-ը համառոտ նախագիծ էր իրականացնում ԱՄՆ Յուտայի համալսարանի հետ: Հայտնի մոլեկուլյար գեներալ Մարիո Կասպեչչին, օգտագործելով «Մետրիս»-ի սարքերը, հետազոտություններ կատարում էր նաև հետազոտված ստիկ սթրեսի գեներալական ազդեցության վերաբերյալ: Մկների վրա փորձերով նա ապացուցեց, որ մի շարք հիվանդությունների թվում քրոնիկական հետազոտված սթրեսը և գեներալական փոփոխություններն էր հանգեցնում, որ փոխանցվում են մի քանի սերունդ (2007 թվականին ազգությանը իտալացի այս հետազոտողը գեների ուղղորդված վերափոխման աշխատանքների համար ֆիզիոլոգիայի և բժշկության բնագավառում արժանացել է Նոբելյան մրցանակի): Ենթադրելով, որ ամենայն հավանականությամբ Հայոց ցեղասպանությունը ևս առաջացրել է քրոնիկական հետազոտված սթրեսային երևույթներ, Լ. Բաղդասարյանն սկսեց արխիվներում փնտրել և ուսումնասիրել հայ փախստականների բժշկական պատմությունները: Հետազոտությունները տևել են 8 տարի: Ուսումնասիրել է ցեղասպանությունը վերաբերողների շուրջ 1800 և երկրորդ համաշխարհային պատերազմի վերաբերմամբ 4200 բժշկական պատմություններ: Ստեղծված բժշկական կոմիտեն հավաքված փաստերի հիման վրա պարզեց, որ հայերի՝ բժիշկներին հայտնած փաստանշանները և կլինիկախախտաբանական չափորոշիչները համընկնում են և բնորոշ են հետազոտված սթրեսի փաստանշաններին և չափորոշիչներին (այն տարիներին այս հիվանդությունը

Հետազոտված սթրեսային խանգարում են ստացել ոչ միայն ցեղասպանությունից տուժածները, այլև ցեղասպանությունն անմիջականորեն իրագործած թուրք զինվորները: Լ. Բաղդասարյանը հավաքած փաստերով համոզել է թուրք բժիշկներին իր ասածի մեջ և հորդորել արխիվներում ուսումնասիրել թուրք զինվորների բժշկական պատմությունները: Արխիվները, սակայն, չեն բացվել նաև սեփական երկրի քաղաքացիների համար:

Տեք հետազոտությունները գնահատելու լինենք ամբողջության մեջ, ապա դրանք ցույց տվին, որ ցեղասպանությունը թողել է գեներալական ազդեցություն թե՛ տուժածների, թե՛ կատարածների վրա: Դա նշանակում է, որ նրանց հաջորդ սերնդի մոտ հետազոտված սթրեսի ենթարկվելու հավանականությունը 40 տոկոսով բարձր է, իսկ էֆեկտները, հայտնի է, մինչև մեկ հինգերորդ գենը փոխանցվում են: Հետազոտություններն ապացույց են այն բանի, որ մեր ազգը հզոր գեներալական ունի, քանզի արհավիրքի պատճառած սթրեսներից հետո կարողացել է վերածնվել ու զարգանալ:

Ուղղություններ կան, որոնց գծով ընդհանրապես ոչինչ չի արված կամ շատ քիչ բան է արված: Լ. Բաղդասարյանը ցավով արձանագրեց, որ Հայոց ցեղասպանության վերաբերյալ լուրջ, գիտականորեն հիմնավորված հետազոտությունները մի քանի տասնյակ են ընդամենը, մինչդեռ, օրինակ, Ռուսաստանում տեղի ունեցած ցեղասպանության մասին հազարավոր աշխատանքներ կան: Գիտնականը կարծում է, որ էսկանդինավյան պատմաբանները համար ցեղասպանության վերաբերյալ աշխատանքները պետք է որևէ կետորհի կողմից համակարգվեն, ներգրավվեն արտասահմանյան մասնագետներ, տարբեր ուղղություններով համաժամանակյա ու համատեղ աշխատանքներ կատարվեն, ինչը հնարավորություն կտա փաստերի համադրմամբ իրավական կռիվներ, իրավաբանորեն ապացուցելի հիմքեր ձեռք բերելու:

Ծովինար ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՑԱԿԱՆ ՄԵՐ ՀԻՇՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ժամանակը թեև իրեն յուրահատուկ շտապողականության մեջ կարողանում է բուժել մարդկային հոգեբանությունն անհանգստացնող ցավն ու դարձը, այնուամենայնիվ, թողնում է սպի, որը հիշեցնում է նրան իր անցյալը, կենդանի պահելով հիշողությունը:

խորհրդանշող ապրիլի 24-ին՝ ավելի ծանրացնելով մեղքերի իր բեռը, սակայն մենք այրված չենք համարում բոլոր կամուրջները, քանի թուրքիայի մեջ թերահավատությանը լցված երիտասարդության շարքերն օրեցօր սովորանում են, քանի թուրք ժողովուրդը պահանջում է կառավարությունից ճշմարտության բացահայտում և արդարություն, քանի թուրքիայի ժխտողական քաղաքականությունը քննադատող պետությունների թիվը շարունակվում է ավելանալ:

նուրդումը կործանում է բոլորի համար: Համախմբվեցե՛ք ազգի բարօրության համար, հեռու լինե՛ք սադրանքներից. նորից պառակտման ու առճակատման առաջ չկանգնելու համար, լիցքավորվե՛ք հայրենասիրությամբ ամեն պահ ու վայրկյան, քանզի ինչպես Նժդեհը կասեր. «Հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ, մեռնում նրա պակասից»:

Մտովի թերթելով մեր պատմության արձանագրության մատյանը, առանց վարանման կարող ենք ասել. «Մենք զինվոր ենք ազգովի»: Մենք զինվոր ենք, քանի շարունակական է արդարության համար մեր պայքարը: Արդարություն են պահանջում մեկուկես միլիոն ու մեկ հայերը, սպիտակ եղեռնի գոհերը, բռնությամբ մահեղակա-նացված թաքուն հայերը, հայ ժողովրդի ոտնահարված իրավունքները...

ԱՐՑԱԿԱՆ ՄԵՐ ՊԱՅՔԱՆՁԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՂԹԱԿԱՆ

Մեր պատմության մեջ Ցեղասպանությունը ամեն հայի սրտում ոչ թե սպի, այլ բաց վերք է ազգայնասիրաման, հայ սերունդների կենսագործունեության, բնավորության, ազգային նկարագրի և նպատակների ձևավորման վրա: Մեր հիշողությունը վաղեմության ժամկետ չի ճանաչում, մեր հիշողության մասն վաղեմության ժամկետ չի ճանաչում և ցեղասպանությունը: Նրա պատճառած ցավից մենք երբեք չենք տրտնջացել, այլ հային բնատուր հպարտությամբ «մեր պատմական բախտի բեռը շալակած» (Մժեհ) անցել և ոչ թե շրջանցել ենք Հայ Դատի լուծման ճանապարհին մեզ բաժին հասած արհավիրքները՝ ամեն տարի ավելացնելով մեր սպասելիքներին հույս, հավատ, գիտակցելով, որ մի օր ազգին մակընթացությունը տեղատվություն կապրի:

Հայ ժողովուրդն ազատասեր և արդարամիտ ժողովուրդ է: Մենք մեր պատմության մեջ չունենք արձանագրած ոչ մի դեպք, ոչ էլ դեմք, որը կխորհրդանշի բռնություն, կողոպուտ, թալան, թշնամանքի սերմանում: Մենք միշտ էլ կողմ ենք համերաշխության և խաղաղության: Այսօր էլ մենք խաղաղության մեջ ենք թուրք ժողովրդի հետ, ուղղակի պետք է միջոցներ փնտրենք նրա հետ համագործակցելու համար: Մեր պայքարը, անկախ թուրքիայի կառավարության կողմնորոշումից, տարբեր պետությունների մոտեցումից, շարունակական է: Այն չի ավարտվի, քանի մեր ականջներում հնչում է թաքուն հայերի օգնության կանչող ձայնը. «Մեզ մի՛ մոռացե՛ք»: Այս պայքարում մենք կհաղթենք միասնության դրոշի ներքո, կհաղթենք ազգային բանակի նկատմամբ վստահ լինելու դեպքում: «Իր կյանքը այս հողի վրա պատկերացնող ամեն մի հայ, անկախ քաղաքական հայացքներից և կողմնորոշումներից, պիտի ապրի երկրպագի, երկիրը պահողի գաղափարախոսությամբ, լինի նա զինվորական, հողագործ, թե մախազահ» (գեներալ Մ. Գրիգորյան)»

Մտովի թերթելով մեր պատմության արձանագրության մատյանը, առանց վարանման կարող ենք ասել. «Մենք զինվոր ենք ազգովի»: Մենք զինվոր ենք, քանի շարունակական է արդարության համար մեր պայքարը: Արդարություն են պահանջում մեկուկես միլիոն ու մեկ հայերը, սպիտակ եղեռնի գոհերը, բռնությամբ մահեղակա-նացված թաքուն հայերը, հայ ժողովրդի ոտնահարված իրավունքները...

Մենք երախտապարտ ենք բոլոր այն պետություններին, հասարակական կազմակերպություններին ու անհատներին, ովքեր ճանաչել են Հայոց ցեղասպանությունը: Համոզված ենք, որ նրանց կողքին կկանգնեն նորերը, և արդարությունը կընդունվի միջազգային մակարդակով: Հավատում ենք, որ մենք մեզ թույլ կտանք քայլելու Արաբոյի, Սերոբի, Անդրանիկի, Չաուշի... ոտնահետքերով, կկանգնեցնենք Առաքելոց վանքը, և ինչպես Անդրանիկն էր երազում, հայ մանուկներին կսովորեցնենք մեր այք-ն ու բեռ-ը: Ես հավատում եմ վրեժով լցված, դուք էլ լցվե՛ք մախ՝ վրեժով, ապա հավատով, որ «օր մի օրը» կգա, քանի դեռ պահանջատեր ենք, քանի դեռ ապրում ենք հիշելու և պայքարելու համար:

Սինչև հիմա Վերժինե Սվազյանի լույս տեսած գրքերը պատվանդան են, իսկ այս կորոնային գիրքը կլինի հուշարձանը, որը տեսանելի կլինի ամբողջ աշխարհին»:

Ցեղասպանության հարյուրամյակը մեր պայքարի կոլմինացիան չէ, պարզապես հերթական անգամ միջոց է մեր վիշտը սզալու համար, յուրատիպ օրինակ՝ համասփյուռ հայերի համախմբման, ցեղասպանությունների կանխարգելման բարձրագույն մի կոչ՝ ողջ աշխարհում այն որակելով որպես մեծագույն չարիք:

Մտովի թերթելով մեր պատմության արձանագրության մատյանը, առանց վարանման կարող ենք ասել. «Մենք զինվոր ենք ազգովի»: Մենք զինվոր ենք, քանի շարունակական է արդարության համար մեր պայքարը: Արդարություն են պահանջում մեկուկես միլիոն ու մեկ հայերը, սպիտակ եղեռնի գոհերը, բռնությամբ մահեղակա-նացված թաքուն հայերը, հայ ժողովրդի ոտնահարված իրավունքները...

Մենք երախտապարտ ենք բոլոր այն պետություններին, հասարակական կազմակերպություններին ու անհատներին, ովքեր ճանաչել են Հայոց ցեղասպանությունը: Համոզված ենք, որ նրանց կողքին կկանգնեն նորերը, և արդարությունը կընդունվի միջազգային մակարդակով: Հավատում ենք, որ մենք մեզ թույլ կտանք քայլելու Արաբոյի, Սերոբի, Անդրանիկի, Չաուշի... ոտնահետքերով, կկանգնեցնենք Առաքելոց վանքը, և ինչպես Անդրանիկն էր երազում, հայ մանուկներին կսովորեցնենք մեր այք-ն ու բեռ-ը: Ես հավատում եմ վրեժով լցված, դուք էլ լցվե՛ք մախ՝ վրեժով, ապա հավատով, որ «օր մի օրը» կգա, քանի դեռ պահանջատեր ենք, քանի դեռ ապրում ենք հիշելու և պայքարելու համար:

Սինչև հիմա Վերժինե Սվազյանի լույս տեսած գրքերը պատվանդան են, իսկ այս կորոնային գիրքը կլինի հուշարձանը, որը տեսանելի կլինի ամբողջ աշխարհին»:

Սինչև հիմա Վերժինե Սվազյանի լույս տեսած գրքերը պատվանդան են, իսկ այս կորոնային գիրքը կլինի հուշարձանը, որը տեսանելի կլինի ամբողջ աշխարհին»:

Գայանե ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Մարտունու շրջանի Ճարտարի հ. 5 միջն. դպրոցի պարմության ուսուցչուհի

Հարցազրույցը՝ Մելանյա ՄԻՆՈՒՅԱՆԻ

ՀԻՇՈՒՄ ԵՄ ԵՎ ՊԱՇՏԱՆՋՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԿԻՆ.

ՄԱՅՐԵՆԻ (6-ՐԴ)

(Ըստ Վարդգես Պետրոսյանի)

(Պիես՝ մեկ գործողությամբ, նոր տարբերակ)

Գործող անձինք՝ դասախոս՝ Հայկարամ Մարյան, ուսանողներ

Դասախոս - Սիրելի՛ ուսանողներ, աշխարհում եղավ 1915 թվական, երբ թուրք ոճրագործը եղեռնագարկ արեց իմ ժողովրդին:

Ուսանող 1 (զարմանքով) - Իսկ ի՞նչ կապ ունի դա արտասահմանյան գրականության պատմության հետ, պարոն Մարյան:

Դասախոս - Շատ մեծ կապ ունի: Բոլորը պիտի իմանաք պատերազմների և աղետների մասին, պիտի իմանաք նաև, որ պատերազմները կուլ են տալիս գրականությունն ու արվեստը, այն ամենը, ինչ վեհ է ու գեղեցիկ: Պատերազմները սև բիծ են մեր պատմության մեջ:

Ուսանող 2 - Պարոն Մարյան, իսկ ինչո՞ւ միայն Հայոց եղեռնի մասին: Մի՞թե այլ ոճրագործություններ չեն եղել աշխարհում:

Դասախոս - Այո՛, եղել են, երիտասարդ, բայց ես խոսում եմ իմ ժողովրդի գլխին եկածի մասին, ես պատմում եմ, որովհետև ինքս եմ ականատես եղել այդ մեծ սպանդին:

Ուսանող 3 - Կներեք, պարոն Մարյան, որ ցավ պատճառեցինք Ձեզ, մենք այդ մասին չգիտեինք:

Ուսանող 4 - Մենք գիտենք հայ ժողովրդի ստեղծագործ ուժի և ոգու փորձության մասին: Չարմանալի ժողովուրդ են հայերը:

Դասախոս (հուզված) - Ես շնորհակալ եմ ձեզանից, երիտասարդներ, որ այդպես եք զննահատում իմ ժողովրդին, բայց այն ծանր եղեռնի տարիներին ոչ ոք ձեռք չմեկնեց իմ

ժողովրդին: Նույնիսկ քրիստոնյա երկրները նայում էին անտարբեր ու անհաղորդ:

Ուսանող 5 - Պարոն Մարյան, իսկ ինչպե՞ս հաջողվեց Ձեզ կենդանի մնալ, չէ՞ որ թուրքերը չէին խղճում ամզամ մանուկներին:

Ուսանող 6 - Շատ հետաքրքիր է: Պատմեցե՛ք, խնդրեմ, պարոն Մարյան, եթե դա կրկնակի ցավ չէ Ձեզ համար:

Դասախոս - Ոչինչ, ընկերներ, ցավից է ծնվում ճշմարտությունը, իսկ ճշմարտությունից կերտվում է պատմությունը: Եթե մենք ցավի վերմակի տակ թաքցնենք մեր հոգու ճիչն ու տառապանքը, ապա պատմությունը կստեղծվի կեղծ ցուցմունքների վրա:

Ուսանող 7 - Պարոն Մարյան, մենք անհամբեր սպասում ենք Ձեր պատմությանը: Պատմեք, խնդրեմ, ի՞նչ եղավ փոքրիկ Հայկարամի հետ:

Դասախոս - Հայկարամի հետ եղավ այն, ինչ հարյուր-հազարավոր հայ մանուկների հետ: Հայրս ինձ համար կողով էր սարքել և իմ բարուրը տեղավորել այնտեղ: Մեր ճանապարհները հատվեցին: Հորս բաժանեցին մեզանից, իսկ մայրս մնացած կանանց նման, իմ կողով-բարուրը պինդ բռնած, իրեն նետեց Արաքսի ալիքների մեջ: *(Դասախոսը լռեց և հուզմունքից չէր կարողանում խոսել):*

Ուսանող 8 - Պարոն Մարյան, եթե

Ձեզ համար դժվար է վերհիշել անցածը, մի՛ պատմեք: Մենք գիտենք թուրք բարբարոսների ոճրագործության մասին:

Դասախոս - Սիրելիներս, ես իմ մեջքի վրա եմ այն զգացել: Արաքսը կուլ էր տալիս ճիչ, վայնասուն և ամեն ինչ խաղաղեցնելով՝ ափ էր նետում

նետեց ափ: **Ուսանող 9** - Իրոք, իրաջք ժողովուրդ եք, ես չեմ զարմանում, թե ինչու է Աստված Նոյան տապանը վստահել ձեր անառիկ սարին՝ Մասիսին: Խնդրում եմ շարունակեք:

Դասախոս - Երբ ես բացեցի աչքերս, ինձ իրականություն վերադարձրեց մեկամղձոտ մի ծայր: Չարածճի աչքերով շուրջս փնտրեցի. մայրս էր, երգ էր մրմնջում: Ոչ, դա իմ օրորոցայինը չէր: Նա այնուբեմի տառերն էր հեզում՝ այբ, բեն, գիմ, դա... այնուհետև կողքի շրջվեց, ձեռքի թեթև շարժումով ավագի վրա բացեց գրեց: Տարիներ հետո էի հասկանում, որ դա ինձ համար էր անում: *(Աչքերը սրբեց):*

Ուսանող 10 - Հանգստացե՛ք, պարոն Հայկարամ: Ցավալի է տեսնել, թե ինչպես են հիշողությունները քրքրում Ձեր հոգին:

Ուսանող 11 - Ի՞նչ դաժան բախտ է վիճակվել հայ ժողովրդին, Ձեզ:

Դասախոս - Ոչինչ, ես ուժ կգտնեմ շարունակելու իմ պատմությունը: Աստված ամենակարող է: Կենդանի մնացինք ես և մայրիկս, իսկ հայրս սպանել էր թուրք ուղեկցին և զնացել Բեյրութ: Նա հայկական ապաստարաններից գտավ մեզ, և վերջապես մեր բզկաված ընտանիքը հավաքվեց օտար երկրում, օտար հարկի տակ: Ամեն օր մեր ընտանեկան գրույցը Հայաստանի ու հայերի մասին էր: Մի առավոտ հայրս վեր կացավ և կտրուկ

որոշեց՝ պիտի գնամ Հայաստան: Հայկարամ, ի՞նչ բերեմ քեզ Հայաստանն: «Հայաստանի բանալին բեր»,- ասացի ես:

Ուսանող 2 - Պարոն Հայկարամ, ո՞րն է Հայաստանի բանալին:

Դասախոս - Համբերություն ունեցիր, երիտասարդ, լսիր մինչև վերջ: Հայրս երբ վերադարձավ, ես հարցրի՝ բերեցի՞ր: «Բերեցի»,- պատասխանեց նա ու ինձ մեկնեց մեր ընտանեկան լուսանկարը, ուր ես էի, հայրս, մայրս: Մյուս կողմը նայեցի, բայց բան չհասկացա, պստիկ էի: Հայրս նկարն առավ ձեռքիցս և հանդիսավոր կեցվածքով ասաց. «Սիրելի՛ Հայկարամ, Հայաստանի բանալին հայոց լեզուն է: Սովորիր, և Հայաստանի բոլոր դռները կբացվեն քո առաջ»: Հայրս կուլ տվեց արցունքները և հատ-հատ տառերով կարդաց գրողի անունը՝ Ավետիք Իսահակյան:

Ուսանող 3 - Պարոն Հայկարամ, ի՞նչ եք որոշել անել: Մենք հասկացանք, որ հայրենասիրությունը Ձեր էության մեջ է:

Դասախոս - Տարիներ են անցել այդ օրից: Ես էլ ունեմ իմ ընտանիքը, երեխաներս ու թոռներս: Նրանց էլ եմ սովորեցրել հայերենը: Բայց հասկացե՛ք, սիրելի՛ ուսանողներ, հայերենը դեռևս հայրենիք չէ, հաստատ որոշել եմ՝ պիտի վերադառնամ Հայաստան:

Ուսանող 4 - Ինչքա՞ն ոգևորեցիք մեզ, պարոն Հայկարամ: Մենք հպարտանում ենք բիբլիական Ձեր երկրով, Աստվա՛ծ պահապան Ձեզ:

ՆԵՂԻ ՍԱՆՎԳՅԱՆ
ԽՆԱԾԱԽԻ ՄԻՋԵ. ՊԱՅՐՈՑԻ
Ի. ԼԵՂՎԻ ԵՎ ՊՐԱԿ. ՈՍՏՈՎՅԱՆԻ

ՄԵՐ ՎԵՐՔԸ ԴԵՐ ԲԱՑ Է...

Ապրիլի 22-ին թախծի, վրեժի, պահանջի, ըմբոստության ու ոգեկոչման տրամադրություն էր տիրում Մարտունու արվեստի դպրոցում:

Հնչեցին եղեռնի ու հայրենասիրական երգեր, մեր մեծ կոմպոզիտորների ստեղծագործություններից տարբեր երաժշտական կատարումներ դպրոցի սաների կողմից: Նրանք հանդիսատեսի հետ միաձուլվել և դարձել էին մեկ Հայ, ով ուժեղ է, հզոր, անդրդվելի, անկոտորում և պահանջատեր, ում մեջ աղաղակում է միլիոնուկես հայերի վրեժխնդրության ձայնը, ով պահանջում է, և ում պահանջը արդար է:

Մարտունու Մ. Մելքոնյանի անվան հ.2 մանկապարտեզի դաստիարակների պարը «Ծաղկած բալենի» երգի երաժշտության ներքո համակեց ներկաներին և համոզեց, որ ցավն ու արհավիրքները չեն կարող ծնկի բերել այն ժողովրդին, ով ապրել ու արարել է ուզում: Պարեց հայը...

Միջոցառման ավարտին ներկաների հոգիներում կատարվող ալեկոծությունն ասես տեղի էր տվել մի վեհ հանգստության:

Աշակերտների և հանդիսականների դեմքերին դրոշմվել էին թախծին միաձուլված բողբոջկոչը և մի համոզմունք՝ ունենալու ենք ծովից ծով Հայաստան:

Միջոցառմանը ներկա էին Արցախի թեմի փոխառաջնորդ, Մարտունու Սուրբ Ներսես Մեծ եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Սահակ վարդապետ Շաբարյանը, շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ Սլ. Սեյրանյանը, քաղաքապետ Մ. Խաչատրյանը:

Հայության ճակատին դաջված սև, խոշոր

սպին 100 տարի հետո էլ կմնա բոլորի հիշողության մեջ: Սա ազգի դաստիարակության հիմ-



քում է, որ տարածվում է կրթօջախից ընտանիք:

Ապրիլի 22-ին Մարտունու Մ. Մաշտոցի անվան հ. 2 հիմնական դպրոցը Մարտունու մշակույթի և երիտասարդության պալատում կազմակերպել էր միջոցառում՝ «Մեր վերքը դեռ բաց է...» խորագրով:

Երեկոն սկսվեց Տերունական աղոթքով: Խոսելով 20-րդ դարի մեծագույն հանցագործության՝ Հայոց ցեղասպանության մասին, Մարտունու Մ.

Մաշտոցի անվան հ. 2 դպրոցի աշակերտները փուլ առ փուլ ներկայացրին երիտթուրքերի հա-

յաթափման ծրագիրն ու մարդկային պատկերացումից դուրս թուրքական իշխանությունների

գազանությունները: Մի՞թե 2 միլիոն անմեղ մարդկանց սպանող, կանանց, երեխաների, ծեղերի անմարդկային կտանքներով տեղահանումը, հարյուրավոր քաղաքների ու գյուղերի ավերումը և նախօրոք որոշված թուրքի դժոխային գործողությունները կմնան անպատիժ: Ինչքան էլ նրանք փորձեն թաքցնել հայերի զանգվածային սպանություններն ու խոշտանգումները, միևնույն է, մման չարագործության ճիչը երկինք է հասել...

Միջոցառումը հագեցած էր, առանձնանում էր պահանջատիրության կոչով ու հպարտության զգացումով:



Այն ուժով ու պայքարի ոգով համակեց ներկաներին:

Արմինե ՊԱՆԻՆՅԱՆ

ՇԻՇՈՒՄ ԵՄ ԵՎ ՊԱՆԱՆՋՈՒՄ

ԱՆԱԿԵՐՏԱԿԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ Ստեփանակերտի Վ. Ջիանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոցը կազմակերպել էր աշակերտական գիտագործնական համաժողով, որին ներկա էին ԼՂՀ արդարադատության նախարար Ա. Դանիելյանը, ԱրՊՀ ռեկտոր Մ. Մինասյանը, Մեսրոպ Մաշտոց համալսարանի ռեկտոր Դոնարա Գաբրիելյանը, պրոռեկտորներ, ՊԲ ԱՅԴ և ՀԿԿ քաժնի պետ, գնդապետ Բարեղամ Մուրադյանը, ԿԳՆ աշխատակազմի ղեկավար Է. Գրիգորյանը, ԿԳ քաժնի վարիչ Ռ. Մուսայելյանը, քաղաքապետարանի ԿՍ քաժնի վարիչ Կ. Մարգարյանը, հյուրեր: Համաժողովը ներածական խոսքով բացեց դպրոցի տնօրեն Արդա Գրիգորյանը: «Անկախ այն բանից, թե ուրիշներն ինչ բնորոշում կտան 100 տարի առաջ հայ ժողովրդի հետ կատարված ողբերգությանը, այդ իրողությունն ունի մի պարզ ձևակերպում՝ մեզանից խել է մեր հայրենիքը: 2015 թվականը չպետք է դառնա ողբի ու սգի տարի: Մեր սրտերում պահելով մեկուկես միլիոն անմեղ զոհերի հիշատակը՝ մենք պարտավոր ենք անել ամեն ինչ, որ դատապարտվի Ցեղասպանությունը, բացահայտվի ճշմարտությունը, չնռաջվի, այն պահանջ է, որը պետք է ներկայացվի համայն աշխարհին»,-



ասաց նա: Գիտագործնական աշխատանքները համակարգող՝ դպրոցի պատմության մեթոդավարներն նախագահ Լորեսա Աբրահամյանի համոզմամբ՝ ապրիլը միայն ցավի ու վշտի ամիս չէ, այն նաև մեր ազգի ուժի և ապրելու կամքի արտահայտությունն է, կյանքի հաղթանակը մահվան հանդեպ: Աշակերտների զեկուցումներին հաջորդում էին ելույթները, հարց ու պատասխանները: Ներկաները բարձր գնահատեցին աշակերտների կողմից սկզբնաղբյուրները և պատմական գրականության տվյալները վերլուծելու հմտությունը, ամհրաժեշտ տեղեկությունների մշակումն ու ձևակերպումը, հետազոտական աշխատանքի փորձը, սեփական դիրքորոշումը հիմնավորելու և ունկնդրին համոզիչ ներկայացնելու ունակությունը՝ գնահատելով նաև նրանց ղեկավարների ներդրումը այդ գործում: «Լուսարարը» նպատակահարմար է գտել տպագրել աշակերտների առաջին հետազոտական աշխատանքները: Կարծում ենք՝ դրանք օգտակար նյութ են բարձր դասարանցիների, ինչու չէ՝ նաև դասավանդողների համար թեմայի ուսումնասիրման ժամանակ:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ



Վերջին տարիներին Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը զուգահեռ ակտիվացել է նաև դրան համապատասխան միջազգային իրավական որակավորում տալու վերաբերյալ համապատասխան

հայեցակարգի մշակման գործընթացը, և, եթե մինչև 20-րդ դարի 90-ական թթ. գիտնականների մեծամասնությունը իրենց աշխատություններում հիմնականում ուշադրությունը բեռնում էր փաստերի հանգամանակից վերհանման վրա, ապա ներկայումս հետազոտությունների մեջ դրան զուգահեռ շեշտադրվում է վերհանված փաստերի հիմնավորված պատմական, պատմաքաղաքական և իրավական վերլուծության անհրաժեշտությունը: Այս միտումը նախ և առաջ պայմանավորված է այն հանգամանքով, որ մի շարք պետություններ և միջազգային կառույցներ այս կամ այն մակարդակով արդեն իսկ ճանաչել և դատապարտել են Հայոց ցեղասպանությունը, հետևաբար այդ փաստը միջազգային հանրության լայն շրջանակների ու սույն ոլորտում հետազոտողների ճնշող մեծամասնության մոտ արդեն որևէ լուրջ կասկած չի հարուցում: Առկա հանգամանքներից ելնելով՝ հարկ ենք համարում ի մի բերելու 100 տարվա ընթացքում Հայոց ցեղասպանության ճանաչման հետ կապված իրավական փաստերը՝ ժամանակի մարտահրավերներին դիմագրավելու համար:

Որպես միջազգային հանցագործություն Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում առանձնահատուկ նշանակություն ունի 1915թ. մայիսի 11-ի (նոր տոմարով՝ մայիսի 24-ի) ԱՄՆ-ում ստի պետությունների՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կողմից հրապարակված համատեղ պաշտոնական հռչակագիրը, որով նրանք Հայոց ցեղասպանությունը որակում էին որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն և հայտարարում, որ թուրքական կառավարությունը պատասխանատու է իրականացված հանցագործության համար: Մեջբերում են.

«Հաշվի առնելով մարդկության և քաղաքակրթության դեմ թուրքիայի կողմից իրականացված այս նոր հանցագործությունները՝ դաշնակից կառավարությունները հրապարակայնորեն հայտարարում են Բ. Դռանը, որ պատասխանատուության են ենթարկելու ինչպես Օսմանյան կառավարության բոլոր անդամներին, այնպես էլ նրա այն գործակալներին, ովքեր ներգրավված են հայերի կոտորածներում»:

Հարկ է նշել, որ փաստաթուղթը ստորագրվեց այն ժամանակ, երբ Անգլո-ֆրանսիական մեծերը ծանր փորձության էին ենթարկվել Գալիպոլի ճակատում, իսկ ռուսական ուժերը հաղթարշավով մտել էին Արևմտահայաստանի խորքերը: Հետևաբար պարզորոշ էր թուրքական կառավարության հետագա գործելակերպը՝ այսպես ասած «սրբազան գործը» ավարտին հասցնելու միտումը, այն դեպքում, երբ մեծ տեղություններից ոչ մեկը հետևողականություն չդրսևորեց կոտորածների հետագա կանխար-

գելման համար: 1918թ. Մուղոսի զինադադարի կնքումից և երիտուրքական կառավարության հրաժարականից հետո նորաստեղծ կառավարությունը՝ Իզզեթ փաշայի գլխավորությամբ, հետաքննության արդյունքում ընդունել է ցեղասպանության փաստը: 1919թ. Ստամբուլում ձևավորվեց ռազմական արտակարգ դատարան՝ պատժելու համար հայերի նկատմամբ իրականացված հանցագործության պատասխանատուներին: Այդ ժամանակ թուրքական իշխանությունները գրում էին. «...Թուրք ժողովուրդը խոնարհում է իր գլուխը. նա դա անում է հայ ժողովրդի համար տխրությամբ, իր համար՝ անթույլ»: 1919թ. մարտի 8-ին սկսված ռազմական արտակարգ ատյանի դատավարությունը տևեց մինչև հուլիսի 5-ը: Դատավճի մեջ նշվում է.

«Հաշվի առնելով Թալեթ, Էմվեր, Ջենալ և Նազըմ էֆենդիների կատարած չափազանց ծանր հանցագործ արարքները՝ Կ.Պուլի ռազմական դատարանը որոշեց նրանց դատել կայսերական քաղաքացիական քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի առաջին և 55-րդ հոդվածի վերջին մասերով՝ դատապարտելով հեռակա մահվան, իսկ Ջավիդ, Մուստաֆա Շեռեֆ, Մուսա Բյազիմ էֆենդիներին՝ 15-ական տարի ժամկետով ազատազրկման: Փախուստի մեջ գտնվողներին զրկել քաղաքացիական իրավունքներից, իսկ բռնազրկված ունեցվածքի հարցում գործել ըստ Օրենքի»:

Հ.Գ.- 2015 թ. մարտի 19-ին Euronews-ի թղթակցին տված հարցազրույցի ժամանակ Հանրապետական թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիբ Էրդողանը (քաղաքացիական ծագումով) հանդես եկավ հայ պատմաբաններին թուրքիա գալու և արխիվներն ուսումնասիրելու ցինկի կոչով: Տեսնես նման անցյալ ունեցող երկրի ղեկավարը ծանոթ է ճույն պետական արխիվների (առայժմ չբացված Ձ.Ու. արխիվների) գաղտնի փաստաթղթերին, որոնցում պահպանվում են նաև ռազմական արտակարգ ատյանների դատաքննական փաթեթները՝ վկաների խոստովանական ցուցմունքներով:

Երկրորդ համաշխարհային պատերազմի արհավիրքները՝ դրանցից բխող հետևանքներով, համաշխարհային մարդկության գիտակցության մեջ հաստատացրել են էթնիկական և կրոնական համայնքների նպատակային բնաջնջման կանխարգելման և հետևանքների վերացման մասին գաղափարի օրինակահանցումը: 1946 թ. դեկտեմբերի 11-ին Միավորված ազգերի կազմակերպության կողմից ընդունված մարդկության դեմ հանցավորության վերաբերյալ առաջին որոշմամբ, Գլխավոր ասամբլեայի 96(1) բանաձևով սահմանվեցին ցեղասպանություն հասկացությունը և նրա հիմնական տարրերը, որոնք հաստատվեցին 1948 թ. դեկտեմբերի 9-ի ՄԱԿ-ի Ցեղասպանության կանխարգելման և պատժի մասին կոնվենցիայով (այսուհետև՝ Ցեղասպանության մասին կոնվենցիա): Այն ուժի մեջ է մտել 1951 թվականի հունվարի 12-ին: Կոնվենցիայի ընդունումը ծագումով հրեա և լեհ իրավաբան Ռաֆայել Լեմկինի բազում տարիների աշխատանքի արդյունքն էր:

Կոնվենցիայի 1-ին հոդվածը նշում է, որ ցեղասպանությունը հանցագործություն է, անկախ նրանից՝ կատարվում է խաղաղ թե պատերազմական պայմաններում, և որ ստորագրող կողմերը պարտավորվում են կանխարգելել և

պատժել կատարելու համար: Կոնվենցիայի 2-րդ հոդվածը ցեղասպանություն է համարում այն գործողությունները, որոնք կատարվում են մի որևէ ազգային, ցեղային կամ կրոնական խմբի լիակատար կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ: Այնուհետև հաջորդ հինգ կետերում թվարկվում են այդ գործողությունները, որոնցից յուրաքանչյուրը համարվում է ցեղասպանության ակտ. ա) խմբի անդամների սպանությունը, բ) նրանց մարմնական լուրջ վնասվածք կամ մտավոր խանգարում պատճառելը, գ) խմբի համար այնպիսի կենսապայմանների ստեղծումը, որոնց նպատակն է այդ խմբի լիակատար կամ մասնակի ֆիզիկական ոչնչացումը, դ) խմբի ներսում ծննդաբերության կանխման միջոցառումները, ե) երեխաների հանձնումը մարդկային մի խմբից մյուսին:

Կասկած չկա, որ Օսմանյան կայսրությունում 1915-1923 թվականներին հայերի նկատմամբ իրականացված կոտորածների ժամանակ տեղի են ունեցել վերոհիշյալ բոլոր հինգ կետերով նշված գործողությունները:

Ըստ իս, Կոնվենցիան իր դրական կողմերով հանդերձ, ունի նաև բացասական իմաստավորում: Առաջինը՝ այն ունի զուտ իրավական և ոչ թե փաստագրական կամ պատմական վերլուծություն: Երկրորդ՝ այն պատասխանատվության է կոչում ֆիզիկական անձանց: Մեր կարծիքով թուրքիան միջազգային իրավական պատասխանատվություն պետք է կրի ոչ միայն հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման, այլև նրա հայրենիքին տեր կանգնելու համար: Այս առումով 1948 թ. դեկտեմբերի 9-ի ՄԱԿ-ի Ցեղասպանության մասին կոնվենցիան պետք է լրամշակվի և մեկ դրույթով, այն է՝ թուրքիան պետք է դատապարտվի ոչ միայն էթնիկ կամ կրոնական հողի վրա կատարված հանցագործության, այլև մարդուն հայրենիքից զրկելու համար, որով հետև բոլոր երկրների և բոլոր ժամանակների քրեական օրենսգրքերն ամրագրել են, որ մարդու մասնավոր սեփականությունը անձեռնմխելի է:

Հաշվի առնելով ներկա պայմաններում թուրքական քաղաքական և պատմական գործիչների կողմից շրջանառության մեջ դրված իրավական պատժելիության ժամկետի լրացման և վարկածի՝ հարկ ենք համարում մեջբերել ՄԱԿ-ի 1966թ. դեկտեմբերի 16-ի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի և 1968թ. նոյեմբերի 26-ի «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» կոնվենցիայի դրույթները, ըստ որոնց.

Վաղեմության ոչ մի ժամկետ, անկախ կատարման ժամանակից, չի կիրառվում հետևյալ հանցագործությունների նկատմամբ.

- ա) պատերազմական հանցագործությունների
 - բ) մարդկության դեմ ուղղված հանցագործությունների՝ անկախ նրանից, կատարվել են պատերազմի, թե խաղաղ ժամանակ:
- ՄԱԿ-ի 1968 թ. նոյեմբերի 26-ի կոնվենցիայի բովանդակությունը ամբողջովին համահունչ է Հայոց ցեղասպանության իրավական հիմնա-

վորմանը, հետևաբար այս փաստաթուղթը գլխավոր ազգայն պիտի դառնար նման հանցագործությունների կանխարգելման համար: Ուսումնասիրվող նյութի շրջանակներում կարևոր ենք համարում առանձնացնել երկու տասնյակից ավելի պետությունների կողմից խորհրդարանական, ներկայացուցչական մարմինների մակարդակներով իրավական հիմնավորում ստացած բանաձևերն ու որոշումները: Ցեղասպանություններով ահագնացող 20-րդ դարում մարդկությանը սթափեցնող կոչով առաջին անգամ 1965 թ. ապրիլի 10-ին հանդես եկան Ուրուգվայի Սենատը և Ներկայացուցիչների պալատը: Մեջբերում են.

1. Առաջիկա ապրիլի 24-ը հայտարարվում է «Հայ նահատակների հիշատակի օր»՝ նվիրված 1915թ. այդ ազգության կոտորածներին զոհ գնացած ներկայացուցիչներին:
2. Պաշտոնական ռադիոժառանգությունների կայանները պետք է այդ օրը իրենց հաղորդումների մի մասը նվիրեն վերոհիշյալ ազգության զոհերի հիշատակին:
3. Հայկական ծագում ունեցող քաղաքացիներին, որոնք պետական ծառայողներ են, թույլատրվում է այդ օրը աշխատանքի չներկայանալ:
4. Մոնտեվիդեոյի շրջանի թիվ 156 երկրորդ աստիճանի դպրոցը անվանակոչել «Հայաստան»:

Մենք մեր խոնարհումն ենք բերում Ուրուգվայի ժողովրդի ազատամիտ ոգուն, որի կոչը վարակիչ եղավ տասնյակ պետությունների համար: Դրանք են՝ Կիպրոս, Ռուսաստան, Հունաստան, Կանադա, Ֆրանսիա, Արգենտինա, Բելգիա, Լիբանան, Իտալիա, Վատիկան, Շվեյցարիա, Հունգարիա, Սլովակիա, Գերմանիա, Լիտվա, Վենեսուելա, Բոլիվիա, Լեհաստան, Հիլի, Հարավսլավիա, Ավստրալիա, Շվեդիա, Սիրիա, ԱՄՆ-ի 46 նահանգներ:

Հետագայում նշված երկրներից 2001թ. Ֆրանսիան, 2004-ին՝ Ուրուգվայը, 2006-ին՝ Արգենտինան, 2015-ին՝ Կիպրոսը իբրև միջազգային իրավական փաստաթուղթ ընդունեցին հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող օրենքներ: Արգենտինան, Ուրուգվայը, Ֆրանսիան ընդունել են Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքներ: Այժմ քրեական պատժի մասին նախագիծ է պատասխանում ընդունել նաև Սլովակիայի օրենսդիր մարմինը: Սրանք ևս մեկ քայլ են թուրքիային ժողովրդավարության ճանապարհին ճիշտ կողմնորոշելու և ստիպելու առերեսվել իր պատմությանը:

1984թ. ապրիլի 10-ին Հայոց ցեղասպանությունը դատապարտող փաստաթուղթ է ընդունվել Փարիզի ժողովուրդների մշտական ատյանի նիստում, ըստ որի.

1. Հայ ժողովրդի հիմնարար իրավունքները պետք է պահպանվեն միջազգային իրավունքներին համահունչ:
2. Ցեղասպանությունը կանխելու և դրա համար պատժելու մասին 1948թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի սահմանումով հայ ժողովրդի բնաջնջումը բռնազաղթի և զանգվածային սպանությունների միջոցով որակել որպես ցեղասպանություն:
3. Հայոց ցեղասպանությունը համարել «միջազգային հանցագործություն», որի պատասխանատվությունը պետք է կրի թուրքական պե-

ՇԻՇՈՒՄ ԵՄ ԵՎ ՊԱՇԱՆՋՈՒՄ

տությունը՝ չխուսափելով դրանից այն ժամանակվա և ներկայիս թուրքական պետության հաջորդականության բացակայության պատճառաբանությամբ:

4. Այդ պատասխանատվությունը պարտավորեցնում է պաշտոնապես ճանաչել Հայոց ցեղասպանության փաստը և իբրև հետևանք հատուցել հայ ժողովրդին պատճառած վնասները:

5. ՄԱԿ-ը և նրա յուրաքանչյուր անդամ իրավասու են պահանջել այդպիսի ճանաչում և այդ գործում աջակցել Հայաստանին:

Վերոնշյալից կարևորում ենք 3-րդ և 4-րդ հոդվածները. այն է՝ հանցագործության պատասխանատվության կրումը ժամանակակից թուրքական կառավարության կողմից իբրև իրավահաջորդի և հայ ժողովրդին պատճառած վնասների հատուցումը: Հարց. եթե միջազգային հեղինակավոր կառույցների կողմից ընդունված որոշումները վճռական դրիքորոշում ուղղեգրելու նպատակ են հետապնդում, ապա ինչու նույն կառույցները իրենց իսկ ընդունած որոշումների նկատմամբ հետևողականություն չեն դրսևորում: Միգուցե տարածաշրջանային շահերը ավելի՞ գերադասելի են համամարդկա-

յին շահերից: 1987 թ. հունիսի 18-ին Եվրախորհրդարանը ընդունեց բանաձև «Հայկական հարցի լուծման մասին»: Փաստաթղթի ներածական մասում նշվում է.

«Համաձայն ՄԱԿ-ի գլխավոր ասանբլեայի կողմից 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունված Ցեղասպանության մասին կոնվենցիայի պահանջում ենք ճնշում գործադրել թուրքիայի ներկա կառավարության վրա՝ 1915-17 թթ. հայերի հանդեպ կազմակերպած ցեղասպանությունը ճանաչելու համար: Այդ քայլը թուրքիայի կողմից կոխարկի հայ ժողովրդի նկատմամբ բարոյական վերականգնման մարդկային քայլ, որը միայն պատիվ կբերի թուրքական կառավարությանն ու թուրք ժողովրդին»:

Հայոց ցեղասպանության ճանաչման և միջազգային իրավական հիմնավորում տալու գործընթացը շարունակվում է: 2015թ. մարտի 3-ին Եվրոպական ժողովրդական կուսակցության Քաղաքական Համաժողովը ընդունեց բանաձև՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին: Բանաձևում մասնավորապես ասվում է. «Եվրոպական ժողովրդական կուսակցությունը վերահաստատում է հայկական ցեղասպանության փաստը և դատապարտում է այն: Մենք միանում են մեծապես աջակցում ենք հայ ժողովրդի միջազգային պայքարին, որը տարվում է ցեղասպանությունների կանխման, ցեղասպանության ենթարկված ժողովուրդների իրավունքների վերականգնման, ամրագրման և պատմական արդարության հաստատման ուղիով: Կոչ ենք անում թուրքիային հետևել հետպատերազմյան Գերմանիայի կողմից ցուցաբերած բացառիկ շիտակության ու նախաձեռնողականության օրինակին, իրականացնել եվրոպական երկրին վայել քաղաքականություն, որը ներառում է պատմական հողերի վերադարձը հայերին և դրանից բխող ճշմարտության միջոցով հաշտության հասնելու իրամայակամի իրագործումը»:

Որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը վերապրած ժողովրդի ժառանգներ՝ բարոյական մեծ պատասխանատվություն ենք զգում աջակցելու միջազգային հանրության ջանքերին՝ մարդկության դեմ հանցագործությունները կանխելու նպատակով, չնայած ցեղասպանության մասին կոնվենցիայի ընդունմանը հաջորդող 60 տարիներին Կամբոջայի, Ռուանդայի, Դարֆուրի և այլ ողբերգությունները ցույց տվեցին, որ բարի կամքը բավարար չէ մարդկության դեմ հանցագործությունների նոր դեպքերը բացառելու համար:

Այսպիսով, վկայակոչելով միջազգային իրավական հարթակներում առկա միջազգային ակտերն ու բանաձևերը, վերահաստատում ենք Հայաստանի և հայ ժողովրդի հանձնառությունը՝ շարունակելու միջազգային պայքարը պատմական արդարության հաստատման և մեր ժողովրդի իրավունքների վերականգնման համար: Թուրքիայի բարոյական գարթոնքի վրա հույս դնելով՝ կարծում ենք, որ ճանաչումն ու դատապարտումը ապագայում կարևոր մեկնակետ կդառնան հայ և թուրք ժողովուրդների պատմական հաշտեցման գործընթացի համար: Հավատում ենք:

Արթուր ԱՐԱՋԱՆՅԱՆ
Սյրեի. Վ. Զհանգիրյանի անվան հ. 11
ավագ դպրոց, 12 հ. 1 դաս. աշակերպ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՂՈՒՆԵՐԸ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԴԱՍԵՐԸ



2015 թվականի ապրիլի 24-ին լրացավ Հայոց մեծ եղեռնի 100 տարին: Սակայն Հայոց ցեղասպանությունը ծնող պատճառները դեռևս վերացված չեն: Պանթուրքիզմը չի հասել իր վերջնական նպատակին:

Մեծ Թուրանի գաղափարը իրականացված չէ: Հայկական «սեպը» խանգարում է համաթուրքական պետության ստեղծումը: Պատմական հարմար պահին պանթուրքիզմը, անկասկած, կփորձի հասնել իր վերջնական նպատակին՝ Մեծ Թուրանի պետության ստեղծումը, որը կարող է իրականացվել միայն Ջանգեզուրի գրավմամբ և հայ ժողովրդի նոր ցեղասպանությամբ: Ելնելով պատմական այդ անխուսափելի վտանգի սպառնալիքից՝ հայ ժողովուրդը, նրա քաղաքական դեկավարությունը, ազգային գաղափարախոսները պարտավոր են խոր ու բազմակողմանիորեն վերլուծել 100 տարվա պատմություն ունեցող Հայոց ցեղասպանության պատճառները, համապատասխան դասեր քաղել դրանցից և հուսալի միջոցներ ձեռք առնել՝ պանթուրքիզմի հարձակմանը դիմակայելու համար:

Հայոց ցեղասպանության, հայկական հարցի հայ-թուրքական հարաբերությունների և ընդհանրապես հայ և թուրք ժողովուրդների պատմության քննական ուսումնասիրությունը մեզ բերում է մի շարք եզրահանգումների, որոնք իրենց պատշաճ տեղը պետք է ունենան հայոց ազգային գաղափարախոսության համակարգում:

Թուրքական ցեղերը 11-12-րդ դարերում, նվաճելով հայկական լեռնաշխարհը, պայքար են սկսում՝ Հայոց պատմական հայրենիքը սեփականացնելու համար: Ձևավորվում է Հայկական լեռնաշխարհը, նվաճած թուրքական ցեղերի ազգային գաղափարախոսությունը, որի հիմնական նպատակը հայոց պատմական հայրենիքը սեփականացնելն էր, այդ տարածքում թուրքական հզոր պետության ստեղծումը: Թուրքերի ազգային գաղափարախոսության իրականացման համար պետք է ոչնչացվեր այդ նվաճված հայրենիքի տերը՝ հայ ժողովուրդը:

Հայ ժողովուրդը կամ պետք է ծուլվեր, կամ ֆիզիկապես ոչնչացվեր, կամ էլ արտագաղթեր օտար երկրներ: 19-րդ դարում, վերջնականապես համոզվելով, որ հայ ժողովրդին ծուլելու, Հայաստանը հայաթափելու քաղաքականությունը սպասված արդյունք չի տալիս, թուրքերն անցնում են հայերի ֆիզիկական ոչնչացման քաղաքականության իրագործմանը:

Հայերի ցեղասպանությունը թուրքիայում սկսվել է 1890-ական թականների սկզբներից: Թուրքիան սպասում էր միջազգային հարմար պահի՝ հայերի ցեղասպանության ծրագիրը մի հարվածով, ամբողջությամբ իրագործելու

համար: 20-րդ դարի սկզբներին ձևավորվում է Աֆրիկայից մինչև Չինաստան և Չինաստանից մինչև Հս.առաջույլ օվկիանոս սփռված թուրքալեզու ժողովուրդների ազգային գաղափարախոսությունը՝ պանթուրքիզմը, որի նպատակը թուրքական ռասայի ժողովուրդների միասնական պետության՝ Մեծ Թուրանի ստեղծումն էր: Համաձայն պանթուրքիզմի գաղափարախոսության՝ Մեծ Թուրանի պետության ստեղծումը պետք է իրականացվեր հետևյալ 3 փուլերով.

- Թուրքիզմի իրականացում, որը նշանակում էր Թուրքիայի մահմեդականացում, քրիստոնյաների, մասնավորապես՝ արևմտահայության ոչնչացում:
- Օղուզական պետության ստեղծում, որի մեջ պետք է մտնեին Թուրքմենստանը, Թուրքիան, Ադրբեջանը և Իրանական Ադրբեջանը:
- Մեծ Թուրանի պետության ստեղծում: Հայկական սեպի վերացումից, օղուզական պետության ստեղծումից հետո ճանապարհը բաց էր:

Այսպիսով, հանուն թուրք ժողովրդի նոր հայրենիքի ձեռքբերման, հանուն այդ տարածքում հզոր ազգային պետականության ստեղծման, հանուն Մեծ Թուրանի պետք է ոչնչացվեր ամբողջ հայ ժողովուրդը: Ստեղծված պատմական պայմաններում միասնություն էր խոսել թուրքերի հետ լեզու գտնելու, հայ ժողովրդի առջև ծառայած խնդիրները՝ հայոց հայրենիքի ազատագրության, հայկական պետականության վերականգնման հիմնահարցերը թուրքերի հետ խաղաղ լուծելու մասին: Թուրքերի և հայերի միջև հաշտության եզրեր չկային: Թուրքերը, նվաճելով Հայոց հայրենիքը, այն վերածում էին սեփական հայրենիքի: Հայ ժողովուրդը կամ պետք է կռվեր հայրենիքի համար, կամ էլ հեռանար օտար երկրներ, որտեղ նա դատապարտված էր սպիտակ եղեռնի: Հայ ժողովրդին մնում էր միայն մի ելք, ձեռք բերելով քիչ թե շատ հուսալի դաշնակիցներ՝ պայքարի դուրս գալ թուրքական նվաճողների դեմ՝ հայրենիքի ազատագրության, հայկական պետականության վերականգնման համար: Հայ ժողովուրդը ընտրեց պայքարի ուղին: Հայ ժողովրդի պայքարը հայրենիքի ազատագրության, անկախ պետականության վերականգնման համար պատմության մեջ մտել է հայկական հարց, հայ դատ և պահանջատիրություն անուններով:

Դեռ 1879թ. Բաֆֆին ազգային այն երևելիներին, որոնք մասկանտորեն հավատակից եվրոպացիներին ու ռուսիաներին էին ակնկալում Արևելյան խնդրի բարենպաստ վերջը, ինչպես նաև նրանց, որ քարոզում էին անշարժություն և հնազանդություն, զգուշացնում էր. «Արևելյան հարցը միշտ կա ու կմնա, և տաճկաստանի հայը պետք է նախապատրաստվի օգուտ քաղել հարմար դեպքից, երբ մյուս անգամ կհուճկ այն: Իսկ եթե նա միշտ անպատրաստ մնա, այդ ժամանակ դժբախտ Հայաստանը, այդ Եվրոպայի և Ասիայի պատմական կանուխը, ազգերի անցուդարձի ներքո կտորրվի և կոչնչանա»:

Ցավոք, հայությունը մնաց անպատրաստ ու անկազմակերպ, և արդյունքում՝ հայրենիքի մեծ մասի կորուստ, 1,5 մլն կրավորական զոհեր...

19-րդ դարի վերջի Հայ ազատամարտը նախապատրաստված չէր գաղափարաբանորեն ու կազմակերպորեն, և արևմտահայությունը հոգեբանորեն պատրաստ չէր կռվելու:

Արևմտահայ ազատամարտն անխուսափելի էր, անհրաժեշտություն՝ գոյության պայքարի և տարրական ինքնահարգանքի թելադրումով պարտադրված, բայց ճիշտ չէին ընտրված պայքարի միջոցներն ու զենքերը, հստակ չէր նպատակը: Մի նպատակ, որ հետապնդում էր Օսմանյան Թուրքիայում հայերի ու թուրքերի ազատություն, նրանց համերաշխություն, և սկզբանե դատապարտված էր անհաջողության, քանզի գոյության կռիվի տրամաբանությունը պահանջում էր, որ այդ հողի վրա կամ բնիկ հայերն ապրեն, կամ եկվոր թուրքերը: Թուրքերը լավ էին հասկացել այս և գործեցին հայերին տեղահանելու և բնաջնջելու հաստատականությամբ:

Իսկ մենք որդեգրեցինք հայդուկային անջատ կռիվները, սուլթանականության դեմ պայքարը, անհատ թուրքերի ահաբեկումը: Բայց, ցավոք, երբեք թուրք ազգի: Այն ժամանակ էլ կային լուսավոր անհատներ, որոնք համընդհանուր ապստամբության կոչ էին անում, և դրանց շարքում պետք է հիշել Հրայրի և Վազգենի:

Մեզ չսթափեցրեց նույնիսկ 1895-96թթ. 300 հազար հայության կոտորածը: Ում մեղադրեց, երբ այս անգամ էլ չհասկացանք, թե ով է թուրքը: Ում մեղադրեց, երբ հայության քաղաքական ղեկավարությունը, 1908-ի Սահմանադրության օրերին, ինքնապահպանման ամենատարրական բնագոյը կորցրած, զինաթափում էր հայդուկային խմբերը, ղեկավարություն, որ համամարդկային ցնորքներով տարված, կամ միասնորեն խաբված, վերազգային օթյակներում տեղ էր զբաղեցնում երիտթուրքերի կողքին և տիեզերական եղբայրություն տեսնում: Միջնդեթուրքերը հայ-թուրքական բարեկամության խաղը դիտում էին որպես քողարկված հանգրվան իրենց համաթուրքական նպատակների համար: Այս հանդուսնով գործեցին թուրքերը և հաջողությամբ իրականացրին ազգակերտումի գործը: Չմոռացան, անշուշտ, առաջին հերթին վերացնել այն հայ եղբայրներին, որոնց հետ մինչ այդ սուլթանի տապալելու ձեռնարկ էին ծրագրել: Իսկ Չոխրապի պես միամիտը, որ 1908ի համիրյան հեղաշրջման օրերին իր տանը թաքցրեց խալիլին, իրեն ձերբակալող ոստիկաններին թող հարցներ՝ արդյո՞ք իր եղբայր երիտթուրքերը տեղյակ են... Ում մեղադրեց, երբ դասեր չառանք նաև Ադանայի ջարդերից:

Պայթեց Առաջին աշխարհամարտը, որի փորձությունը դիմագրավելու անկարող եղանք, քանզի չէինք նախապատրաստվել: Ազգովի համախմբվելու և ինքնապաշտպանություն կազմակերպելու անընդունակ եղանք:

Իսկ 1915-ին եղավ այն, ինչ այդպիսի դեպքերում լինում է... Դառնորեն, բայց և ճնարտացիորեն է ասված. «Ձուրկ է մի ժողովուրդ ինքնապաշտպանության ընդունակությունից՝ նշանակում է նա զուրկ է ամեն առաքինությունից, զուրկ գոյության բարոյական իրավունքից» Գ. Տժդեհ:

Հայությունը դաժանորեն պարտվեց և, որ կրկնակի աններելի է, պարտվեց իր հողի վրա, պարտվեց ոչ հերոսաբար, այլ՝ կրավորաբար: Կրավորական զոհերի այն սովոր քանակը, որ տվեց մեր ժողովուրդը 1915-ին, եթե նրա զոհն փոքր մասը նահատակվեր մարտադաշտերում, հայությունն ազատագրված կլիներ: Չնայած մի քանի հերոսամարտերի, որոնք վերջին հաշվով հայության պատիվը փրկեցին, 1915-ը հիմնականում սպանող էր: Անշուշտ, հիանալի և հպարտանալ կարելի է Ուրֆայի, բայց և չես կարող չնախատել մեր հոգևոր դաստիարակիչներին: Այստեղ տեղին է հիշել կիլիկիահայերի հոգևոր առաջնորդ Սահակ Բ Խապայան կաթողիկոսի սև գործը, որը, հատուկ կոնդակով, տեղի հայերին «կատարյալ հնազանդության և օրինապահության» կոչ արեց, որով և նրանց մեծ մասին դատապարտեց բռնագաղթի և տանջամահության:

Կան միամիտներ, այն ժամանակ էլ կային, որ պնդում էին, թե չեզոքություն պահելու և Օսմանյան պետության հանդեպ օրինապահ լինելու դեպքում, կխուսափեինք ջարդերից... Լուրջ չէ թուրքական լծի տակ հայրուհանյակներով տառապող ժողովրդից չեզոքություն պահանջելը, հայությունը հոգեբանորեն չէր կարող անտարբեր մնալ և ընթուստության փորձ չանել: Իսկ թուրքերը մեր չեզոքության համար մեզ երախտապարտ պիտի չլինեին, քանզի կոտորում էին, որ իրենք ապրեն, և հիմար չէին, որ պատերազմի առիթը բաց թողնեին:

1920թ. սեպտեմբերին սկսվեց հայ-թուրքական պատերազմը: Այն անխուսափելի էր, բնական ընթացք գոյության պայքարի՝ մղվող միմյանց եռթյամբ հակուղակի ելու ցեղերի միջև: Այս առումով, սխալ պիտի համարել «հետադարձ մարզաբեկություն» արված այն պնդումները, թե նախապես Քեմալի հետ բարեկամանալով Հայաստանը կխուսափեր պատերազմից: Ինչ է, Քեմալը պիտի սպասեր, թե երբ են հայերը ավելի հզորանալու...

Քեմալի 25 հազարանոց բանակի դեմ Հայաստանն ուներ լավ զինված և հագնված 40 հազարանոց բանակ, որի զգալի մասը, սակայն, կազմում էին հապճեպով գորակոչված ու ընդամենը քանակ ավելացնող պատրաստի դասալիքները, բանակ, որը բարոյալքվել էր դեռևս Մայիսյան ապստամբության ու բուլշևիկյան քարոզների պատճառով: Հոկտեմբերի 30-ին, մի քանի ձևական կրակոցներից հետո, Կարսի անառիկ թվացող ամրոցը հանձնվեց թուրք «եղբայրներին», և այդ անպատիվ անկման պատասխանատվությունը միայն մեկ մարդ քավեց՝ գնդապետ Մազմանյանը, որ ասպետաբար ինքնասպան եղավ:



ՀԻՇՈՒՄ ԵՄ ԵՎ ՊԱՐԱՆՁՈՒՄ

7 Սակայն Կարսում պարտվողը միայն հայկական բանակը չէր, այլ ողջ հայությունը, որը իր ընդհանրության մեջ արիության ու մարտունակության մկրտություն չստացավ: Մոտենում էր Հայաստանի խորհրդայնացումը, ու խորհրդային Ռուսաստանը ամեն միջոցով արագացնում էր այն: Եվ Ույեմբերի վերջին Հայաստանի կառավարությանը այլ բան չէր մնում անելու, քան ընդունելու Ռուսաստանի պայմանը՝ երկիրը հանձնել բոլշևիկներին: Այդ պայմաններում Հայաստանի խորհրդայնացումը անխուսափելի էր, և դժվար թե թուրքերից պարտված հայկական բանակը կարող լիներ դիմակայելու Ռուսաստանի ծավալմանը: Սակայն եթե Հայաստանի Հանրապետությունը արժանապատվորեն կռվեր և հաղթեր Քեմալին, կարելի է ասել, որ Ռուսաստանը Հայաստանի՝ որպես կարող ուժի հետ հաշվի կնստեր, և, խորհրդային Հայաստանի տարածքներն ավելի լայն կլինեին:

Այնինչ Հայաստանը պարտվեց: Եվ այդ պարտությունը արձանագրվեց դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը՝ բոլշևիկյան դավադրական միջնորդությամբ կնքված Ալեքսանդրապոլի պայմանագրով, ու թուրքերը, հաղթական արհամարհանքով, մի քանի ամիս առաջ 56 հազ. քառ. կմ տարածքով Հայաստանին էին թողնում 11 հազ. քառ. կմ. հողակտոր: Ինչու պարտվեց Հայաստանի Հանրապետությունը. թուրք-բոլշևիկյան զինակցությունն էր պատճառը, ճակատագրի հեգնանքը, բոլշևիկյան քարոզչությունը, Եվրոպայի դավաճանությունը, խորհրդայնացման ուշացումը... Թերևս սրա լավագույն պատասխանը տալիս է Հայաստանի առաջին վարչապետ Յ.Զաքարյանը: «Բոլշևիկների դավադրությունը չէր մեր պարտության պատճառը, ոչ

իսկ թուրքերի ուժը, այլ մեր սեփական ապիկարությունը»: ՀՀ-ը պարտվեց ժողովրդի և հատկապես բանակի մեջ ազգային ոգու պակասից: Ում մեղադրենք, որ մեր 40 հազարանոց բանակը բարոյալքված էր և անկարող դիմակայելու 25 հազարանոց զորքին: Ազգային ոգու պակասն էր, որ պարսրտ հող էր ստեղծել բոլշևիկյան քարոզչության համար, ոգու պակաս, որը դավադիրներին թույլ էր տալիս զինվորների մեջ հեշտությամբ բթացնել կռվելու կամքը, իսկ ստամոքսով մտահոգված ժողովրդին նույնքան հեշտությամբ խաբել հացառատ խոստումներով: Այդ ոգու պակասն էր, որ հայության տարաճումն հատկապես թուրքերի, սեփական ուժերին ապավինելու փոխարեն, նետել էր օրինատախանիների գիրկը: Իսկ նրանք, ովքեր, զերծ օրինատախանիներից, իսկ ավելի ճիշտ հայկական կողմնորոշմամբ՝ ապավինել էին սեփական ոգու գործությանը, Ձանգեզուրի լեռներում հայոց ողիսականն էին կերտում: Մինչ ՀՀ կառավարությունը Լեզրանի հետ համաձայնության էր եկել՝ Ձանգեզուրը Ադրբեջանին հանձնելու մասին Բալկաններում և Ղարաբաղի խառնուրդներում, մտածող մի զինվորական, առաջնորդելով մի բուռ հայորդիների, վարում էր Սյունիքի հերոսամարտը: Այդ ժամը օրերին Սեֆեդը հղացավ և գործի դրեց փրկարար դավիթբեկյան Ուխտերը: 1920թ. օգոստոսի 25-ին, Կապանի Կավարտ գյուղի եկեղեցում, Սեֆեդի զինվորները Դավիթ-Բեկի անունով ուխտեցին «հավատարիմ մնալ հայրենի երկրի ազատությանը, իրենց հրամանատար Սեֆեդին և կռվել մինչև վերջին շունչը»: Առանց դրսի օժանդակության, ապավինած հայրենի լեռներին ու սեփական ոգու գործությանը, Սյունիքի հայությունը, Սեֆեդի գեկավարությամբ, վարեց իր հաղթական դյուցազ-

մամարտը: 1921թ. հունվարին Դրոն Բաքվից մի հեռագիր հղեց Սեֆեդին առաջարկելով նրան թույլ տալ Ձանգեզուրի խորհրդայնացումը, հավատացնելով և վստահեցնելով, որ այդպիսով Մոսկվայի առաջիկա կոնֆերանսում, խորհրդային Ռուսաստանը բարյացակամ կլիներ դեպի Հայաստանը և կպաշտպանի հայ աշխատավորության շահերը: Այս անգամ ևս, Սեֆեդը, իբրև հեռատես քաղաքագետ, չհեռացավ Սյունիքից և շարունակեց մաքառել:

Երկու տարվա կռիվների ընթացքում, թշնամու 15 հազար սպանվածի դիմաց Սյունիքը տվեց ընդամենը 20 զոհ, իսկ մոտ 200 զուրդեր մաքառործվեցին թուրքերից ու վերադարձվեցին հայրենի: Շնորհիվ Լեռնահայաստանի հերոսամարտի, հնարավոր եղավ

- Ա. փրկել լեռնահայությանը կոտորածից,
- Բ. Սյունիքը կցել մայր հայրենիքին՝ մահացու անդամահատումից զերծ պահելով Հայաստանը
- Գ. Հոգեբանորեն և ռազմագիտորեն հնարավոր դարձնել Փետրվարյան ապստամբությունը,
- Դ. Ապահովել հայ մտավորականության և մարտական ուժերի նահանջը ու անցումը Պարսկաստան:

Ամփոփելով, փորձենք զուգարբաբար ցույց տալ այն գործոնները, որոնք, ի վերջո, հանգեցրին ՀՀ պարտությանն ու Սյունիքի հաղթանակին:

Մինչ ՀՀ-ը որդեգրել էր արևմտյան կողմնորոշում, Լեռնահայաստանն առաջնորդվում էր սեփական ուժի և ոգու գործությանն ապավինելու սկզբունքով: ՀՀ-ը ուներ մեծաքանակ, լավ զինված, բայց բարոյագրկված բանակ, Լեռնահայաստանը՝ թեև փոքրաքանակ, սակայն հազեցված, բայց ոգեղեն բանակ:

ՀՀ-ը հետևողական չեղավ երկիրը թուրք-թաթարներից մաքրագործման մեջ, մինչ Սյունիքը վճռական գտնվեց գյուղերի թուրքաթափման գործում: Եթե ՀՀ-ը չուներ ազգային քարոզչություն և հանդուրժում էր բոլշևիկյան քարոզչությունը, ապա Լեռնահայաստանը առաջնորդվում էր ցեղային գաղափարներով և դրանցով դիմագրավում բոլշևիկյան ազգամերժ քարոզչությանը: Արդյունքում, երկուսուկես տարվա ընթացքում, այդ օրհասական տարիներին ՀՀ-ը պարտվեց ազային ոգու պակասից, իսկ Լեռնահայաստանը հաղթեց այդ ոգու դրսևորման շնորհիվ: Այդ ոգու հաղթարշավ էր նաև Արցախյան գոյապայքարի հաղթանակը:

Այսօր էլ աշխարհը հանգիստ չէ: Այն ցնցվում է ահաբեկչություններից, արդարացի կամ անարդար պատերազմներից, որտեղ ամեն մեկը իր քաղաքական շահն է որոնում և պատրաստ է ամեն գնով հասնել դրան, ուստի անկանխատեսելի է ամեն օրը:

Այս խառը և դժվարին ժամանակներում, մենք՝ հայերս, պարտավոր ենք, լավ իմանալով մեր պատմությունը, դասեր քաղել դրանից և ճիշտ, ճկուն ու միասնաբար գործել հանուն մեր հայրենիքի, մեր ժողովրդի և այն Հայաստանի համար, որ վաղը է գալու:

Հայ ժողովրդի ներկա սերունդը պարտավոր է հայկական հարցի լուծման համար գործադրել բոլոր ջանքերը, հաջողության չհասնելու դեպքում, պատմական այդ բախտի բեռը պետք է կրի սանցվի հաջորդ սերունդներին:

Հաղթում է այն ժողովուրդը, որը հավտում է իր ապագային:

Դավիթ ԲԱՐՍԵՂՅԱՆ
Ստեփ. Վ. Զհանգիրյանի անվան հ. 11
ավագ դպրոց, 11 հ.2 դաս. աշակերտ

ԳԵՐՄԱՆԻԱՆ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ



Աշխարհը վերաբաժանելու նպատակով պատերազմ հրահրած ժողովուրդների միջև առելություն ու թշնամանք բորբոքած իմպերիալիստական տերությունների՝ Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ավստրո-Հունգարիայի, ցարական Ռուսաստանի կառավարող շրջանները ոչ միայն չընդդիմացան հայ ժողովրդի զանգվածային տեղահանության ու ջարդերի թուրքական քաղաքականության իրագործմանը, այլև օբյեկտիվորեն նպաստեցին դրան: Փաստորեն իմպերիալիզմը ոչ միայն չեղափակվեց Հայաստանի քաղաքական ազատագրությունը, այլև դարձավ նրա ավերածության ու ստրկացման մեծագույն խթանողը:

Թուրքական ջարդարարական քաղաքականության գլխավոր ոգեձեռողը կայգերական Գերմանիան էր:

Գերմանիայի կայսր Վիլհելմ 2-րդը հայտարարեց. «Աշխարհում այսուհետև ոչ մի խոշոր հարց չի կարող վճռվել առանց Գերմանիայի և գերմանական կայսեր համաձայնության»:

Թուրքիան փաստորեն գերմանիայի վասալն էր և ենթարկվում էր կայգերական Գերմանիայի կամքին:

Ինչպես ներքին ու արտաքին քաղաքականության բազմաթիվ հարցերում, հայկական հարցը յուրովի լուծելու գործում նույնպես Էնվեր-Թալեթ-Ջեմալ եռյակն ուներ թուրքիայում ծառայող գերմանական զինվորականության և մյուս ներկայացուցիչների կատարյալ օժանդակությունը: Սակայն «բավական կլինե՞ր գերմանական իշխանությունների մի խոսքը, որպեսզի հետ պահեին կոտորածների ղեկավարներին՝ Թալեթին և Էնվերին»:

Էնվերը և Թալեթը մասսայական տեղահանություններն ու կոտորածն սկսելը խորհրդակցել էին Գերմանիայի դեսպան Վանգեհայմի հետ, իրագրել պահել նրան իրենց պլանին, վերջինս էլ հավանություն էր տվել այդ ծրագրին: 2

Հայ ժողովրդի զանգվածային տեղահանու-

թյան վերաբերյալ առաջին տեղեկությունը, որը թուրքիայում Գերմանիայի դեսպան Վանգեհայմի կողմից Բեռլին ուղարկվեց 1915թ. մայիսի 31-ին, ուներ հետևյալ բովանդակությունը.

«Հայկական լրտեսության դեմն առնելու և նոր հայկական զանգվածային ապստամբությունների կանխման նպատակով Էնվեր փաշան նպատակադրվել է անմեղ հայ ընտանիքներին վերաբնակեցնել Միջագետքում: Նա թախանձագին խնդրել է, որ մենք այդ հարցում նրան չխանգարենք: Իսկ գերմանական դեսպանության ծովային կցորդ Հյունանը, որը Վիլհելմ 2-րդի մերձավոր գործակալն էր, բացահայտ հայտարարում էր, որ «Թուրքերը միանգամայն ճիշտ են վարվում հայերի հետ»:

Ստանալով ավագ դաշնակցի՝ այսինքն՝ Գերմանիայի համաձայնությունը, թուրքական ջարդարարներն ավելի համարձակ դարձան:

Հարց է առաջանում

1. Արդյո՞ք գերմանացիները գիտեին Օսմանյան կայսրությունում հայերի հանդեպ իրականացվող ջարդերի մասին
2. Կարո՞ղ էր արդյոք Գերմանիան կանխել Հայոց Մեծ եղեռնը:

Այն, որ Գերմանիան կարող էր, առանց թուրք-գերմանական դաշինքը վտանգելու կասեցնել կամ նույնիսկ կանխել Հայոց մեծ եղեռնը, իհարկե, չի կարող կասկածի ենթակա լինել:

Գերմանիան հովանավորում և խրախուսում էր թուրքական կառավարողների հակահայկական քաղաքականությունը: Կայսր Վիլհելմ 2-րդը իր ընտրանքը կատարել էր, նա սուլթանի բարեկամն էր դարձել, որովհետև մտահոգված էր ավելի մեծ և ավելի անկախ Գերմանիայով:

Նախքան Առաջին համաշխարհային պատերազմը Գերմանիայի որոշ գորղներ, օրինակ՝ Պաուլ Ռոդբախը առաջարկում էին հայերին թուրքերի տարածքից տեղահանելու և Միջագետքում վերաբնակեցնելու գաղափարը, նա հավատացածն էր, որ աշխատասեր հայերը կշեմացնեին անապատը: Գեներալ Ֆոն Գերցը՝ Օսմանյան բանակի խորհրդակցանք, այն կարծիքին էր, որ քրիստոնյա հայ ժողովրդին արմատախիլ անելը ռազմական նպատակներ է հետապնդում: Նա ուզում էր հայերին քշել Հայաս-

տանից և վերաբնակեցնել հարավում՝ Սիրիայում և Միջագետքում: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին թուրքիան ռազմական համաձայնագիր ստորագրեց Գերմանիայի հետ, ըստ համաձայնագրի գլխավոր կետի թուրքական բանակի յուրաքանչյուր ստորաբաժանման գլխավորական կանգնած պետք է լինե՞ր գերմանացի հրամանատար: Ավելի քան 12000 գերմանացի զինվոր էր ծառայում թուրքական բանակում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:

Գերմանիան, որպես թուրքիայի դաշնակցից, պատասխանատու է այն բանի համար, որ Էնվերը իր շահադիտական նպատակներից՝ նա ըստ էության նպաստել է երիտթուրքերի հանցավոր քաղաքականության իրականացմանը, ուրեմն և մեղակցից է հայկական եղեռնին: Գերմանական հակահայկական դիրքորոշումն առաջին հերթին բխում էր Գերմանիայի քաղաքական և ռազմական շահերից: Հայ ժողովուրդը պատերազմի հենց սկզբից դրսևորեց իր անսքող համակրանքը Ռուսաստանի նկատմամբ, իր բախտը կապեց նրա զենքի հաջողության հետ: Գերմանիան նախանձով էր հետևում ռուսներին տաժած հայերի հավատարմությանը: Ռուսաստանին այդ ազդակից զրկելու ձգտումն էր ընկած հայերին տեղահանելու գերմանական ծրագրի հիմքում: Գերմանիան թուրքական ջարդարներին համարում էր իրենց հավատարիմ գործակիցն ու համախոհը:

Հարկ է նշել, որ արևմտահայ առևտրական բուրժուազիան, դրամատերերն ու արդյունաբերողները, շնորհիվ իրենց տաղանդի ու ձեռներեցության, նույնիսկ Օսմանյան բռնատիրության կամայականությունների պայմաններում կարողացել էին տեղ դառնալ որոշակի հարստության և ստեղծել դրամական զգալի կուտակումներ: Ուստի և հայերի տնտեսական հզորացման մեջ մեծ վտանգ տեսնելով՝ երիտթուրքերն իրենց գաղտնի ժողովներում քննարկում էին հայերի վերացումով նրանց տնտեսական մրցակցությունից ազատվելու, երկրում թուրքերի տնտեսական իշխանությունը հաստատելու առնչվող հարցեր և միևնույն ժամանակ միջոցառումներ մշակում՝ հայ ժողովրդի անհատական և հավաքական ունեցվածքի բռնագրավման վերաբեր-

յալ: Ուստի ներկայիս թուրքիայի Հանրապետությունը պետք է կրի նյութական պատասխանատվություն: Քանի որ այն որպես պետություն կայացել է հայ ժողովրդի՝ հազարամյակների ընթացքում ստեղծած հարստության հաշվին:

Նախանձի և ազահության զգացումից դրդված՝ նրանք անգթորեն կոտորեցին և ոչնչացրին հայերին՝ ելնելով քաղաքական, տնտեսական և կրոնական դրդապատճառներից: Սակայն թուրք-գերմանական դաշինքը առաջ քաշեց անհանդուրժողականության մեկ այլ տեսակ՝ ռասսայական ստերիոտիպի գաղափարը:

Գերմանիայի ռազմական ղեկավար շրջանում շատերը՝ հայերին համարում էին «թերաբժեք» ռասսա, որը խոչընդոտում էր Գերմանիային իր ծրագրերը թուրքիայում իրագործելու համար: Գերմանացիների կողմից առաջ քաշված այդ վարկածները առաջ բերեցին տեսակետներ և ընդգծված գաղափարախոսական ձևավորում Գերմանիայի քաղաքական շրջաններում, որը բխեցվում էր Գերմանիայի աշխարհաքաղաքական շահերից:

Էվալդ Բասեն եզրակացրեց, որ հայ ժողովուրդը պետք է վերացվի աշխարհի երեսից:

Թույլ ազգերը պետք է հանձնվեն, իսկ հայերը ինն անգամ ավելի վատն են, քան հրեաները, ասում էր Բրոնսարդ Ֆոն Շելենդորֆը թուրք զորահրամանատարի Գերմանիայի գլխավոր խորհրդակցանքը:

Գերմանիայի կողմից ձևավորվեց ռասսայական ստերիոտիպի այն տեսակետը, ըստ որի հայերն արևելքի հրեաներն են և քամում են Օսմանյան տնտեսության արյունը, ինչպես որ նույն բանի համար Գերմանիայում հրեաներին էին մեղադրում: Գերմանիայի սպա Քորը, որն իր տեսակետներով հակասեմիտական է, ընդունեց այն գաղափարը, որ հայը վատն է: Քանի որ 1915թ. եղեռնը մեծ տերությունների թողնված թանկարժեքն էր: Գերմանիայի քաղաքականությանը՝ 2-րդ համաշխարհային պատերազմին, և որի արդյունքն էլ եղավ հրեաների հոլոքոստը: Տեղին է մեջբերել Հիտլերի խոսքերը. «Ո՛վ է այսօր ինչու հայերի ցեղասպանու-

ՀԻՇՈՒՄ ԵՄ ԵՎ ՊԱՇԱՆՋՈՒՄ

թյունը»:

Եվրոպացի և ամերիկացի միսիոներները ջարդերի վկաներն էին: Ամերիկացի բժիշկ միսիոներ Թեյսի Ադքինսոն իր օրագրի 1915թ. հուլիսի 10-ի էջում գրել է. «Ո՞վ էր պատասխանատու թուրքիայում կատարվող ցեղասպանության համար՝ թե՛ հայերը, թե՛ թուրքերը, երևում է, շատ լավ գիտեին, որ այս ամենը գալիս է գերմանացիների կողմից»: Բոլորիս էր հայտնի, որ այսքան մշակված, լավ ծրագրված և կատարված գործը թուրքական մեթոդ չէ: Գերմանացին, թուրքը և սատանան եռամիության դաշինք էին կազմել՝ աշխարհում մնանը չունեցող սառնասիրտ ոճիրը իրագործելու համար:

Գերմանական ռազմավարական գիշատիչները միանգամայն համամիտ էին հարցի նմանօրինակ լուծմանը(այսինքն՝ հայերին բնաջնջելով): Այն ոչ միայն չէր հակասում իրենց ռազմական, քաղաքական ու տնտեսական պլաններին, այլև համապատասխանում էր Գերմանիայի հետապնդած նպատակների իրագործմանը:

Այդ էր պատճառը, որ կայգեր Վիլհելմ 2-րդը Թալեթին պարզապես Սև արծվի շքանշանով: Գերմանիայի վարչապետ Բեթման Յոլվեզը պատերազմի առաջին տարեկիցի առթիվ Ռայխստագում արտասանած իր ճառում շնորհավորում էր գերմանացիներին, որ նրանք իրենց կողքին ունեն «վերածնված սքանչելի

Թուրքիա»:

Արևմտահայության բնաջնջումը Գերմանիայի կողմից դիտարկվում է որպես Թուրքիայի վերածնունդ: 1914թ. ամռանը Վանգեղանյանը գերմանական դեսպանատան հայազգի պաշտոնյային անթաքույց խոստովանել է. «Մենք՝ գերմանացիներս, ատում ենք հայերին»: Նա իր վերաբերմունքը պատճառաբանում էր նրանով, որ հայերը ռուսասեր են, որ հայկական բարձրակարգ ծառայում է Ռուսաստանի առաջխաղացմանը: Գերմանիայի արտաքին գործերի նախարար Յագովը գրում է. «Թող ոչնչանան բոլոր ժողովուրդները, միայն թե Գերմանիան Թուրքիայի հետ դաշնակցած հաջողության հասնի պատերազմի դաշտում»: Երբ գերմանական միլիտարիստ դիվանագետի հավատո հանձնակարգ:

Պատերազմները բոլոր ժամանակներում էլ ցավոք եղել և մնում են որոշ քաղաքական շրջանակների հարստացման աղբյուրը, և երիտթուրքական պարագլուխները դրանցից ոչնչով չէին տարբերվում, եթե ոչ գերազանցում:

1915թ. հունիսի 17-ին Գերմանիայի դեսպան Վանգեղանյանը, Բեռլինի տեղեկացնում է Թուրքիայի նպատակների մասին: Վանգեղանյանը մեջբերելով Թալեթի խոսքը, ասում է. «որ ցեղասպանությունը կատարվել է ռազմական նկատառումներով»:

Օսմանյան կառավարությունն օգտվում էր Առաջին համաշխարհային պատերազմի առիթից՝ հայերին վերացնելու համար: Այսպես 1915թ. հուլիսի 25-ին Ելեմեղորզը ստորագրեց իր բառերով ասած «Էմենի ահալին» հայ ժողովրդի տեղահանման ծրագիրը, այլ կերպ ասած՝ ոչ թե հատվածի կամ շրջանի, այլ ամբողջ ժողովրդի: Այդ հրամանում նա մեջբերում է թուրքերեն «շեղի դեբար», որը նշանակում է «կոտորած», դաժան միջոցներ:

Անդրադառնալով հայերի բնաջնջման իրական պատճառներին՝ Յոհաննես Լեփսիուսը վկայակոչում է Էմվերին, որն իր ներկայությամբ ասել էր, թե հայերի տեղահանությունը «ռազմավարական» բնույթի էր: Դա նշանակում է «Հայերին հեռացնել սահմանամերձ շրջաններից երկրի խորքերը, վնասագրծել ռազմական նշանակություն ունեցող ուղիները», քանի որ ըստ նրա՝ հայ զինվորների ու բնակչության միայն զինաթափումը վտանգը չէր վերացնում:

Որպեսզի «40 միլիոն թուրքերը ... ապահովվին իրենց ազգային կյանքը, հայերին պետք է այնպես ցրեին, որպեսզի ոչ մի տեղ մեծամասնություն չկազմեին»: Էմվերը Լեփսիուսին ասել է. «Եթե դուք կարողանայիք Լեհաստանը Պրուսիա դարձնել, այդպես չէիք վարվի: Դուք այլևս այդ անել չեք կարող, իսկ մենք կարող ենք»: Յեղի Սորգենթաունը Թալեթին առաջարկում է

թույլ տալ Միացյալ Նահանգներ տեղափոխել մեկ միլիոն հայ, վերջինս հարցնում է Էմվերի կարծիքը. «Այդ դեպքում կտեղափոխվեն հարուստները, իսկ տեղում կմնան աղքատները»: Լեփսիուսը եզրակացնում է, որ երիտթուրքերի հայաջինջ քաղաքականության նպատակներից մեկն էլ «ունևոր հայերի ծրագրված բալանն էր»: Հայկական ջարդերի պատճառ է համարվում նաև այն, որ երիտթուրքական վերնախավը ձգտում էր հարստանալ հայերի ունեցվածքի հաշվին: Դեռ 1912 թ-ին Տրապիզոնում Գերմանիայի հյուպատոս Բ.Պ. Թեքսիոնը գրել է. «...Երիտթուրքերի գրեթե բոլոր առաջնորդների գլխավոր ձգտումն էր ամենապես հարստանալ»:

Հայերի բնաջնջման ծրագրի իրագործման մեջ Գերմանիայի անմիջական մասնակցության ու հետևողական գործելակերպի փաստը տասնամյակներ շարունակ սև շղարշի տակ է առվել: Սակայն աշխարհաքաղաքական հարափոփոխ պայմաններում 2005թ. Գերմանիայի Բունդեսթագը ընդունեց բանաձև Օսմանյան Թուրքիայում 1915թ. տեղի ունեցած ոճրագործության մասին՝ այն որակելով ցեղասպանություն:

Պատերազմի Վերջին Գիշատիչները
Ստեփ. Վ. Զհանգիրյանի անվան հ. 11
ավագ դպրոց, 11 հ. 2 դաս. աշակերտուհի

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԵՏՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՌԱՍԻՉՄԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ



Հայերի դեռ 1915-23 թթ. իրականացված ցեղասպանության ժխտումը թուրքական իշխանությունների կողմից սկսվել է հանցագործությունից անմիջապես հետո: Չնայած Հայոց ցեղասպանության իրողության վերաբերյալ բազմաթիվ փաստերի առկայությանը՝ թուրքական իշխանությունների կողմից ժխտողականությունը շարունակվում է մինչև այսօր:

Ժխտողական քաղաքականությունն իրականացվում է երկու հիմնական ուղղություններով՝ արտաքին քաղաքականության և ակադեմիական շրջանակների միջոցով, որոնք անմիջականորեն ֆինանսավորվում են կառավարության կողմից: Արտաքին քաղաքականության բնագավառում թուրքական իշխանություններն իրենց առջև հստակ նպատակ են դրել վերափոխել պատմությունը և վերահսկել Թուրքիայի ապագան(3): Իսկ ակադեմիական շրջանակները քաղաքագետների համար գիտական հարթակ են նախապատրաստում՝ Հայոց ցեղասպանության մերժման վերաբերյալ պնդումներն առաջ մղելու համար:

Թուրքիան ջարդերը սկսելուց հետո ամեն ինչ արեց, որպեսզի ջարդերի մասին տեղեկությունները չհասնեն միջազգային հանրության ականջին: Եթե Անտանտի երկրները, որոնք մեջ էր Թուրքիան, այսպիսի անտարբերություն ցուցաբերեցին, ապա հասկանալի է, թե ինչպիսի վերաբերմունք պիտի ցուցաբերեին, Թուրքիայի դաշնակիցները՝ ի դեմս Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի և Իտալիայի: 1915թ. Հունիսին Կ.Պոլսի Գերմանական դեսպանությունը դիվանագիտական ու քաղաքական նկատառումներով պաշտոնական բողոք-հուշագիր ներկայացրեց Թուրքական կառավարությանը հայկական կոտորածների առթիվ, իսկ Ավստրո-Հունգարիան, Իտալիան և Բուլղարիան ընդհանրապես չդատապարտեցին արևմտահայերի զանգվածային կոտորածները: Սակայն Գերմանիայի այս քայլը ձևականություն էր: Գերմանիան տեղյակ էր երիտթուրքերի ծրագրերին և հավանություն էր տալիս դրանց: Նա Թուրքիայում տեղի ունեցող իրադարձություններին հետևում էր այնտեղ գտնվող իր դիվանագիտական ներկայացուցիչների միջոցով: Գերմանիան ուներ իր շահերը, որոնք ուղղակի կապված էին հայերի հետ: Թուրքիայի մյուս

դաշնակից երկրները՝ Իտալիան և Բուլղարիան և Հայկական հարցում որդեգրեցին զգուշավոր քաղաքականություն: Նրանք նույնպես չբողոքեցին Թուրքիայի հանցավոր քաղաքականության դեմ: Այս երկու երկրներն էլ Թուրքիայում ունեին հյուպատոսներ, որոնք միջոցով լիովին տեղեկանում էին հայերի տեղահանությունների և ջարդերի մասին, սակայն պահպանեցին քար լռություն: Ռուսական հասարակական շրջանակները և լիովին ծանոթ էին Թուրքիայում հայերի հանդեպ իրականացվող հալածանքներին: Նրանք այդ ամենի մասին իմանում էին իրենց դեսպանների միջոցով: Հետագայում ռուս առաջադեմ թերթերը, մտավորականությունը հանդես եկան թուրքական ստոր քաղաքականության դատապարտմամբ: Ինչպես ժամանակը ցույց տվեց, մեծ տերությունները սեփական շահերի համար պատրաստ էին մոռանալ իրենց կողք դաշնակից Հայաստանին և սեղմել արյունով թաթախված հին ու նոր թուրքերի ձեռքը:

Հաշվի առնելով առկա աշխարհաքաղաքական անհամատեղելիությունները և դրանից բխող Թուրքիայի ժխտողական կեցվածքը՝ տեղին ենք համարում նորկայացնել մյուսին առնչվող 2 կարևորագույն կետեր՝ ցեղասպանության ժխտումը որպես գործողության վերջին փուլ և ցեղասպանության ժխտումը որպես ռասիզմի դրսևորում:

Ըստ Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության նախկին նախագահ Գ. Ստենթոնի՝ ցեղասպանությունը մեկանգամյա գործողություն չէ, այլ շարունակական գործընթաց, որը բաղկացած է 8 փուլից՝ դասակարգում, սիմվոլացում (խորհրդանշում), դեհումանիզացիա (ապամարդկայանացում), կազմակերպում, բևեռացում, նախապատրաստում, բնաջնջում և ժխտում: Ժխտումը ցեղասպանության 8-րդ փուլն է, որը «մշտապես հաջորդում է յուրաքանչյուր ցեղասպանության»(7): Գիտնականների մի ստվար զանգված կարծում է, որ հայտնի ցեղասպանությունների ծրագրված ժխտումը վտանգավոր գործողություն է և պետք է հավասարեցվի իրական ցեղասպանության անմիջական կամ ոչ անմիջական աջակցության հետ: Թուրքական կառավարության ժխտողական քաղաքականությունը հանգեցնում է հայ ազգաբնակչության հանդեպ նոր բռնությունների: Ժխտողականության յուրաքանչյուր դրսևորում նպաստում է հայատյացության՝ որպես ռասիզմի արմատացմանը Թուրքիայում: Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ իրականացվող հակահայկական բողոքի ցույցերը Թուրքիայում

և աշխարհի մյուս վայրերում ակնհայտորեն մատնանշում են հայերի դեմ առկա թշնամությունը: Աղբյուրների կողմից հնարված այսպես կոչված հոջալուի «ցեղասպանության» տարեկիցի կապակցությամբ Թուրքիայում 2012թ. փետրվարի 26-ին տեղի ունեցած ակցիաները հայատյացության հստակ դրսևորում էին: Պատժներից շատերը հայերի դեմ բացահայտ բռնության կոչեր էին պարունակում. «Այսօր՝ Թաթախիմը, վաղը՝ Երևանը. մենք կհարձակվենք ձեր վրա հանկարծակի, գիշերով», «Արարատը կդառնա ձեր գերեզմանը», «Դուք բոլորը հայեր եք, բոլորը լիժվածքներ եք» և այլն: 2012թ. Ֆրանսիայի պառլամենտի կողմից Հայոց ցեղասպանությունը քրեականացնող օրինագծի ընդունումից հետո տարբեր երկրներում տեղի ունեցած բողոքի ակցիաները Թուրքիայի պատմության արյունալի էջերի հանդեպ հպարտության նոտաներ էին պարունակում, ինչը նույնպես ժխտողականության հերթական դրսևորում էր: Հայոց ցեղասպանության 100-ամյակի նախաշեմին այդ տրամադրություններն էլ ավելի են սրվում:

Ռասիզմը սահմանվում է որպես «Համոզմունք կամ նախապաշարունակ տվյալ ռասայի գերակայության վերաբերյալ՝ հիմնված այլ ռասաների հանդեպ թշնամանքի վրա»: Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի (ՌԱԵՀ) բացատրական ակտը մատնանշում է, որ ռասիզմը ներառում է նաև այնպիսի երևույթներ, ինչպիսին են՝ քսենոֆոբիան, հակասեմիթիզմը և անհանդուրժողականությունը: Միաժամանակ ակտը նշում է, որ ցուցակն ամբողջական ու վերջնական չէ: Նշված սահմանումները մեկ միասնական գաղափար են պարունակում, այն է՝ ատելությունը որոշակի խմբի նկատմամբ: Ցեղասպանության հանցագործությունը ներառում է ռասիզմի տարր, քանի որ, ինչպես մատնանշված է սահմանման մեջ, այն ուղղված է որոշակի ազգային, ռասայական, էթնիկական, կրոնական խմբի դեմ: Ցեղասպանության ժխտումը կրկին հանգեցնում է նրան, որ զոհերի խումբն առանձնացվում է, և տվյալ խմբի հանդեպ նախկին ատելությունն ու անցյալի ժխտման անհրաժեշտությունը կրկնապատկվում են նրանց հանդեպ թշնամանքը՝ որակվելով որպես ռասիզմ: Այսօր մի շարք ազգային և միջազգային դատական որոշումներում Հոլոքոստի ժխտումը որակվում է որպես ռասիզմի դրսևորում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) որոշմամբ Հոլոքոստի ժխտումը «ռասայական խտրականության ամենալուրջ դրսևորումն է»: ՄԱԿ-ի Քաղաքացիա-

կան և քաղաքական իրավունքների կոնվենցիային կից Մարդու իրավունքների հանձնաժողովի պնդմամբ՝ Հոլոքոստի ժխտումը հակասեմիթիզմի տարածման կարևորագույն լծակ է(16): Չնայած նրան, որ հակասեմիթիզմի մասին տեղեկացվածության մակարդակը բավական բարձր է, հայատյացության հանդեպ հանդուրժողականությունը տարածված երևույթ է և «քաղաքական առումով ընդունելի է համարվում Հայոց ցեղասպանության ժխտումը»: Մինչդեռ Թուրքիայում հայատյացությունը բավական երկար տարիների պատմություն ու տեսական հիմք ունի: Ինչպես ասում էր թուրքական ազգայնական շարժման գաղափարախոսներից մեկը՝ Դոկտոր Նազըմը. «անհրաժեշտ է ոչնչացնել հայ ազգը ամբողջությամբ, այնպես որ ոչ մի հայ երկրագործի վրա չմնա, և Հայաստան կոչված գաղափարը վերանա»: Չնայած Հոլոքոստի հետ առկա բազմաթիվ մտադրությունների՝ Հայոց ցեղասպանության ժխտումն ավելի վտանգավոր ու խտրական է, քանի որ, ի տարբերություն իրենց ցեղասպանության, Հայոց ցեղասպանությունը չի ճանաչվել այն իրականացրած պետության՝ Թուրքիայի կողմից: Ավելին, Թուրքիան շարունակում է եռանդուն կերպով ժխտել ցեղասպանության իրողությունը, ինչը հիմք է ծառայում հայերի հանդեպ ատելության ու թշնամանքի ուժեղացմանը: Յուրաքանչյուր ոք, ով փորձում է Թուրքիայում բարձրացնել հայկական խնդիրը, հետապնդվում է քրեական օրենսգրքի 301 հոդվածով՝ մեղադրվելով «թուրք ժողովրդին վիրավորելու» մեջ(19): Թուրքական իշխանությունների ժխտողական քաղաքականությունն ավելի է սրում թուրք հասարակության մեջ հակահայկական տրամադրությունները, ինչի վրա օրինակներից է «Ակոս» թերթի խմբագիր Ջրանտ Դինքի սպանությունը, ինչին հետևեցին հետագա բռնությունների կոչեր պարունակող ակցիաներ. «Գորշ գայլերն այս տեղ են, որտե՞ղ են Հրանտները»:

Այսպիսով, ցեղասպանության ժխտումը ռասիզմի և ռասայական խտրականության ձև է, ինչը պատժելի է ինչպես ներպետական որոշ օրենսդրություններում, այնպես էլ միջազգային իրավունքի որոշակի դրույթներով ու նորմերով: Հետևաբար, Հայոց ցեղասպանության ժխտումը, որը նույնպես ներառում է ռասիզմի տարրեր, պատժելի է միջազգային իրավունքի տեսանկյունից:

Մարինե ՀԱՎՈՐԱՆՅԱՆ
Ստեփ. Վ. Զհանգիրյանի անվան հ. 11
ավագ դպրոց, 11 բն.3 դաս. աշակերտուհի

ՀԻՇՈՒՄ ԵՄ ԵՎ ՊԱՆԱՆՁՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԹՈՒՐԵԻԱՅՈՒՄ՝ ՍԿԱՍԾ 1890-ԱՎԱՆՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ



Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին բնակչության տեսակարար կշռի տեսանկյունից ոչ մի ժողովուրդ չկրեց այնպիսի խոշոր կորուստներ, ինչպիսին հայերը: 1915 թվականին հայ ժողովուրդը ենթարկվեց աշխարհում առաջին կամքամտածված ցեղասպանությանը՝ զենցիցիի, որը մարդկության դեմ ուղղված ամենամեծ հանցագործությունն է: Շուրջ 1.5 մլն հայեր տեղահանվեցին իրենց բնօրրաններից և դաժանաբար կոտորվեցին:

Ըստ իրավագետ Ռաֆայել Լեմկինի՝ ցեղասպանությունը ոչ միայն ազգային կամ կրոնական խմբի վերացումն է՝ նրա ֆիզիկական բնաջնջման միջոցով, այլև նրա ազգային-հոգևոր մշակույթի վերացումն է, որը մշակութային ցեղասպանություն է:

Մշակութային ցեղասպանությունը, այն է՝ Սպիտակ ցեղասպանությունը որևէ ժողովրդի կամ էթնիկ խմբի պատմամշակութային հուշարձանների, հոգևոր արժեքների և ազգային մշակույթի այլ տարրերի ոչնչացումը կամ յուրացումն է: Այն համարվում է մարդկության դեմ իրականացված ոճիռ:

Հայկական մշակութային ժառանգության ոչնչացումը Արևմտյան Հայաստանում և Թուրքիայում կրել է շարունակական բնույթ և յուրօրինակ կապող ռոլն է հանդիսացել, ինչպես սուլթանական, երիտթուրքական, այնպես էլ քեմալա-հանրապետական վարչակարգերի միջև՝ հայկական հարցի լուծմանն ուղղված քաղաքականության մշակման գործում:

Օսմանյան կայսրությունում հայկական մշակութային արժեքների ոչնչացումը սկիզբ է առել դեռևս 16-17-րդ դարերում և ժառանգվելով հետագա իշխանությունների կողմից՝ շարունակվում է մինչև մեր օրերը: Սակայն եթե սկզբնական շրջանում այդ արժեքների ոչնչացումը համատարած կամ զանգվածային բնույթ չի կրել, ապա 19-րդ դարի վերջից սկսած և հատկապես ողջ 20-րդ դարի ընթացքում գրանցվել է հայկական մշակութային ժառանգության զանգվածային, կանխամտածված ոչնչացում, որը հայերի դեմ իրագործված ցեղասպանական ծրագրի մաս է կազմում:

Պատմական տարբեր ժամանակահատվածներում թուրքական վերոնշյալ վարչակարգերի կողմից հայկական մշակույթի ոչնչացմանն ուղղված բոլոր դրսևորումներն համապատասխանում են ՄԱԿ-ում դեռևս 1948թ. դեկտեմբերի 9-ին ընդունված «Ցեղասպանության հանցագործության կանխման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի նախնական տարբերակում ընդգրկված մշակութային ցեղասպանությունը բնորոշող սահմանումների:

Օսմանյան կայսրությունում, ապա նաև Թուրքիայի Հանրապետությունում հայկական մշակութային ժառանգության ոչնչացման ողջ գործընթացը պայմանակարգերով կարելի է բաժանել երեք փուլի՝

Առաջին փուլը ներառում է 16-րդ դարից մինչև 19-րդ դարի վերջը ընկած ժամանակահատվածը, երբ տեղի է ունեցել մշակույթի ոչ զանգվածային, տարբերային ոչնչացում: Այս փուլին բնորոշ ոչնչացման ընդգծված մեխանիզմը եկեղեցու փոխակերպումն է մզկիթի, որի մասին երբեմն վկայում են հենց թուրքական աղբյուրները: 17-րդ դարի թուրք պատմագիր-աշխարհագրագետ Քյաթիբե Չելեբին, իր «Ձիհան Նյունա» աշխատության մեջ նկարագրելով Բիթլիս քաղաքը, գրում է, որ իսլամական իշխողներն այս քաղաքում կառուցել են բազմաթիվ բարեգործական հիմնարկներ, այդ թվում՝ 4 մեծ ջամիներ (մզկիթներ), որոնցից մեկը նախապես հայկական եկեղեցի է եղել, սակայն քաղաքի գրավումից հետո վերածվել է մզկիթի և

հայտնի է «Կրզըլ Մեսջիտ» անունով:

Նմանատիպ հիշատակություններ առկա են նաև 17-րդ դարի թուրք ճանապարհորդ Էվլիյա Չելեբիի «Ուղեգրության» մեջ, որոնցից մեկում հեղինակը, բնութագրելով Վանի մզկիթները, գրում է. «Վերին բերդում կա Վանք-ջամի, որը վեհափառ Դավթի դարում կառուցված հնագույն տաճար է: Հետագայում, երբ վեհափառ Էրուբեթիլը եկել է այստեղ, այն մզկիթի է վերածել... 940 (1533) թվականին սուլթան Սուլեյմանը նորոգել ու ընդարձակել է այն և անվանել «Սուլթան Սուլեյման» ջամի», իսկ Բիթլիս քաղաքի «Վերին բերդի» մզկիթի նկարագրության մեջ հեղինակը նշում է, որ այն սկզբնապես եկեղեցի է եղել և մզկիթի է վերածվել սուլթան Էվհադ-Ուլլահի կողմից

Թուրք պատմագրի և ճանապարհորդի արժեքավոր այս վկայությունները փաստում են այն իրողության մասին, որ Օսմանյան կայսրությունում հայկական մշակութային ժառանգության, տվյալ դեպքում՝ հուշարձանների ոչնչացումն ունի ավելի խորը արմատներ:

Հայկական մշակույթի ոչնչացման երկրորդ փուլը ներառում է 1894-ից մինչև 1920-ական թվականների սկիզբը ընկած ժամանակահատվածը, երբ իրագործվեց արևմտահայ մշակութային ժառանգության զանգվածային ոչնչացում՝ հայերի ֆիզիկական բնաջնջումով: Այս փուլում, թերևս, միայն հոգևոր մշակույթի կորուստը հանդիսացող հայ մտավորականության ոչնչացումը՝ որպես մշակութային ցեղասպանության առանձին դրսևորում, պետք է դիտարկել ծրագրված մշակութային ցեղասպանության:

Մինչև 1920-ական թթ. մշակույթի արժեքների ոչնչացումն իրագործվել է ինչպես կանոնավոր բանակի, քրդական ու թուրքական զորաջոկատների, այնպես էլ հայերի ողջ ունեցվածքը, այդ թվում՝ մշակութային հարստության տեսանկյունից հատկապես հարազատ և կողոպտելու, յուրացնելու մոլուցքով տարված ժողովրդական զանգվածների կողմից: Նրանց նպատակն էր մի կողմից՝ կառավարող շրջանների՝ թուրք հասարակության մեջ ներմուծած ատելությունը քրիստոնյաների, հատկապես հայերի հանդեպ, ինչն առավել մոլեռանդ էր դարձնում զանգվածների գործողությունները, մյուս կողմից՝ այդ գործողությունների բացարձակ ազատությունն ու անպատժելիությունը: Հայկական հոգևոր-մշակութային հաստատությունները, փաստորեն, ֆունկցիոնալ առումով թուրքական կողմից համար դիտվել են որպես նպատակահարմար միջոց՝ ցեղասպանական գործողություններ իրականացնելու համար: Մասնավորապես վանքերն օգտագործվել են որպես զինվորական և ոստիկանական հենակետեր՝ հարակից հայկական բնակավայրերի դեմ պատժիչ գործողություններ իրականացնելու համար: Վանքը կամ եկեղեցին վերածվել է նաև հավաքատեղիի՝ մի կողմից՝ զանգվածային սպանություն իրականացնելու կամ ողջակիզելու նպատակով, մյուս կողմից՝ բանտի՝ հայ տարագրյալներին և հատկապես կանանց այնտեղ արգելափակելու համար, ապա և պահեստավայրի՝ իսլամադավան բնակչության և իշխանությունների կողմից հայերի բռնագրավված ունեցվածքի կուտակման, բաշխման կամ հետագա թալանի համար:

Դա հաճախ ուղեկցվել է կոնկրետ խորհրդանշական գործողություններով՝ խաչի հանում, մուսուլման հոգևորականի կողմից եկեղեցու վերածումը մզկիթի, խաչի ու զանգի տապալում և նամազի կոչ զանգակատնից, սպանությունների, բռնաբարությունների խորհրդանշական գործողություններ հատկապես եկեղեցու բեմի վրա, որը կոչված էր էլ ավելի նսեմացնելու զոհ դարձած էթնիկ հանրության դավանական զգացմունքները:

Նույն կերպ սպանության գործողությունը կամ մարդկանց ողջակիզումը եկեղեցու ներսում ընկալվելով որպես սիմվոլիկ զոհաբերության ակցիա՝ կոչված էր խոր անարգանք հասցնելու տվյալ էթնիկ հանրության հոգևոր զգաց-

մունքներին ու ավանդույթներին: Եկեղեցու ներսում ողջակիզման օրինակները բազմաթիվ են հատկապես համիդյան՝ 1909թ. Ադանայի կոտորածների ընթացքում: Միայն այդ քաղաքում հրկիզված 6 եկեղեցիներից երկուսում՝ Սուրբ Ստեփանոսում և Սուրբ Աստվածածնում, ողջակիզվեցին այնտեղ ապաստանած շուրջ 3500 հայեր:

Հայկական մշակութային ժառանգության ոչնչացման երրորդ փուլը ներառում է 1920-ականներից մինչև մեր օրերը, երբ իրագործվեց այդ ժառանգության մնացյալ հատվածի ծրագրված ցեղասպանություն:

Հայոց ցեղասպանության իրագործումից հետո ժամանակի հրամայական էր դառնում բազմաթիվ հայաթափված գավառների վերաբնակեցման խնդիրը, ինչը լուծվեց Բալկաններից, Միջագետքից և այլ վայրերից տեղափոխված թուրքերի և իսլամադավան այլ ազգերի վերաբնակեցման պետական ծրագրի իրագործումով: Այս ծրագրի իրագործումն անմիջականորեն բախվում էր հայերի բնիկ լինելու հանգամանքն անընդհատ փաստող նյութական մշակույթի մնացորդների՝ դեռևս կանգուն կամ կիսավեր հայկական հնագույն հուշարձանների ներկայության հետ: Այս պահից սկսած՝ քեմալական վարչակարգը մշակեց և գործի դրեց հայերի մշակույթին առնչվող ցանկացած փաստի ոչնչացման պետական ծրագիրը, որի իրագործումով, փաստորեն, ամբողջացվեց Հայոց ցեղասպանության երիտթուրքական ծրագիրը:

Թուրքական կառավարության կողմից հայկական դարավոր հուշարձանները կանխամտածված և հետևողականորեն ոչնչացնելու առնչությամբ ուշագրավ է «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամ, թուրքական ազգային մեծ ժողովի պատգամավոր, Մուստաֆա Քեմալի խորհրդական Ռիզա Նուրի բեյի՝ 1921թ.-ի մայիսի 25-ի նամակը՝ ուղղված արևելյան ճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրին, ուր մասնավորապես ասվում էր. «Անի քաղաքի հուշարձանների մնացորդներն ու հետքերը պետք է ջնջվեն երկրագնդի երեսից: Դուք մեծ ծառայություն կանուցեք Թուրքիային՝ այդ նպատակն իրագործելով»:

Դեռևս 1920-ականներից կիրառվող հայկական մշակութային հուշարձանների անհետացման պետական ծրագիրն առավել ամբողջական ու համակարգված բնույթ կրեց 1940-1960-ական թվականներին, երբ Օսմանյան կայսրության նախնական տարածքներում և, մասնավորապես, Արևմտյան Հայաստանում աննախադեպ չափերի հասավ ոչնչացվող հուշարձանների թիվը: 1960-ական թթ. ոչնչացվեցին վաղ միջնադարյան և միջնադարյան հայկական այնպիսի հուշարձաններ, ինչպիսին են Տեկորի Սուրբ Երրորդություն (5-րդ դար) եկեղեցին, Բագրևանդի Սուրբ Հովհաննու եկեղեցին (631թ.), Խցկոնքի վանական համալիրը (9-11 դդ.) և տասնյակ այլ եկեղեցիներ:

Թուրքական վանդալիզմը այսպես կոչված չափավորապես արդեն իսկ կիսավեր հայկական եկեղեցիները, 1950-ական թթ. սկսած, ենթարկվեցին նոր ավերումների: Ճանապարհաշինության կամ այլ նկատառումներով տրակտորների օգնությամբ հայկական դարավոր հուշարձանների ավերման բազմաթիվ դեպքեր են արձանագրվել: Ֆրանսիացի ուսումնասիրող ժան Միշել Թիերին վկայում է, որ Թուրքիայում իր հերթական ուսումնասիրությունների ժամանակ ականատես է եղել, թե ինչպես են կառուցողական մեծ աշխատանքներն ավերման նոր պատճառներ դարձել: Նա, մասնավորապես, գրում է. - «Մենք ականատես եղանք, թե ինչպես Կապուտկոյի Սուրբ Հակոբ վանքը (11-րդ դար)՝ իր բարձրարժեք որմնակալներով, ավերվեց տրակտորով՝ ճանապարհը ընդարձակելու համար»:

Ուսումնասիրությունները փաստել են, որ 1970-1980-ական թթ. Արևմտյան Հայաստանի տարածքում հայկական մշակութային հուշարձանների ոչնչացման քաղաքականությունը

հետևողականորեն շարունակվել է: Այս շրջանում հայկական պատմաճարտարապետական հուշարձանները ոչնչացվել են գերազանցապես հետևյալ եղանակներով՝ Արևմտահայաստանի վանքերի ու եկեղեցիների, ինչպես, օրինակ՝ Վարազավանքի, Նարեկավանքի, Մշո Սուրբ Կարապետի սրբատաշ քարերով կառուցվել են գյուղական տներ՝ մինչև անգամ խաչքարերը, արձանագրությունները և զարդաքանդակներն արտաքին պատերում օգտագործելով որպես դեկորացիա, հայկական կրոնական շինությունները վերածվել են մզկիթների՝ համապատասխան վերածանումից հետո, օգտագործվել կենցաղային ու հասարակական ամենատարբեր նպատակներով՝ գոմեր, մարագներ, ֆերմաներ, բանտեր, մարզասրահներ, պարասրահներ, հասարակաց տներ, լավագույն դեպքում՝ թանգարաններ, ոչնչացվել են եկեղեցիների և վանքերի ինքնությունը փաստող արձանագրություններն ու սրբապատկերները:

Նույն ժամանակամիջոցում Թուրքիան ոչ միայն սահմանադրությամբ, այլև հուշարձանների պահպանմանն ու խնամքին վերաբերող միջազգային գործող պայմանագրերի ստորագրումով թեև պարտավորություններ է ստանձնել, որոնք վերաբերում են նաև ազգային փոքրամասնությունների մշակութային հուշարձանների պահպանությանը, այդուհանդերձ, կանխամտածված կերպով շարունակվել է իր տարածքի դեռևս կանգուն կամ կիսավեր հայկական հուշարձանների ոչնչացումը: Այսպես, Թուրքիայի 1961թ. հուլիսի 9-ի Սահմանադրության 50-րդ հոդվածի 5-րդ մասով պետությունը պարտավորվել է իրականացնել «պատմական ու մշակութային արժեք ներկայացնող ստեղծագործությունների և հուշարձանների պահպանությունը», սակայն այդ հոդվածը դեռ պետք է գործնականում կիրառվեր: 1965թ.-ին Թուրքիան ստորագրել է 1954թ.-ի Հաագայի կոնվենցիան, որտեղ շեշտը դրված է անկախ ծագումից մշակույթների պահպանման կարևորության վրա, և որով Թուրքիան պարտավորվել է պատերազմների ժամանակ պահպանել իր տարածքի մշակութային հուշարձանները:

Թուրքիան ստորագրել է նաև Եվրոպական խորհրդի կողմից կնքված 1985թ. հոկտեմբերի 3-ին Գրենադայում ստորագրված «Եվրոպական ճարտարապետական ժառանգության պահպանության կոնվենցիան», որը թեև Թուրքիան ստորագրեց նույն թվականին, սակայն նրա Ազգային մեծ ժողովի արտաքին գործոց հանձնաժողովի կողմից վավերացվեց միայն 1988թ. օգոստոսի 1-ին: Այդ կոնվենցիայի 3-րդ և 4-րդ հոդվածների համաձայն՝ կողմերը պարտավորվել են միջոցներ ձեռք առնել տվյալ տարածաշրջանի հուշարձանների, կառույցների համալիրների և տեսարժան վայրերի պահպանության համար, կանխել պահպանության տակ եղած անշարժ գույքի փչացումը, քայքայումը կամ ոչնչացումը: Նշյալ պարտավորությունները միայն փոքր մասն են կազմում այն մի շարք պարտավորությունների, որոնք Թուրքիան թեև ստանձնել է, սակայն գործնականում անգամ չի փորձել կիրառել:

Այսպիսով գիտակցելով եկեղեցու և հավատի դերը այն ժողովրդի կյանքում՝ թուրքական կառավարությունը նպատակամղված սպանել է հայ հոգևորականներին, ոչնչացրել եկեղեցիներն ու վանքերը, հազարավոր միջնադարյան ձեռագիր մատյաններ, զավթել եկեղեցական գույքը:

Բազմաթիվ փաստեր վկայում են, որ Օսմանյան կայսրությունում հայ բնակչության զանգվածային կոտորածների ու տեղահանությանը հանընթաց երիտթուրքական կառավարությունը կանխամտածված և ծրագրավորված կերպով ձգտել է ոչնչացնել նաև հայկական քաղաքակրթության նյութական վկայությունները:

Աննա ԳՐԻԳՈՐՅԱՆ
Սյրեպի Վ. Զինագիրյանի անվան հ. 11
ավագ դպրոց, 11 հ. 1 դաս. աշակերպ

ՀԻՇՈՒՄ ԵՄ ԵՎ ՊԱՐԱՆՁՈՒՄ

Ների անգլերենի ուսուցչուհի

ՄԵԾ ԵՂԵՆԻ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ

Ինչպես չողբալ, ինչպես չարտասովել, 21-ը որ մայր ես դու, իմ մայր Հայաստան, Որդիքդ տարան, ամենտ կորցրին, Իսկ հիմա կանգնած ասում եմ՝ չկա... Զկա, չի եղել կուտորածը մեր, Զի եղել եղեռն, ոճրագործություն, Բայց միլիոն ու կես հայ է մահացել թուրքի անհիճալ անապատներում: Այդքանից հետո ինչպես չխոսել, Ինչպես չհիշել կուտորածը մեր, Երզրունի, Վանի, Դիարբեքի, Մուշի, Սասունի և Աղանայի: Մի դար է անցել այն օրից ի վեր, Ինչ կատարվել է Դեր Ձորում անտեր, Բայց հիշում է դեռ ժողովուրդը մեր Եղեռնի թողած զոհերին անմեռ: Ու թեկուզ հարյուր հազար դար անցնի, Մայր Հայաստանը ընդմիշտ կհիշի, Ամեն զոհերին, իր որդիներին, Տմարդի թուրքի մարդասպաններին:

ՔԵԶ ԻՆՉՊԵՍ ՆԵՐԵՄ

Երբ մայրում եմ ես աշխարհով ցոված Միլիոն հայերին՝ Ինչպե՞ս ներեմ քեզ: Ինչպե՞ս ներեմ քեզ մեկ ու կես միլիոն Հայերի կողմից, Որ ձեռք-ձեռք տված՝ ժայռիվեր ընկած, Փոփոքաբաշ Երասխ, արյունով ներկված, Ու Դեր-Ձորում էլ՝ գանգեր դես ու դեն, Կարծրացած կմախք՝ քեզ ինչպես ներեմ: Ու դեռ այսօր էլ ճիշտ շարունակվող Գործոյա եղեռն, Կացնահարված հայ, ու մեր Հրամտ Դիմք: Քեզ ինչպե՞ս ներեմ, թեկուզ 100 տարի ես: Կներեմ միայն՝ 24 ապրիլով: Խոստովանություն, որ այդ դու ունես: Աշխարհի առջև երեսդ պարզես, Ցեղասպանություն դու ինքդ կոչես ու վերջը դնես: Քեզ ինքդ ներես:

ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԷԼ ԶԻ ԼՈՒ

Տարիները հայոց վշտի Կուտակվեցին դարձան մի դար, Վերքի վրա ամեն հայի Անմոռուկներ աշխարհ եկան: Հեռու հեռվից մեր հուշերի Պատմությունն ենք նորից թերթում Աչքի առաջ քար աշխարհի Տեսնում ոնց էր ոճիր գործվում: Եվ պատմության սև էջերում Տեսնում Դեր Ձորն արյունաբերու, Մայր Արաքսի ալիքներում Խեղդվող մարդկանց ճիչն ահարկու: Այսօր էլի լուռ են մնում, Կարծես ոչինչ չի էլ եղել, Արդարության ծայրն այս դարում Պետք է հզոր հնչեցնել: Ի՞նչ է արել ազգս, Աստված հաշված ձեռքերն էր այնքան պարզել, Աստված կանչել գետնին ընկած Ու խոշտանգված հույս աղերսել: Զար աշխարհի մահն դու էլ Աչք փակեցիր ու չօգնեցիր, Ինչքան հայի արյուն թափվեց, Եվ ինչքան հայ մի կերպ փրկվեց: Փրկվեց, պոկվեց իր հող, տնից Եվ տարագիր կռունկ դարձավ,

Օտար երկրում բույնը հյուսեց Բայց տեսածը չմոռացավ: Ո՛վ դու, աշխարհ, քար ու անգութ Անցած դարի դու ոճիրին, Ականատես դարձած, բայց լուռ Խիղճը կորցրած, ծախված չարին: Զես ուզում, որ ազնվորեն Պատմես եղածը, արդար դատես, Հարյուր տարվա տարելիցին Եղեռնն հայոց արդ ճանաչես: Ինչո՞ւ եք լուռ, փաստերն անգամ Զեր դեմ խոսում ու չեն ստում, Մահից փրկված հայն է խոսում Արխիվներն են շատ բան ասում: Տեր իմ Աստված, ի՞նչ եք ուզում, Եղածը քիչ է, լուռ եք մնում Եվ թողնում եք մեր օրերում թուրքն իր կեղտոտ գործը անի: Հայի հանդեպ դավեր Եյուրում Սահման պահող հայ զինվորի, Երբ իր պարտքն է սուրբ կատարում, Մատաղ կյանքը անխիղճ խլում: Ինչ էլ լինի, բավ է արդեն, Արդարությունը էլ չի լռի, Թող բոլորը քաջ գիտակցեն Հայը հաղթող միշտ կլինի:

Ամա ԲԱՐԿԱՍԱՐՅԱՆ Սզնեքի եւ Կարմիր գյուղի դպրոց-

Զ.Սարգսյան Մանկավարժ

Ֆլորա ՎԱՍՊԱՐՅԱՆ Ասկերանի 2րդ. Ասրիաշենի ժամ Անդրանի անվան միջն. դպրոցի

ԼԻ ԿՃՈՒԿԱՆՈՒԹՅԱՄ

Կրկին մարդաշատ էր Ասկերանի Վերածննդի հրապարակը, որտեղից մեկնարկել էր 1988-ի մեր ազգային շարժման ամրակուռ ոգին:

Այստեղ էին Ասկերանի շրջանի դպրոցների բարձր դասարանների աշակերտները, ուսուցիչները, շրջկենտրոնի ղեկավար մարմիններն ու աշխատողները: Համարակալի մասնակիցները եկել էին ոգեկոչելու և հարգանքի տուրք մատուցելու 1,5 միլիոն անմեռ նահատակների հիշատակին՝ հատուկ պատանուներով՝ «Մենք հիշում ենք», «Արդար հատուցում», «Հայոց ցեղասպանությունը մարդկության ամենամեծ անոթն է», «Մենք պահանջատեր ենք», Հայոց ցեղասպանությունն ընդունած պետությունների դրոշմներով, անմոռուկներով ու մոմերով: Բացման խոսքով հանդես եկավ Ասկերանի շրջվարչակազմի աշխատակազմի ղեկավար Արթուր Մելքունյանը: Քաղաքապետ Ալյոշա Գաբրիելյանը, իր խոսքում ներկաներին մեկ անգամ ևս հիշեցնելով, որ հայ ժողովրդի տեղահանության, բնաջնջման, կրթամշակութային արժեքների ոչնչացման՝ դարավոր մեր ոսղիսի նախապես համակարգված ծրագիրը ոչ միայն չարդարացավ, այլև յաթարհանից փրկված թեկորները, որ սփռվել էին աշխարհով մեկ, ավելի ուժեղ ու տոկուն գտնվեցին՝ դիմակայելու ճակատագրի քմահաճույքներին ու

պարտադրանքներին: Ամեն տեղ հայ ու Հայաստան դարձան՝ ապացուցելով աշխարհին, որ երբ մի ազգ չի ուզում մեռնել, նրան սպանելն անհնար է:

Այդպես արարեցին ու երկիր մոլորակի վրա ստեղծեցին Հայկական մեծ



սփյուռքը, որով աշխարհի առաջադեմ մարդկությունը հպարտանալու և հիանալու շատ բան ունի:

Քաղաքապետը հիշեցրեց, որ հենց այդ հրապարակից է սկսվել մեր ազգային զարթոնքը, այդտեղ են կռվել ու կռվել մեր միասնականությունը, համախմբվածությունն ու կամքը: Ուրեմն՝ հավատարիմ լինենք մեր գաղափարներին և շարունակենք պայքարը մինչև վերջնական հանգրվան:

Ելույթներով հանդես եկան Նախիջևանի միջնակարգ դպրոցի պատ-

մության ուսուցիչ Արեն Սարուխանյանը, Ասկերանի միջնակարգի աշակերտուհի Ալյոնա Բաղդասարյանը, պատմաեթնոգիտական բանգարանի տնօրեն Վիգեն Գաբրիելյանը, որն իր խոսքում ընդգծեց ամենակարևորը. «Երբ մենք միասին ենք ու համախմբված, կյանքի են կոչվում մեր բոլոր գաղափարները: Հարգելով մեր սուրբ նահատակների հիշատակը՝ գիտակցենք, որ անելիքներ դեռ շատ ունենք, որոնց մեջ գերագույն նպատակը լինելու է հատուցումը՝ դրանից բխող միացյալ Հայաստան հայրենիքի հաստատումով: Ուրեմն՝ առաջ, ոչ մի քայլ ետ...»:

Այնուհետև Ասկերանի մշակույթի տան աշխատող Նինել Գաբրիելյանը ներկաներին տպավորեց իր ասմունքով:

Անընդհատ տեղացող անձրևը չխանգարեց հանրահավաքի մասնակիցներին՝ կատարելու իրենց սրբազան առաքելությունը. հոսեց ու ձգվեց ջահերը հրապարակից մինչև Մայրաբերդ՝ վանկարկումներով ու կուռ տրամաբանությամբ:

Մայրաբերդում էլ տեղի ունեցավ 20.15-ին նախատեսված լռության րոպեն, որով էլ ավարտվեց միջոցառումը:

Մեր երիտասարդությունն արդեն հասկացել է, որ Արցախյան սուրբ պատերազմի գաղափարը շարունակողներն ու վերջնական նպատակին հասցնողներն իրենք են լինելու:

Սուրբյա ՂԱԶԱՐՅԱՆ

ԼԻՆԵՆՔ ՊԱՐԱՆՁԱՏԵՐ

Ապրիլի 22-ին «Հիշում են և պահանջում» խորագրով Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառում էր կազմակերպվել Ստեփանակերտի հ 6 հիմնական դպրոցում: Դա Հայոց մեծ եղեռնին նվիրված հերթական միջոցառումն էր՝ նախապես կազմված ժամանակացույցով. միջոցառումներ էին կազմակերպվել և անցկացրել դպրոցի հայոց լեզվի և գրականության բոլոր ուսուցիչները. Ռ. Մելքունյանը՝ բաց դաս՝ Մ. Գալշոյանի «Կռունկը», Ս. Ստեփանյանը՝ «Դ. Վարուժան» թեմայով գրական-գեղարվեստական ցերեկույթ, Ա. Տոնյանը՝ «Եղեռնագրի գրողներ» թեմայով դասախոսություն:



Նախ ելույթ ունեցավ միջոցառման կազմակերպիչ, դպրոցի պատմության ուսուցչուհի Վ. Ավետիսյանը, որն անդրադարձավ Հայոց ցեղասպանության պատմությանը. «Յուրաքանչյուր ոճրագործություն, անշուշտ, արժանի է իր օրինական դատաստանին, հատկապես երբ այն իրագործվել է ոչ թե մեկ մարդու, այլ մի ամբողջ ժողովրդի հանդեպ, իրագործվել է ամենավայրագ ու մարդկային երևակայությունից դուրս ձևերով: Նման ոճրագործությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ ցեղասպանություն: Ցեղասպանություն ասված ասելի համար անչափ կարևոր է իր հանդեպ գործած հանցանքի ճանաչումը, հատկապես այն երկրի կողմից, ում ձեռքով իրականացվել է: Հայերիս համար «ցեղասպանություն» եզրույթը 100 և ավելի տարիների վաղեմություն ունի, քանզի տարբեր պատմական ժամանակներում հայերի ջարդ իրականացրած թուրքիան շարունակում է մնալ անդատաստան»:

Միջոցառումը կազմակերպվել էր նախատեսված, որտեղ ներկայացված էին 8-րդ դասարանի աշակերտների պատրաստած գործնական աշխատանքները՝ նվիրված Մեծ եղեռնին, Ծիծեռնակաբերդի մանրակերտը՝ անմար կրակով և այն երկրների դրոշմները, որոնք ընդունել են այդ ոճրագործությունը:

Աշակերտները «Հայր մեր» աղոթքով սկսեցին իրենց խոսքը, ասմունքի ու երգի միջոցով արտահայտեցին իրենց բողոքը մեծ եղեռնագործության հանդեպ և պահանջեցին արդարադատություն հայերի նկատմամբ: Եվ երդվեցին մշտապես պահել հայ նահատակների հիշատակը ու պահանջատեր լինել Հայ Դատի արդարացի լուծմանը:

Ա. ՏՈՆՅԱՆ Սրբեկ. հ. 6 հիմն. դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի

ԱՆՆԱՐ Է ՄՈՌԱՆԱԼ

Ապրիլի 24-ին բազմամարդ էր խնուշինակի ակունքը: Մեծ թե փոքր հավաքվել էին դահլիճում՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու 1,5 միլիոն անմեռ նահատակների հիշատակին:

Հուզված էին երեխաները, հուզված էր միջոցառման կազմակերպիչ ուսուցչուհին՝ Գայանե Արիբաբայանը:

«Դէջ յամանի» տխուր ելևէջների ներքո մթին դահլիճում մոմերի թրթռում լույսի տակ ցերեկույթի մասնակիցները սկսեցին արտասանել հատվածներ Պ. Սևակի «Անլռելի...»-ից, Հ. Շիրազի «Հայոց դանթեական»-ից, Սիամանթոյի, Դ. Վարուժանի բանաստեղծություններից:

Գայանե Արիբաբայանի արտահայտիչ արտասանությունը հուզեց շատերին, նրանք մտովի տեղափոխվեցին Արևմտյան Հայաստան, տեսան մեր շեն քաղաքների ու գյուղերի ավերումն ու թալանը, միլիոնավոր կանանց ու աղջիկների լլկանքն ու անարգումը, որք մանուկների անպաշտպան քարավանը, սիրիական անապատներում սովից ու ծարավից տոչորվող մարդկանց:

Դ. Վարուժանի, Գ. Ջոհրապի, Սիամանթոյի, Ռ. Սևակի նկարները մեզ էին նայում և ասում. «Անհնար է մոռանալ 1915 թ. ոճիրը, դառնալ բնավեր հավք, սփռվել ողջ աշխարհում, մեր դրախտ երկիրը թողնել արմախում թուրքի բերանում...»:

1895թ. սուլթան Համիդի ջարդերին ակամատես դարձած Վարուժանն ու Սիամանթոն չէին պատկերացնում, որ «արյան

բաղնիքներ սարքած, սուլթանից ավելի վայրագ կլինեին երիտթուրքերը՝ իրենց կեղծ ազատության և հավասարության» կարգախոսներով:

Երեխաների տխուր երգերը՝ «Աղանա», «Կլիկիա», իսկ այնուհետ «Հայաստան» պայծառ երգը ցույց տվին, որ հայն այլևս զոհի դերում չէ, այլ պահանջատերի:

Վաղ թե ուշ՝ պետք է մերը լինեն Մասիսն ու Վանը, Կարինն ու Մուշը...

Թուրքը և նրան սատարող պետությունները չեն ուզում ընդունել Հայոց ցեղասպանությունը: Բայց թուրքիայում կան ազնիվ մարդիկ, որոնք ուզում են առերեսվել իրենց պատմության հետ, ընդունել պատմական ճշմարտությունը:

Գ. Արիբաբայանը միշտ էլ հետաքրքիր միջոցառումներ, հուշ-ցերեկույթներ է կազմակերպում դպրոցում:

Հաճելի է, որ երիտասարդ մասնագետները շարունակում են ավագների բարի ավանդույթները և անում են ամեն ինչ, որ նոր սերունդը ստանա հայեցի դաստիարակություն, որ Գործոյա արմեններն իրենց կյանքով պաշտպանեն հող հայրենին, ոչ մի թիզ հող չտան ատելի թուրք-ազերիին:

Կարինե ՍԱՐԳՍՅԱՆ Խնուշինակի միջն. դպրոցի հ. լեզվի եւ գրակ. ուսուցչուհի

ՀԻՉՈՒՄ ԵՄ ԵՎ ՊԱՀԱՆՋՈՒՄ

100-ԱՄՅԱԿԻՆ ԼՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ՝ ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ

ԹԵԿՈՒՋ 1000 ՏԱՐԻ ԱՆՑՆԻ...

Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված համապարփապահ միջոցառումների մեկնարկը տրվեց Ստեփանակերտի Ա. Գրիբոյեդովի անվան հ. 3 միջնակարգ դպրոցից:



Քայմ Մուրադյանը բացվեց զանգերի դողանքների ներքո, իսկ սլայդների վրա պատմվում էր աշխարհում կատարված ցեղասպանությունների մասին:

«Ոչ մի զագան չի կարող հորինել ավելի սարսափելի համցածրություն, քան թուրքական կռամալարության՝ հնազույն մի ժողովրդի դեմ իրականացրած ցեղասպանությունը:

Սիջոցառումը բացվեց զանգերի դողանքների ներքո, իսկ սլայդների վրա պատմվում էր աշխարհում կատարված ցեղասպանությունների մասին: «Ոչ մի զագան չի կարող հորինել ավելի սարսափելի համցածրություն, քան թուրքական կռամալարության՝ հնազույն մի ժողովրդի դեմ իրականացրած ցեղասպանությունը:

Սիջոցառումը բացվեց զանգերի դողանքների ներքո, իսկ սլայդների վրա պատմվում էր աշխարհում կատարված ցեղասպանությունների մասին:

Երկրորդ մասում զանգերը կրկին դողանքեցին:

- Եթե մարդիկ լուծն, քարերը պիտի խոսեն: 100 տարվա լուրջությունից հետո գործելու ժամանակն է... Էջմիածնում և Հայոց Առաքելական երկր եկեղեցիներում Սուրբ Պատարագի ընթացքում հրապարակվեց Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի առիթով ամենայն Հայոց Կաթողիկոսի Սրբատառ Կոնդակը,- ասաց հաղորդավարը:

Յոթնամյա Յոհաննիսյանը հայտարարեց Սուրբ Պատարագի ընթացքում հրապարակվեց Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի առիթով ամենայն Հայոց Կաթողիկոսի Սրբատառ Կոնդակը,- ասաց հաղորդավարը:

Սյունիքում բեմ դուրս եկան չորս աղջիկներ՝ ձեռքներին վառվող մոմեր՝ մոտիկ արտահայտվելով յուրաքանչյուրն իր ինքնուրույն վե-

րաբերյալ, իսկ երբ հեռացան, բեմ եկան «Կռունկները»՝ հիացնելով իրենց չքնաղ ու նագեմի պարով:

Սլայդի վրա ցուցադրվեց Ցեղասպանության ինստիտուտ-թանգարանի մասին տեսաժապավեն, որի նոր մասնաշենքի դռներն այցելուների առջև բացվեցին 100-րդ տարելիցի նախօրեին:

Ինչ իմանային դահիճները, որ հայության իրենց կտրած ծառը վերաբողոքեցին և՛ ծաղկելով Ազնավուրյաններով, Խաչատրյաններով,

Սարյաններով, ճակ՝ ամերիկահայ դասախոս Քեյթ Թուրքայանով, արգենտինահայ Էդուարդ Էռնիկյանով, ամերիկահայ Ալեք Մանուկյանով... պատմության փոշու տակից հայտնաբերված նոր անուններով՝ ամերիկահայ Ավորոտ (Արշալույս) Մարտիկյան, ով իր իսկ կյանքի պատմության հիման վրա համր ֆիլմում նկարահանվելով՝ վաստակել է 30 մլն դոլար և տրամադրել հայ որբերին, Ռուբեն Չեյրյան, ով փրկել է 800 որբերի և հայ կանանց՝ Արևմտյան Հայաստանի հարեմներին, Լևոն Յոթնեղբայրյան, Կարո Եփրեմ, ովքեր 3000 հայուհիների փրկեցին հարեմներից և շատ ու շատ ուրիշներ: Մեծարվեցին ու

ողջ հայության անունից երախտագիտության խոսքեր հնչեցին այն ազգերի ու անհատների հասցեին, ովքեր չվախեցան, խոսեցին ու գործեցին. նրանց, ովքեր փրկության ձեռք մեկնեցին ու աջակցեցին զաղթական դարձած հայերին՝ յուրաքանչյուրն իր չափով, որոնց անունները երկար կարելի է թվարկել... Երանին ցուցադրվեցին Հայոց ցեղասպանությունը ճանաչած 21 պետությունների դրոշմները. 21 աշակերտ դուրս եկավ բեմ, և յուրաքանչյուրը Ցեղասպանությունը ճանաչեց տվյալ լեզվով ու դրոշով: Կրկին բեմ վերադարձան Ավագյան ընտանիքի հայրը, մայրն ու որդին՝ հայ ժողովրդի վերապրող զավակները, ովքեր երբեք չնոռացան իրենց նահատակներին ու նրանց սրբագան կտակը:

- Հայր իմ, ասի լալահառաջ, հայը հույսից չի զատվի, երդվում են ես քո առաջ՝ Արարատն էլ կազատվի,- հնչեց որդու խոսքը:

Վերջում երգչախումբը կատարեց «Բեզ համար, Հայաստան» երգը՝ հանդիսատեսին ևս մեկ անգամ համոզելով, որ նման սերունդ ունեցող ազգը պարտվել չի կարող և դեռ աշխարհին շատ բան ունի ասելու...

ՏԵՐՆ ԵՆՔ ԱՄՆԱ ՏՆԱ

«Մենք տեղն ենք Սասնա տան և Սասնա դատարան» վերնագիրն էր կրում հ. 7 հիմնական դպրոցում կազմակերպված միջոցառումը՝ նվիրված Մեծ եղեռնի 100-րդ տարելիցին: Ըստ միջոցառման կազմակերպիչ, դպրոցի պատմության ուսուցչուհի ժամանակավոր հանգուցիկուհի Աննա Կարոյանի՝ նախկին տեղեկագրի Եղեռնի զոհերի հիշատակը՝ պահպանելով՝ ճանաչում, դատապարտում, հատուցում: Այս միջոցառման ընթացքում ևս մեկ անգամ համոզվեցինք բիբլիոսկան մեր Հայաստան աշխարհի, հայաշունչ այս հողի ներքին ուժի մեջ: Քեղեցիկ էր ներկայացված «Վրեժ» պարը, իսկ Մեծն Տեղեղի անմար խոսքերը տեղին մեջբերված՝ «Մեզ պատժողը թուրքը չէր, այլ մեր տկարությունը՝ թուրքի միջոցով»:

Վերջում ներկայացվեց Պերո Զեյ-նունցյանի «Մեծ լուրջություն» դրամայից երկու հատված: Ունկնդրեցինք աշակերտների խոսքը, հիացանք նրանց երգ ու պարով, և մեկ անգամ հանդիպեցինք, որ մեր աշակերտների զգացողությունը, հայրենասիրությունն ու հայեցի դաստիարակությունը կտանեն մի օր նրանց մինչև Մասիս, ու մի երջանիկ օր հայ մանուկն իր երագած հայրենիքում կերպի «Տուն իմ հայրենին» ու կպարի «Սասնա Քոչարին», կպարի ու աշխարհին կապացուցի, որ տեղն է Սասնա տան ու Սասնա դատի:

«ԿԱՆՔ, ՊԻՏԻ ԼԻՆԵՆՔ ՈՒ ԴԵՆ ՀԱՏԱՆԱՆՔ»

Ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված հրաշալի միջոցառում էր կազմակերպվել հ. 9 հիմնական դպրոցում, որը կրում էր «Կանք, պիտի լինեմք, ու դեռ շատանանք»

վերնագիրը:

Ինչպես միջոցառման կազմակերպիչ, դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Բելա Բաբայանը նշեց, նպատակն էր 100-ամյա տարելիցին երեխաների հետ կազմակերպել երդման արարողություն, որպեսզի իր աշակերտները ևս զգան այն հողի բույրը, այն քարի կանչը, ինչն անծանր ինքն ամիսներ առաջ բերել էր Արևմտյան Հայաստանից. հող՝ Կարսից, քար՝ Անիի Մայր տաճարից և ջուր՝ Վանա ծովից: Զգան ու 100-ամյա տարելիցին հանդես գան ոչ թե լալահառաջ տրամադրությամբ, այլ՝ որպես պահանջատեր: Իգուր չէր միջոցառման համար ընտրվել այն սրահը, որի պատերը պատված էին «100 գարուն հիշողություն», «100 տարվա լուրջություն», «Դեպի փրկություն», «Ափսոս, գործս կիսատ մնաց», «Եղեռն-նազոհ գրողներ» և նման բովանդակությամբ մի շարք նկարներով ու ցուցապաստառներով: Իսկ ամենատպավորիչն ու տրամադրողն այն անկյունն էր, որտեղ ուսուցչուհին պատրաստել էր ծովից ծով Հայաստանը՝ մեծ մասը դատարկ՝ միայն տեղադրված հող, ջուր, քար ու տեղանուններ, իսկ մի փոքրիկ մասում՝ մեր ծաղկուն Հայաստանը՝ մայրաքաղաք Երևանով:

Հետաքրքիր էր միջոցառման բեմագիրը ևս. եղեռնից մազապուրծ տառիկին, ով քթի տակ ինչ-որ մեղեդի էր մտնում, մոտենում է փոքրիկ թռն ու հարցնում.

- Ո՞րն է, բաթո, մեր հայրենիք:

Տառի պատասխանը կարծ էր ու խրատական.

- Լավ սովորիր, գիտուն դարձիր, մեր երկրի արժանի քաղաքացի դարձիր ու այնժամ ինքդ կիմանաս քո հարցի պատասխանը:

Իսկ ավելի ավագները, որոնց ելույթներից դատելով՝ ավելի քաջատեղյակ են փոքրիկ հարցին, պարզապես հիացրին իրենց բնատուր տաղանդով, հայեցի խոսքով ու կիրթ պահվածքով: Աշակերտները երդվեցին պապերի կիսատ թողած երգը երգել, պարը պարել, երագանքն իրականացնել... Համոզիչ էր աշակերտուհու այն խոսքը, որ երդվում էր.

- ...Մնի կոյս էլ փրկվի կտորածից՝ փյուն-ճիվկելու է իմ ազգը նորից...:

ՈՐԱՆՔ ՄԵՌԵՆՈՑ, ԲԵԿԱՆԵՔ ՀԱՆԹԵՐ, ԿՈՉԵՆՔ ԱՊՐՈՂԱՑ

Հայոց եղեռնի 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառում էր կազմակերպվել ԵրՊՀ-ին առընթեր Ստեփանակերտի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցում: Այն սկսվեց դողանքների ներքո՝ «Հայր մեր» տեղումակամ աղոթքով: Օգտագործված գրականությունը մեկն էր՝ Պարույր Սևակի «Անլուրդ զանգակատուն» պոեմից հատվածներ, բայց այնքան խորի մասում ու Ռեբիլ էին ընտրված դրանք, այնքան խոսուն, որ առաջին իսկ թույլենքից մինչև միջոցառման ավարտը դահլիճը քարացած՝ խոլ հեկեկում էր... Այնքան խորը վիշտ ու ցավ կար երեխաների աչքերում, այնքան ցատուն՝ նրանց խոսքում ու այնքան լավատեսությամբ՝ դեպի զայիքը...:

Սիջոցառման առաջին հատվածում աշակերտները հատվածներ կարդացին «Դողանք ավետիսից»՝ ներկայացնելով Մեծն Կոմիտասի ծնունդը, այնուհետև՝ որբանակն ու ապրելը: Քեղեցիկ ու թախտոտ արտասանությամբ հաջորդեց Կոմիտասի «Հով արեք»-ը՝ աշակերտուհու գրավիչ ծայրի թավշյա կատարմամբ: Իսկ «Դէ յամանը», «Աղանան»՝ դր մեկը թվել, համահունչ ու սահուն էին արված լծորդումները, իսկ հուզմունքներն ու կողմից էլ միանում էին սլայդների վրա տեղադրված տեսաձայնայինները, իսկ սահուն ստեղծագործությունը չափարտվեց այն նույն լալահառաջ նոտայով, որով սկսվել էր, այլ՝ լավատեսությամբ ու զվիթի հանդես մեծ հավատով, ինչի մասին վկայում էին աշակերտների նագեմի ու զեղեցիկ պարերը, ճակ՝ «Այս գարունը», «Միասին» երգերը:

Մեր հայրենիքը մեզմիջ դատարկվեց, բայց... ոչ մի վայրկյան, ոչ մի ակնթաթք

Մենք չենք դատարկվել մեր հայրենիքից, բայց հայրենիքը մեր մեջ չսպանվեց...

Ուրեմն եկեք՝ ողբանք մեռելուց, բեկանեմք շանթեր, կոչենք ապրողաց...

ՎԱՐ ԹԵ ՈՒՇ...

Ավ. Իսահակյանի անվան հ. 10 հիմնական դպրոցում «Հիշում ենք և պահանջում» խորագրով միջոցառման հերոսը եղեռնի դառնությունները ճաշակած Եփրեմ պապն էր, որը թռան խնդրանքով արդեն որեորդ անգամ պատմում էր այն օրերի արհավիրքների մասին:

- Դե, պատմիր, պապ, պատմիր, թող այս ներկաներն էլ լսեն քո պատմությունը, որ նրանք էլ ինչեն: Հիշենք բոլորս, հիշենք ու պահանջենք,- խնդրեց թոռը:

Մեկ ու կես ժամ տևած այս միջոցառման ժամանակ հնչեցին Եղեռնին ու մեր հայրենիքին նվիրված երգեր ու պարեր, փոքրիկ բեմադրություններ, իսկ ասունքին լրացնում էին սլայդի վրա տեղադրված այն դժոխակ օրերի տեսարանները: Հարկ է նշել, որ աշակերտների շուրթերից շատ զեղեցիկ ու թախտոտ էին հնչում «Աղանայի ողբը», «Տեսնեմ Անին ու նոր մեռնեմ», «Հայաստան աշխարհ» և այլ երգեր, իսկ «Ջարթրի լառ»: «Տուն իմ հայրենի» երգերը դպրոցի նախկին սան Անդրանիկ Վերդյանի կատարմամբ ոգևորեցին: Վերջում աշակերտները պարեցին «Սասնա պարը»: Իրոք, պարեց արցախցի մանուկը Սասնա պարը, պարեց այն խրոխտ, պարեց ու համոզեց ամենքին, որ վաղ թե ուշ այսօրվա մանուկը վաղը այն կպարի ոչ միայն Արցախի դպրոցում, այլև Սասնունում, քանզի անհնար է Եփրեմ պապի ողբերգալից կյանքի հիշողության պատանդկները լսելուց հետո, ինչն արդարև հայի պատմության արձանների էջերից է, ոճորագործի դեմ ծրագիր չդառնա՝ ներկա ու գալիք սերունդներին համար:

ԱՐՑԱՄԻ ԸՆԱԾԵՐՈՎ

Հետաքրքիր ծրագրով միջոցառում էր կազմակերպվել հ. 5 հիմնական դպրոցի ՄԿԱՉՏՏ Մարիմե Խաչատրյանը:

«Արցախի ճանկեղծով» վերնագիրն արդեն հուշում է ընթերցողին, որ ներկաները յուրովի շրջայց կատարեցին Արցախի տարածքով՝ Ստեփանակերտից մինչև Ասկերան, Մարտակերտ, Մարտունի, Հաղործ, Շուշի, Շահունյան ու Քաշաթաղ:

Հրավիրվել էին արցախյան գրական օջախի ներկայացուցիչներ Սոկրատ Խանյանը, Արկաղի Թովմասյանն ու երիտասարդ բանաստեղծուհի Սոնա Համբարձումյանը: Ինչպես նշեց Մարիմե Խաչատրյանը, նման միջոցառման կազմակերպումը մի քանի նպատակ է հետապնդում. նախ՝ կրթական. սովորողների մոտ ձևավորել և ամրապնդել հայրենագիտական գիտելիքները, զարգացնող՝ սպահովել աշակերտների ակտիվությունը, զարգացնել նրանց մտային ու ստեղծագործական ունակությունները և վերջապես՝ դաստիարակչական. մատաղ սերնդի մեջ ձևավորել հայրենասիրական զգացումներ, բնակավայրի պատմության, տեսարանային վայրերի, մշակույթի, տնտեսության ուսումնասիրման միջոցով ամրապնդել հայրենագիտական դաստիարակությունը ու հայրենիքի ճանաչելիությունը:

Աշակերտները ներկաներին ևս մեկ անգամ հիշեցրին մեր հայրենիքի կազմավորման, խորհրդանիշների՝ եռագույնի, զխանջանի և հիմնի մասին: Ոգևորությամբ պատմեցին մեր հրաշք բնության, նրա հպարտ ու աննկուն ժողովրդի, տաղանդավոր ու ազատասունջ երիտասարդության մասին: Յուրաքանչյուր խոսքի հետևում էին համահունչ ասունքը, խրոխտ երգն ու պարը: Պատահական չէր նաև հյուրերի ներկայությունը, քանզի ողջ միջոցառման ընթացքում աշակերտների շուրթերից հնչեցին միայն արցախյան գրական օջախի կարկառուն ներկայացուցիչներ Դ. Բեգլարյանի, Ս. Խանյանի, Ա. Թովմասյանի և այլոց ստեղծագործությունները:

Վերջում շնորհակալանքի խոսքով հանդես եկան հյուրերը: Այնքան մեծ էր ոգևորությունը, որ գրողներն էր արտասանեցին աշակերտների համար, հաղորդակցվեցին իրենց տպավորություններով, տվեցին խորհուրդներ: Նրանք դատարկածեռն չէին եկել, դպրոցի գրադարանին նվեր էին բերել իրենց գրքերից: Գրողները կրթօջախին նորանոր ձեռքբերումներ մաղթեցին, իսկ սաներին՝ գիտելիքների ամբարում, քանզի նրանք են մեր նորանկախ պետության վաղվա տերերը:

ՇԻՇՈՒՄ ԵՄ ԵՎ ՊԱՇԱՆՋՈՒՄ

Հրանուշ ՄԱՍՐԲԵՅԱՆ

ՄԻ ԱՄՔՈՂՋ ԴԱՐ



«Ամեն ինչ տեսնել, տիրապետել ամեն ինչի, որ հետո շալլորեն վերադարձնես մարդկանց»

Ալֆրեդ Բրեն

Նա ապրում է ամենահզոր ժամանակի տիրույթներից դուրս՝ իր անվան շուրջը մշտապես բորբոքելով հետաքրքրություն, ծիծաղ ու անհոգություն: Նա չի ճանաչում ոչ մի դժվարություն: Ահա այսպիսին է բանաստեղծուհու և մանկավարժի խառնվածք ունեցող այս ուսուցչուհին, ում անսահման հոգում միշտ վառ է պահված գիտության ջահը, և դեռ ո՞վ իմանա, քանի՞ քանի սաներ կհյուսեն իրենց կյանքի սանդուղքը նրա սփռած լույսի ներքո: Շրջապատից սիրված ու հարգված լինելն է, որ մարդուն դարձնում է վարժեք, ինչպիսին տիկին Մամբրեյանն է, ում բանաստեղծության յուրաքանչյուր տողը թափանցում է հասարակ շինականի կյանքի առօրյան, շնչավորում ու հավերժացնում այն:

Նոր Ղարաչինարի միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվը ի խորոց սրտի շնորհավորում է բազմավաստակ մանկավարժ, ԼՂՀ ժողովրդական գերագանցիկ, բազմաթիվ գրքերի հեղինակ տիկին Հրանուշ Մամբրեյանի 75-ամյակը, ցանկանում նրան պոզիտիվ առողջություն: Եվ չնայած իր 75-ամյա տարիքին՝ տիկին Մամբրեյանի հոգում չի նվազում մատաղ սերնդին դաստիարակելու իր եռանդը, չի նվազել հետաքրքրությունը նաև ստեղծագործության նկատմամբ:

Թանկագին տիկին Մամբրեյան, ցանկանում ենք Ձեզ արցախյան կաղնու տոկունություն, երջանկություն և ստեղծագործական բեղուն աշխատանք, հոգ չէ, որ Ձեր աշխատանքի պտուղները դուք ճաշակում եք ուշացած, քանզի.

«Հոգուտ մեջ միայն մարգարիտներ են,
Շողակներ են ու անզին քարեր,
Հոգուտ մեջ միայն անհուն մտքեր են,
Որոնք դառնում են իսկական գանձեր»: (Հ. Մ.)

Նոր Ղարաչինարի միջնակարգ դպրոցի ուսուցչական կոլեկտիվ

Մի ամբողջ դար սզում է ազգս, Արցունքի փոխարեն արյուն է կաթում, Ու մինչև այսօր հիշում է ազգս, Թե ոնց էր ոսոխը հայերին մորթում:

Մորթում էր, հրճվում, խրախճանք անում, Տիրում էր հայի ողջ ունեցվածքին, Վայրի մոլուցքով տիրում, տիրանում, Դառնում, նայում էր աշխարհի աչքին:

Ո՞ր իրավունքով, ո՞վ էր մեղավոր, Ինչ էր ուզում թուրքը՝ գազան արմախում, Կողքից տեսնում էին ազգերը բոլոր, Սակայն, ով զարմանք, չէին խանգարում:

Թուրքը դարձել էր սանձարձակ գազան, Գավաթը մի ձեռքին, յաթաղանը՝ մյուս, Արյուն էր ընկնում գազանի արմախում, Նստում գոհերի գլխին մինչև լույս:

Ու այս ոճիրից մի դար է անցել, Թուրքը չի ուզում եղեռն ընդունել, Իբրև թե հայերն են իրենց կոտորել, Իբրև թե հայերն են ոճիրը գործել:

Դեռ սզում են ժառանգները մորթված հայերի, Որոնք ակամատես են եղել սպանդին, Որոնք հրաշքով մազապուրծ եղած՝ Այսօր աշխարհի կողմերն են ցրված:

Նրանց աչքերից արյունը կաթ-կաթ Չավաքվել, դարձել է գետեր հորդառատ, Հիմա էլ թուրքը շատ կուզի լողալ, Արյան ծովերում լող տալ, հագնել:

Ես էլ ժառանգ եմ մազապուրծ հայի, Որ ապրեց ուղիղ ինքնուրույն տարի, Իսկ երբ հրաժեշտ էր տալիս այս կյանքին Մի զույգ արտասուք ցուլաց աչքերին:

Իր ամբողջ կյանքում լուռ ու լռակյաց Ցավերն արած ներս, մորմոքը սրտում, Սպանդն ուղեղում տպված, մնացած՝ Այդպես նա ապրեց, ապրեց ողջ կյանքում:

Այսօր տարելից է, սակայն նա չկա, Մի ամբողջ դար ցավը իր մեջ ամփոփեց, Մեկ-մեկ հառաչում էր՝ աչքերը փակած, Վրեժը սրտում՝ հեռացավ կյանքից:

Մինչդեռ թուրքն այսօր ջանում է հերքել, Որ կոտորել է կանանց ու մանկանց, Որ զրկել է հային իր տուն ու տեղից, Որ պոկել է հային մայր հողի սրտից:

15 թվի սպանդից փրկված երթը հայերի Դանդաղ, սովահար՝ անապատներով, Քայլում էր դեպի Մայր Էջմիածին, Դեպի Հայաստան, դեպի Երևան: Իսկ ահա այսօր սզո տարելից,

Աշխարհի բոլոր մայրցամաքներից Քայլում են դեպի Ծիծեռնակաբերդ, Դեպի գոհերի կրակը անշեջ...

2015թ.

ԵՂԵՐՆ ԷՐ, ԱՐՅՈՒՆ...

Ցավն այնքան խորն է ու այնքան թարմ, Թեկուզ լրանում է մի ամբողջ դար, Արյունոտ եղեռն էր, եղեռն, կոտորած, Այսօր պահանջում ենք հատուցում արդար:

Շեն քաղաքները, գյուղերը ծաղկած Ավերեցին, արին գետնին հավասար, Ջարդեցին, փշրեցին ողջն համաստարած, Սրի քաղեցին կանանց ու մանկանց:

Թուրքը դարձել էր գազան գազազած, Թվում էր՝ դարեր ի վեր ոչինչ չէր կերել, Խնում էր հայի արյունով կենաց, Հանց կապից փախած խոզ ամենակեր:

Եթե մարդը մարդու արյուն է խմում, Ու աչքերի մեջ կարմիրն է իշխում, Ուրեմն գազան է, գայլ է գիշատիչ Ու չի պատժվում, ո՞վ սուրբ Արարիչ:

Այսօր գայլային ոռնոցը թաքցնում, Մարդու կերպարանով դիմակը հագին, Թուրքն իր ոճիրը հերքել է փորձում, Իսկ ոնց կհերքի մեր ցավն ահագին:

Եթե անգամ իր ոճիրն ընդունի, Երբեք չի կարող մեր ցավը մեղմել, Քանզի կողմերը համայն աշխարհի Ցրված հայերի վիշտն է ողորել:

Մեր վիշտը ձգվում է բևեռից-բևեռ, Մի ամբողջ դար է՝ չի սպեղանվում, Թուրքն անտարբեր է հանց առը ծմեռ, Մի դար է՝ նրա սիրտը չի հավվում:

Բայց ինչ էլ անի, ինչպես էլ ոռնա, Բացի դահիճից ոչինչ չի դառնա, Դա է ժառանգել իր շուն պապերից, Որ հագուրդ ստանա միայն հայերից:

Թուրքը մահ է սփռում, հայը՝ վարդ ցանում, Հայն ընդունակ է լոկ բարին գործել, Ահա անցել է ճիշտ հարյուր տարի, Գիշտ քայլ չի անում թուրքը վայրենի:

20.12.2014թ.

ՀԱՅՐԻԿ, ԻՄ ԱՆՔԻՆ

Ես դուստրն եմ եղեռնից մազապուրծ հայի, Որից ժառանգել եմ թաքնված թախիծ, Հոգու բարություն ու մորմոք սրտի Ու խնամքով թաքցրած վի՛շտ, վի՛շտ ու կսկիծ:

Մեսրոպ Շահինյանն էր՝ մորից որբացած, Մորը կորցրած դեռ կաթ չկերած, Նա չհասցրեց անգամ ծայր հանել Ու չհասցրեց մոր ծայրը լսել:

Մի՞թե դա քիչ էր, ո՞վ Մեծն Աստված, Ցեղասպանությունը ճիրաններն պարզած Սկսեց հունձը անմեղ գոհերի, Որոնք մորթեցին դարասկզբին...

Գաղթի ճամփեքին հայրս մուղրվեց, Կորցրեց բոլոր ազգականներին, Նա ընդամենը յոթ տարեկան էր՝ Ստիպված էր հաշտվել ծնվող ցավերին:

Այսպես որբուկը գրկվեց ամենքից, Չրկվեց ամենքից, հարազատներից, Բախտի հարվածը խլեց այն թանկը, Ով սուրբ Արարիչ, որ ունի մարդը:

Հայրս անգոր էր պահել այն թանկը, Իր ազգանունը... Շահինյան, Քաղցած ու մուղր, շիվար երեխա, Իսկ հարվածները՝ դաժան, անխնա:

Ժամանակ անցավ, որը մեծացավ, Երջանիկ հայր դարձավ նոր ազգանունով, Այսօր ես հպարտ եմ քո սուրբ անունով. Մեսրոպ Մամբրեյան, քո ազգանունով:

Այսօր ես հպարտ եմ, որ քո դուստրն եմ, Ցավիդ բեկորները ինձ էլ են հասել, Այսօր դու չկաս, բայց միշտ ինձ հետ ես, Քո մեծ վշտից ուղիղ մի դար է անցել:

Նվիրում եմ եղեռնապուրծ հայրիկիս՝ Մեսրոպ Մամբրեյի Մամբրեյանին 2015թ.

ԱՌԹՆԱՑԵՔ

Արթնացե՛ք ազգեր, դարն է մեզ կանչում, Եկել է պահը՝ թուրքը ծնկի գա, Գործած ոճիրից նա չի ամաչում, Արդարացման զգացում իր հոգում չկա:

Վկա են եղել մեր բյուր ցավերին Մայր Արաքս գետը ու լիճը Վանա, Երբ մոտենում է օրը Եղեռնի՝ Կարմիր են հագնում ջրերը նրանց:

Քանզի արյունը վարար գետի պես Հոսում էր դեպի մայր լիճը Վանա, Խառնվում նրա կապույտ ջրերին, Դառնում պատմություն, ծծվում դարերին:

Գուցե դուք, ազգեր, ստիպեք նրան Կեռ յաթաղանով սպանող հիշել, Ստիպեք նրան՝ հիշի, հասկանա, Որ պիտի ետ տա, ինչն իրենը չէ:

Արթնացե՛ք ազգեր, ուղիղ մեկ դար է, Թուրք դահճին դատել մի՞թե դժվար է, Մի՞թե կոտորած չէր. մի ողջ ընտանիք Թուրքական ձևով չհասավ գալիք:

2015թ.

ԻԼՁԵ ՖՐԱՊԱՆ

Հայոց արյունալի ջարդերի ու կոտորածների մասին իրենց բողոքի ձայնն են բարձրացրել օտարերկրյա գրողներ, բանաստեղծներ, հասարակական գործիչներ, նրանք, ում խիղճը արթուն է: Դրանց թվում է գերմանացի կին գրող Իլզե Ֆրապանը՝ Հայկական դատի պաշտպաններից մեկը:

Թուրքական բռնակալական լծի տակ կրած հայ ժողովրդի դժոխային տառապանքները, ազատության համար նդած հերոսական պայքարը հուզել են Ֆրապանին: Նա տպագրել է բրոշյուրներ, հոդվածներ, արտասանել հրապարակային ճառեր՝ նվիրված հայկական հարցին: Ամբողջ Եվրոպայով մեկ նա իր բողոքի ձայնն է բարձրացրել ջարդերի և կոտորածների կապակցությամբ, դատապարտել Եվրոպական պետություններին, որոնք իրենց շահերից ելնելով՝ այնքան անմարդկայնորեն խաղում են հայ ժողովրդի ճակատագրի հետ:

Ճառերից մեկում ներածական մեջբերում է արել գերմանական ժողովրդի հանճարեղ գավակ, ազատության և անկախության պաշտպան Ֆրիդրիխ Շիլլերից, որ կարծես վերաբերում է Արցախին մինչև նրա անկախությունն ազգերից: Երբ որ ճնշվածը այստեղ՝ աշխարհում

Դատ ու իրավունքը բնավ չի գտնում, Երբ որ բռնության լուծը գարշելի Դառնում է ստրկին անհանդուրժելի, Նա իր ձեռքերը երկինք է մեկնում Եվ վստահորեն այնտեղից խլում Իր իրավունքները հավիտենական, Որոնք երկնքի աստղերի նման Անշարժ, անվախճան անհունին փարած, Մնում են այնտեղ հավիտյան. կախված: Երբ էլ ճար չունենք, սրին ենք դիմում, Մենք մեր հայրենի հողն ենք պաշտպանում Ընդդեմ մեզ ճնշող անարգ բռնության Պաշտպանում ենք մեր կինն ու երեխան:

Ֆրապանը դատապարտում է Վիլհելմ Երկրորդի բարեկամությունը թուրք բռնակալության հետ և նշում այն դառն պտուղները, որ տալիս է այդ բարեկամությունը:

Իլզե Ֆրապանը ծնվել է Համբուրգ քաղաքում: Նա ստացել է լավ դաստիարակություն ու կրթություն: Բարձրագույն կրթություն ձեռք է բերել Շվեյցարիայում: Գերմանական կին գրողների շարքում աչքի է ընկել իր գրական-հրապարակախոսական և հասարակական գործունեությամբ, եղել է կանանց իրավահավասարությանը նվիրված երկչա-

բաթաթերթի խմբագիրներից մեկը: Ունեցել է շատ բեղմնավոր գրական գործունեություն, գրել է երեսուցի հասնող երկեր՝ վեպեր, վիպակներ, պատմվածքներ ու նովելներ, թատերագրություններ և այլն: Նրա երկերը տպագրվել են գերմանական և գերմանա-չվեյցարական նշանավոր պարբերականներում, ինչպես նաև առանձին գրքերով՝ մեծ տպաքանակով: Լույս են տեսել Բեռլինի հայտնի հրատարակչական ընկերություններից մեկի՝ Ռայմերի հրատարակությամբ և տարածվել Գերմանիայի բոլոր անկյուններում:

Բացի հայկական հարցի վերաբերյալ աշխատություններից, կոչերից ու բողոքներից, գրել է նաև հայ կյանքից վերցված մի գեղարվեստական երկ՝ «Անիծված երկիրը» վերնագրով: Դրանից բացի, նրա նշանավոր վեպերից մեկի («Աշխատանք») գլխավոր հերոսը հայ ուսանողն է: Այդ վեպը ժամանակին մեծ աղմուկ է հանել. գլխավոր հերոսի ծայրահեղ արմատական լինելը դուր չի եկել մտավորականների որոշ խավերին, մասնավորապես, այն փոթորիկ է առաջացրել Ցյուրիխի համալսարանի պրոֆեսորների շրջանում: Տեղի ունեցան թշնամական ցույցեր Ֆրապանի դեմ: Սակայն այդ ցույցերին իր արժանի պատասխանը

տվեց Ցյուրիխի ուսանող երիտասարդության լավագույն մասը՝ կազմակերպելով հակացույց՝ ի պատիվ Ֆրապանի և նրա վեպի:

Ցավոք, շատ ցավոք, Ֆրապանը երկար ժամանակ տառապել է ստամոքսի քաղցկեղով: Քաջ գիտակցելով, որ իր հիվանդությունն անբուժելի է, այն վաղ թե ուշ պիտի իջեցնի գերեզման, շարունակ խնդրել, աղերսել է իր ամենամտերիմ և սիրելի նկարչուհի ընկերուհուն սպանել իրեն քան ժամանակ: Ընկերուհին, որ անսահման սիրով կապված էր Ֆրապանի հետ, երկար տառապանքից ու վարանումներից հետո, գերագույն ճիգ գործադրելով իր վրա, ի վերջո, 1908թ. Ժնևի հյուրանոցում, որտեղ նրանք սովորաբար ապրում էին ամառ ժամանակ, կատարում է Ֆրապանի խնդրանքը: Սակայն սպանությունը կատարելուց ընկերուհին նույն ատրճանակով սպանում է իրեն համոզված, որ իր կյանքն առանց Ֆրապանի լինելու է թունավորված և տառապալից:

Նունե ՄԵԼՈՒՄՅԱՆ
Հաղորդի շրջան, գյուղ Առաջամուկ

ՀԻՇՈՒՄ ԵՄ ԵՎ ՊԱՇՏԱՆՁՈՒՄ

ՄԵՐ ՆԱԶԱՏԱԿՆԵՐԸ ՄԵՌԱՆ, ՈՐ ՄԵՆՔ ԱՊՐԵԼ ՍՈՎՈՐԵՆՔ

«Մեր նահատակները մեռան, որ մենք ապրել սովորենք»... այս վերնագիրն էր կրում ճարտարի հ. 5 միջնակարգ դպրոցում Յայոց մեծ եղեռնի 100-ամյակին նվիրված դաս-միջոցառումը, որին ներկա էին շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Ջ. Ղուլյանը, ճարտարի քաղաքապետ Ա. Աղաբեկյանը, տարածքում տեղակայված գործարանի սպաներ, Մարտունի և ճարտար քաղաքների դպրոցների տնօրեններ, պատմության ուսուցիչներ, ծնողներ:

Քերթի դեմ՝ մարդկային ուղեղի մեջ չտեղավորվող, մարդ էությանը չհամապատասխանող վայրենությունները, երեխաների և կանանց տեղահանություններն ու կրոնափոխությունները: Այս ամբողջ ընթացքին լուռ հետևում էր աշխարհի քաղաքակիրթ համարվող մարդկությունը: Քչերն էին միայն արձագանքում, որը և մնում էր մեծապես անտեսված: Յայն ամբողջ աշխարհի աչքի առաջ մորթվում ու ոչնչացվում էր՝ բարոյապես ու ֆիզիկապես: Պատմության անիվն առաջ էր շարժվում, իսկ կատարվածը հնարավոր

արժանի վրեժն առնելու: Մի խոսքով՝ միջոցառումն իսկական հիշողություն էր, ոգեկոչում և ոգեշնչում: «Մենք դեռ կբայլենք Արարիչի, Աղբյուր Սերոբի, Գևորգ Զառչի, Գրայր Դժոխքի, բոլոր այն հայրուկների ոտնահետքերով, որոնք իրենց ապրած տիեզերական կյանքի մի ակնթարթով հոգի ներարկեցին ապրողներին: Մենք դեռ իրականություն կդարձնենք Անդրանիկի երազանքը, կվերանորոգենք Առաքելոց վանքը ու հայ մանուկներին կսովորեցնենք մեզ միշտ ուղեկից մեր այբ-ն ու բեն-ը՝ մեր սրբազան գիրը»,- եզրափակիչ խոսքում ասաց Գ. Մաթևոսյանը՝ երդում տալով նժեռեցիները ստեղծելու՝ երեք չներել թուրքին ու կոչ արեց բոլորին՝ լցվել վրեժով, «բանի մեր տան թաղին ուրիշի վազքն է փռած»: Եվ միջոցառման մասնակիցներն ու հյուրերը ձեռք ձեռքի տված, միասնաբար երգում տվեցին՝ Միացյալ ու Անկախ Հայաստանի կերտման պայքարին լինել պատրաստ:

Մինչ դասն սկսելը երեխաները հյուրերին բաժանեցին իրենց ձեռքերով պատրաստած անմոռուկներ: Այնուհետև ներկաները ծաղիկներ խոնարհեցին Յայոց ցեղասպանության զոհերի հիշատակը խորհրդանշող անկյան պատվանդանին:



Բացման խոսքով հանդես եկավ դպրոցի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով փոխտնօրեն Գայանե Մաթևոսյանը:

Դասն իրենից ներկայացնում էր գրական-գեղարվեստական համադրույթ: Երեխաները ներկայացրին հայ ժողովրդի դարավոր պատմությունը, այնուհետև 19-րդ դարավերջին ու 20-րդ դարասկզբին հայ ժողովրդի հանդեպ իրականացված ոճրագործությունը: Յայի հավատն ու վստահելու բնատուր գիծը եղան ճակատագրական կոտորածի պատճառ: Փուլ առ փուլ սպանդի ենթարկվեց հայ ժողովրդի արևմտյան հատվածը: Ցեղասպանություն իրականացվեց մի ժողովրդի հանդեպ, որը միշտ եղել է խաղաղության, համերաշխության, ստեղծագործ աշխատանքի պաշտպան, երկիր բարգավաճեցնող և զարգացնող: Համիդյան ջարդերին հետևեցին երիտթուրքերի կողմից կազմակերպված ջարդերը: Հայ ժողովրդի մի սովոր հատված զոհ գնաց իր իսկ ձեռքերով կենդանություն և ուժ տված գազանի վայրագություններին: Ազգի բնաջնջման ծրագիրը սկսվեց մտավորականության, ասել է թե՛ ժողովրդի ուղեղի ոչնչացմամբ, այնուհետև կտրեցին հայի ձեռքերը՝ հավաքելով ու ոչնչացնելով մարտունակ խավին՝ երիտասարդներին, տղամարդկանց, որին հետևեց և կանանց ու աղջկաների,

չէր մոռանալ, այն խնդրվում էր աշխարհասփյուռ, եղեռնից մազապուրծ՝ տարբեր երկրներում ծվարած հայերի մեջ, վրեժի ցատունն օր օրի մեծանում էր: Հայ վրիժառուների կողմից արժանի պատիժ ստացան հայկական սպանդի կազմակերպիչները, կամաց-կամաց աշխարհը սկսեց հասկանալ կատարվածի ողջ սարսափը, տեղեկանալ, ավելի մանրամասն իմանալ եղելությունը: Սկսվեց մարդկության գիտակից մասի խղճի արթնացման շրջանը, որին շարունակեց դատապարտման գործընթացը: Երեխաների շուրթերից այս ամենը հնչում էր հստակ, պատմությունն իր ժամանակաշրջաններով բերվում հասցվում էր մեր օրերին: Այն ուղեկցվում էր երեխաների, զինվորների արտասանությամբ, երգերով, Սողոմոն Թեղիկյանի դատավարության բեմադրումով: Շատ ազդու էին և երեխաների, և՛ զինվորների, և՛ ուսուցչուհիների խրոխտ պարերը, որ, ասես, վրեժի ցատունով լցված հայի ոգու պոռթկումն էին, որ պատրաստ էր արմատներն թշնամուց

ու մասնակիցներին երախտագիտության և շնորհակալության խոսք ասաց դպրոցի տնօրեն Ս. Արզումանյանը:

Միանշանակ կարելի է ասել, որ դասն իր նպատակին էր հասել: Սա այն եզակի դասերից էր, որ իրենից ներկայացնում էր միասնություն, համատեղ նպատակային և կենտրոնացված աշխատանք: Անչափ հուզիչ էր տեսնել մեր երեխաների, ուսուցիչների ու զինվորների համատեղ աշխատանքը, ինչը բանակ-հասարակություն կապի գեղեցիկ օրինակ է: Այսօրվա զինվորը կանգնած էր վաղվա զինվորի կողքին ու միասին պատմություն էին սերտում և ներկայացնում՝ այն դարձնելով իրենց և մեր նախնիների հզոր ոգու և հայրենասիրության արտահայտություն: Ուրախալի և ոգևորիչ էր փաստը, միանշանակ՝ ընդօրինակման արժանի: Ուսկանայից հոգի լցվում է հպարտությամբ. քանի ունենք այսպիսի սերունդ՝ մենք անպարտ ենք:

ՉՄՈՌԱՆԱԿԸ, ԼԻՆԵԼ ՊԱՅՏԱՆՁԱՏԵՐ, ՄԻԱՍՆԱԿԱՆ

Ապրիլը սկսվեց և ընթացավ Յայոց մեծ ցեղասպանությանը նվիրված միջոցառումներով: Մարտունու հ.1 հոսքային ավազ դպրոցում կազմակերպվեց հերթական միջոցառումը, ինչն իրենից ներկայացնում էր հիշատակի, հարգանքի, պահանջատիրության ձայնի բարձրացում: Ներկա էին Մարտունու քաղաքապետ Միքայիլ Կարամյանը, հյուրեր տարբեր դպրոցներից և հիմնարկություններից: Օրը հիշեցման քայլ էր այն մասին, ինչ տեղի է ունեցել 100 և ավելի տարիներ առաջ, որի զոհ դարձավ անմեղ ու ստեղծագործ մեր ժողովուրդը:

Յային այլ կոթողներ ոչնչացվեցին կամ վերափոխվեցին թուրքական, մեր ժողովրդի մահապուրծ դարձած և հայրենիքում մնացած մի սովոր հատված թուրքի կերպարանը ու կենսակերպ ստացավ՝ արյան ու գեղի մեջ պահպանելով հայի էությունը: Երեխաներն այս ամենը մեծ հուզմունքով ու վարպետորեն ներկայացրին, երգի ուսուցիչ ընկեր Շիրինյանի նվագակցությամբ կատարեցին հայության այսօր ուժ ու եռանդ տվող երգեր: Պատմությունն իր քառուղիներով բերեցին հասցրին մեր օրերին՝ մինչև Արցախյան գոյապայքար:

Վերջում երեխաները պարեցին հային ոգեկոչող ու պայքարի տանող պարը՝ ձեռք ձեռքի, ուս ուսի, միասնաբար: Սա է հայի հաղթանակների գրավականը՝ միասնական, միշտ հայացքով դեպի առաջ, միշտ հաղթելու պատրաստ, միշտ պահանջատեր... Միջոցառման կազմակերպիչներին շնորհակալության խոսք ասաց դպրոցի տնօրեն Կարինե Պողոսյանը՝ ևս մեկ անգամ շեշտելով օրվա խորհուրդը, նշելով, որ մենք պահանջատեր ենք՝ հիշում ենք և պահանջում:

Մեկ րոպե լռությամբ հարգվեց անմեղ զոհերի հիշատակը: Զնայած դարից ավելի պատմություն ունեցող դեպքերին՝ հայը չկարողացավ և չիրավունքվեց իր մեջ մեռցնել, մոռացության տալ արհավիրքն այն օրերի, այն գեղի, արյան միջոցով հասավ մեր օրերին, հերթական սերունդներին՝ իբրև պատգամ: Ինչ տեղի ունեցավ նախորդ դարասկզբին, մեր ազգը չկարողացավ մոռանալ, և արտահայտվեց նրա բոլոր ստեղծագործություններում, կյանքի բոլոր ոլորտներում, մշակույթի, թե կենցաղի մեջ: Ցավի, տառապանքի արտահայտությունը ամենուր է: Երեխաներն իրենց պատմություններում, բանաստեղծություններով տվեցին 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի դեպքերի նկարագիրը: Մտավորականության ոչնչացումը եղավ կատարված առաջին քայլը, որին հետևեց ազգի մնացած հատվածի կոտորածը: Պատմությունը երևի թե չի լսել ու չի տեսել այդօրինակ սարսափ և դաժանություն: Ներողամիտ հայը չկարողացավ մոռանալ իր հետ կատարվածը և վրեժի ցատունով լցված հատուցման օրվան էր սպասում: Մեր պատմական հայրենիքն անցած 100 տարիների ընթացքում ամայացավ, մեր վանքերն ու մշակու-



կալություն հայտնեց նաև դպրոցի նախկին տնօրեն Վալերիկ Յայրապետյանը՝ շեշտելով նման միջոցառումների կարևորությունը, որ թարմացնում են մեր հիշողությունը և ստիպում արժանի գնահատական տալ կատարվածին: Նույն օրը դպրոցում Մարտունու կանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի կողմից կազմակերպվեց օրվան նվիրված ցուցահանդես, որտեղ ցուցադրվեցին երեխաների ձեռքի աշխատանքները:


Վերջում երեխաները պարեցին հային ոգեկոչող ու պայքարի տանող պարը՝ ձեռք ձեռքի, ուս ուսի, միասնաբար: Սա է հայի հաղթանակների գրավականը՝ միասնական, միշտ հայացքով դեպի առաջ, միշտ հաղթելու պատրաստ, միշտ պահանջատեր... Միջոցառման կազմակերպիչներին շնորհակալության խոսք ասաց դպրոցի տնօրեն Կարինե Պողոսյանը՝ ևս մեկ անգամ շեշտելով օրվա խորհուրդը, նշելով, որ մենք պահանջատեր ենք՝ հիշում ենք և պահանջում:

Վազմակերպիչներին շնորհակալության խոսք ասաց դպրոցի տնօրեն Կարինե Պողոսյանը՝ ևս մեկ անգամ շեշտելով օրվա խորհուրդը, նշելով, որ մենք պահանջատեր ենք՝ հիշում ենք և պահանջում:

ՆԱԵՎ՝ ՍՐԱՓՈՒԹՅԱՆ ԿՈՉ

Ապրիլը գարնան, գմրուխտի, ծիլ ու ծաղկի հրավառության ամիս է: Բայց գարնանային շունդալից այդ երկրներանգը լիովին չի ծիածանվում հայի հոգում, որովհետև այն բեկվում է մեր հոգում միլիոնավեց անգամ: Ապրիլի 24-ը մի շառաչուն ապտակ էր հայի դեմքին, որից սթափվելու համար պահանջվեցին տասնյակ տարիներ:

...Հուլառատ դաս-միջոցառումը, որ տեղի ունեցավ ապրիլի 21-ին, Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի դահլիճում, կազմակերպված էր պարարվեստի քոլեջի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, հունամիտար հոսքի մեթոդավարման նախագահ Իրինա Ավետիսյանի կողմից: Այն կրում էր «Հավերժ ծամփորդը» խորագիրը, մասնակիցները՝ 11-րդ դասարանի աշակերտներ: Այն իր մեջ ներառում էր երեք մասեր՝ ա) ովքեր ենք մենք՝ հայերս, որտեղից ենք գալիս և որն է մեր երկիրը, բ) Յայոց ցեղասպանությունը, գ) Ատոմ Յարճանյան, որը 11-րդ դասարանում ծրագրային ուսուցման մեջ է մտնում: Գրող, ով զոհ գնաց թուրքական յաթաղանին:



Աշակերտները հատված առ հատված ներկայացրին Յայոց աշխարհը, հայոց մեծերին և հայերի անցած ճանապարհը, որոնք ընդմիջվում էին տեսախոլովակներով, իսկ էկրանին իրար էին հաջորդում նյութին համապատասխան նկարներ, պատկերներ, սրբազան մասունքներ:

Անչափ հուզիչ էր երկրորդ մասը, որտեղ ներկայացվեցին Յայոց ցեղասպանությունը և Օսմանյան Թուրքիայի հայախալած քաղաքականությունը: Էկրանին փոփոխվող նկարներից ամեն մեկը մի ճիչ էր, ցավ, մորմոք ու տանջանք:

Ի. Ավետիսյանն անդրադարձել էր նաև հայոց նվիրյալներին, ովքեր իրենց կյանքը դրեցին հայրենիքի փրկության զոհասեղանին: Անչափ հուզիչ էր Պետրոսի նամակը, որը գրել էր իր մորը ճանապարհին: Նամակը ծրարված էր, և աշակերտներից մեկը մեծ խորհրդապաշտությամբ բացեց ու ընթերցեց որդու վերջին խոսքը մորը: Դաս-միջոցառումն ընդհատվում էր ասունքով: Ասունքում էին Սևակից, Իսահակյանի «Հայրուկի երգեր»-ից, Սիմանթոնից: Անչափ հուզիչ էր Թուրմանյանի «Հոգեհանգիստ» բանաստեղծության արտասանությունը, որը հոգեհանգստյան խոսք էր եղեռնի անմեղ զոհերի հիշատակին՝ «Ննջեք, իմ որբեր, իզուր են հուզանքը...»:

Ի. Ավետիսյանը աշակերտների միջոցով ներկայացրեց Ատոմ Յարճանյանին, նրա ստեղծագործությունները, կանգ առավ այն բանաստեղծությունների վրա, որտեղ հեղինակը մարդկանց պայքարի կոչ է հղում և տասներկու կոչ՝ տարագիր հայերին, որ վերադառնան և շենացնեն հայրենիքը:

Հետաքրքիր էին նաև դիտողական պարագաները: Բեմն ու դահլիճը զարդարված էին պաստառներով, անմոռուկներով, Կոմիտասի, Եղեռնի զոհ գնացած մտավորականների, ֆիդայիների նկարներով: Հանդիսատեսի աթոռներին, եռագույն թղթերի վրա գրված, դրված էր Գարեգին Նժդեհի համաձայն մտքերից մեկը. «Ժողովուրդ, քո պատմության բոլոր դարերով երգվեցնում են սերունդներիդ, չներել, չներել թուրքին, եթե մի օր հանկարծ նրան տեսնես անկյալի վիճակում:

Այո, ներում են թշնամուն, բայց ոչ իր կեսին սպանիչին, ոչ նրան, որը մի օր փորձեց գոյության գրքից քո էջը սրբել»: Զգոնություն կոչող այս բառերն էլ հենց առաջին պահից միջոցառման մասնակիցների ուշադրությունը սևեռեցին դեպի հնչվող նյութը:

Միջոցառումը հետաքրքիր էր, բովանդակալից, ուսուցանող, և ես իմ խորին շնորհակալությունն են ուզում հայտնել հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ի. Ավետիսյանին նման խիստ հազգեցած միջոցառում կազմակերպելու համար:

Անահիտ ՆԵՐՍԵՅԱՆ
Սրբեկանակերտի պարարվեստի քոլեջի ուսանող

Կարինե ՊՊՈՍՅԱՆ

ՀԻՇՈՒՄ ԵՄ ԵՎ ՊԱՆՈՒՆՋՈՒՄ

ԲՈՂՈՔԻ ԴԻՄՈՒՄ

«Ճանապարհ, գոնե մեկ-մեկ ինձ հայաստան տար...»:

Պատահում է, երբեմն մի երգ մեկի նման խրվում է ուղեղիդ և կոկորդիդ մեջ, օրեր շարունակ քեզ հանգիստ չի տալիս: Ահա այդպիսի մի երգ Թաթայի երգացանկից շարունակ տանջում էր ինձ: Ասեմ, որ երբևէ նման ժանրի սիրահար չեմ եղել, ուստի ինքս ինձ վրա բարկանում էի, բայց համոզված փնտրում էի այս անեղի կապն ու պատճառը:

Գտա: մի ծանոթ պապիկի կարտը էր դա, իր երգի Կարտը: Եթե համբերեք, կպատմեմ: Արցախյան շարժման տարիներն էին: Իտալիայի Վենետիկ քաղաքից մի քանի հայ գործարարներ էին եկել Երևան: Ինձ բախտ վիճակվեց հանդիպել նրանց հետ: Խնամքով գնացիք Ծիծեռնակաբերդ: Նրանցից մեկը՝ պարոն Երվանդը, խնդրեց այնտեղ աշխատող լուսանկարչին այնպես նկարել իրեն, որ ամբողջ կոթողը երևա: Երբ լուսանկարիչը մի քանի րոպեից տվեց լուսանկարը, նա երկար նայեց նկարին և ասաց.

-Սա Օհան պապիկի համար

շատ բանկարծեք նվեր կլինի, - և նկատելով իմ հետաքրքրասեր հայացքը, ասաց,- կուզե՞ք պատմեմ Օհան պապիկի մասին: Այսպես սկսեց իր պատմությունը պարոն Երվանդը:

-Օհան պապիկը իր գործարանի այգեպանն է: Ափտակափառ, սուր, ուղորած բեղերով ութսունին մոտ ծերունի է, Երզրում գավառից: Լռակյաց է, թախծոտ ու շատ աշխատասեր: Մի քանի անգամ նկատեցի, որ աղբարկոյից հանում է հայերեն թերթեր, հարթում ու դնում գրպանը: Մի օր էլ հարցրի.

-Օհան պապ, դու հայերեն չգիտես, ինչի՞նչ են պետք այդ թերթերը: Ի՞նչ գարմանս ինձ՝ Օհան պապը պատասխանեց ինձ հայերենով.

-Երգրի կարողը կամուրջ, օղուկ: Ես գարմանքից բարացած նայում էի նրան, իսկ նա շարունակեց.

-Յիմա կասես, բա ինչի՞ մինչև հիմա հայերեն չէիր խոսում:

Դանդաղ քայլեց դեպի նստարանը՝ ինձ հասկացնելով, որ հետևեմ իրեն: Նստեց ու դանդաղ խոսեց.

-Ամեն մարդ, որ ծնվում է, ձեռք է բերում երեք պարտք, որը մինչև

կյանքի վերջը պետք է մարի: Մեկ պարտքը Աստուծուն է, պետք է պահի պատվիրանները, մեկ պարտքը ընտանիքին է, պետք է նրան դաստիարակի ազգին ու հավատին համապատասխան, մեկն էլ հայրենիքի պարտքն է, օղուկ: Հասել եմ կյանքիս մայրամուտին, բայց պարտքերս չեմ տվել: Աստուծու պատվիրանները չեմ կարողանում կատարել, որովհետև չեմ կարողանում ներել, հասկանում ես, չեմ կարողանում, թուրքին ինչպես՞ ներեմ, դե ասա: Նա է, չէ՞, իմ երեք պարտքերը չկատարելու պատճառը: Աստված էլ ասում է՝ ներիր թշնամուդ, սիրիր թշնամուդ: Եդպես չի լինում, հասկանում ես: Աչքիս առաջ պապիս համած աչքերն են շան առաջ գցած, մորս մատանեզարդ կտրված դաստակն է, բռնաբարված քույրս է: Յոթ-ութ տարեկան երեխա էի, խոտի դեզի մեջ էր տատս ինձ թաքցրել: Աչքիս առաջ տատիս վառված մարմինն է: Օջախին պղնձե կաթսայով յուղ էր հալում, յուղը լցրի՞ն վրան, վառեցի: Միտեմ, հա՞, թշնամուդ: Միտեմ նրա համար, որ որբանոցներում թափառելուց հետո, անուսնացա իտալուհու հետ, զա-

վակներս իտալերեն են խոսում, թոռներս իտալերեն են խոսում: Երբ նրանց փորձում եմ ծանոթացնել իրենց արմատներին, հարսներս բարկանում են ու արգելում: Թուրքին ներեմ նրա համար, որ տասնչորս տարեկան թոռս մորից թաքուն ճարել էր Մասիսի նկարը և նվիրել ինձ: Այս թերթերի պատառներն են դարձել իմ մխիթարանքը, բայց նայում եմ, նայում, փորձում եմ կարդալ, չեմ կարողանում: Կյուրեղ վարդապետի սովորեցրած տառերը ուրիշ էին:

-Օհան պապ, երկի գրաբար է սովորեցրել:

-Երկի, ի՞նչ իմանամ:

-Օհան պապ, գոնե մի անգամ մոտենալիր, ասեիր՝ ինչպես ես այդ ամենը պահել քո ներսում:

Ծերունին խոր հոգոց հանեց և ասաց.

-Ախր, ես ինձ էլ չեմ ներում, մի տեսակ ամոթի զգացում կա, խղճի խայթ կա: Չգիտեմ, ինձ հասկանում էն ես, թե չէ: Գոնե մեկ անգամ հայաստան գնալի, նայել Մասիսին ու ասելի. - դու ինձից ու իմ ժողովրդից Աստուծուն մոտիկ ես, դու ծնունդ տվիր մարդկությանը ջրի-

ղեղից հետո, դու փրկեցիր աշխարհը կործանումից: Աստուծու ինչու չես հարցնում.

- Տեր, փրկեցի Նոյան տապանը քո հրամանով, ինձ ո՞վ պետք է փրկի, ո՞վ: Հարցնեիր, հետո ասեիր.

- Տեր, թե Աստված սեր է, սիրիր մեզ ևս, վերադարձու այն, ինչ ունեինք, հետո պահանջիր, որ ներեմ ու սիրեմք թշնամուն, չէ՞ որ ասում էիր՝ աչք մի տնկիր ուրիշի ունեցվածքին: Էհ, օղուկ, հիմա հասկացա՞ր, թե ինչու չեմ տալիս պարտքերս: Բողոքի դիմում գրիր Աստուծու իմ անուսնից, թե ինքը ներեց, ես էլ կներեմ, բա՛: Եդ էլ մեր Օհան պապը, ասաց պարոն Երվանդը, նայեց Արարատին ու շուռ եկավ.

- Ի՞նչ ես կարծում, երկու միլիոն բողոքի դիմում կտեղավորվի՞ Արարատի վրա:

Պատասխանը լռությունն էր ու հեղձուկը՝ կոկորդիս մեջ խրված:

Աննա ԱՅՎԱԶՅԱՆ

ԻՄ ՀՆՈՒՄ, ԻՄ ՄՈՏԻԿ, ԻՄ ՄՈՒՐ ԸՆՅԱՍՏԱՆ

Ողջո՞ւյն, իմ հեռու, իմ մոտիկ, իմ սուրբ հայաստան:

Քեզ հայտնագործելու համար պետք չէ, որ հայրենասիրական գրքեր կարդան կամ ամպագոռոք բառեր ասեն: Բավական է նայել Մեծ տատիս դեմքին, բռնեմ նրա աչքերից հոսող արցունքի ոլոր-մոլոր ճանապարհը եւ հասկանամ՝ ինչ է իրական հայրենիքը:

Մեծ տատս երբ բարկանում է, երբեմն անեծքի մեջ օտար բառեր են հնչում, որոնք մենք չենք հասկանում.

- Բավարդ տուն չգա, օսման...

-Կապրեմ, հարյուր տարի կապրեմ, մինչև չտեսնեմ վաթանս,- ասում է Մեծ տատս եւ ծոցից հանում մի փոքրիկ քսակ, կրծքին սեղմում: - Ի՞նչ եք պլշում աչքներդ, ոսկի չէ, սա մեր տան բալանիքն է, որ մերս վերջին պահին ծոցս զցեց:

Մեծ տատիս մեղմ աչքերը հանկարծ ընթուստանում են, և նիհար ձեռքերով հանում է քսակից ժանգոտած բանակները՝ հայրենական տան վերջին մասունքը...

- Մեծ տատ, է՞դ պիտի գողանանք, որ եղպես հավետով թաքցնում ես, հիմի մարդիկ «պուկտով» են բացում դռները, էդ իսկի ջարդոն էլ չեն վերցնի,- հաճախ էր սիրում կատակել փոքր եղբայրս:

- Դու ի՞նչ գիտես սրա դադրը, բալաս: Քոնց են ա՞՛ էդ խոսող արկղը միացնես ու նրա սիլի-բիլին նայես,- ասում է Մեծ տատս:

Ինձ Մեծ տատ... Համառորեն ապրում է, որովհետև նվիրական երգազանք ունի՝ բանակներով բացել հայրենական տան դռները: Ոնց որ կորցրել է հիշողությունը. վերջերս անընդհատ ասում է, թե 94 տարեկան է:

- Ինչ է, ես միշտ ինձ թվակա՞ն եմ մնալու,- ասում է ու զարմացած ինձ նայում:

Այդ պահին ես մի քիչ վախեցնում եմ, բայց նա չոր մատներով թփփացնում է ուսերս և ասում.

- Մի՛ վախենա, հլա դեռ խելքս չեմ թոցրել, ճիշտ է, հաշիվ-հաշվառքս կորցրել եմ, բայց հաստատ գիտեմ մեր տան տեղը, մեր նկուղի օճորքի ծիծեռնակի բույնը, մեր հանդի ծաղիկները, մեր կաթնահամ ջրերը... Հե՛յ գիղի

վաթան, ե՞րբ եմ այս քո աչքերով քեզ տեսնելու:

Ասում է ու ձեռքը դնում «քոռ» աչքին: Այդ պահին խեղճանում է Մեծ տատս, ուսերը կծկում, գլուխն առնում ափերի մեջ ու հեծկլտում:

Ես իմ ձեռքով սրբում եմ տատիս արցունքները եւ խնդում՝ մոռիր պատմի իր կոկորդիսը հայրենիքի մասին:

Ուշ երեկոյան, երբ լուսինն իր հաղթանակի խրախճանքն էր անում աստղերի հետ,



ցե՛ս՝ մեր Շեկոյի գոմոռոցից չվախենա, յուրաքանչեք չի կծում, մի կտոր հաց կտաս ու կշոյես գլուխը. իսկույն կճանաչի քեզ, քանզի քո մասին շատ եմ պատմել նրան: Հա, չմոռնամ, մի՞նչ ես տուն բարձրանալը կմտնես նկուղ, էնտեղ հիսուն տարվա գինի կա, օճորքից կախված զամբյուղում ոսկեվազ խաղող, նուռ, սերկկի: Կվերցնես ու վերս կբարձրացնես: Հա, չմոռնամ, դռան մոտ, ամկյունում մի սնդուկ կա՞՝ մեջը հորս ու մորս նկարները, պապիս գոտին ու արխալուղը, նանիս երեսկալը: Չմոռնաս նկարները պատից կախել, համ էլ ասա՝ ինչպե՞ս չի կնք, սաղ-սալամաթ տեղ եմ հասել, Մայր Արաքսը բարի գտնվեց, խղճաց ինձ ու ասի մետեց: Փոքրուց էլ պնդաճակատ եմ եղել: Հա, չմոռնամ, ասել, պատուհանագոգին մի փարչի մեջ մոմեր կան, կվերցնես տասը հատ, կզնաս Ամենափրկիչ եկեղեցի ու կվառես, խոսք եմ տվել: Չմոռնաս մտնել հավաքունը, բռնել ամենամեծ կարմիր խորոզը և մատաղ անել: Մատաղը կբաժանես յոթ ընտանիքի և տես՝ չմոռնաս Կաղ Հովսեփին: Հա, չմոռնամ ասել... - Կարծես մղձավանջներից վերադարձավ Մեծ տատս, նայեց ինձ ու աղեբսագին խնդրեց,- ասածներս կանե՞ս, Անի բալա...

Նայում եմ տատիս մարդկային աչքերին, ուր երգազանքն ու իրականությունը իրար են խառնվել, և հասկանում՝ Մեծ տատս իմ հեռու, իմ մոտիկ, իմ սուրբ հայրենիքն է, հայաստանը՝ իր կորցրած ու գտնված բալիկների հետ:

- Կանեմ,- արցունքների միջից երդման պես արտաբերեցի ես:

Հետո Մեծ տատս փակեց աչքերը՝ իր հետ տանելով իմ մանկության ոսկեթև թռչունը:

Փակեց, բայց մի հատիկ ուղոր-մոլոր արցունք հոսեց և կես ճանապարհին կանգնեց ու ահարկու տեսքով հրամայեց ինձ.

- Պարտավոր ես...

Երգազանքի և նրան հասնելու միջև ընկած տարածությունը երբեմն անբողջ կյանք է պահանջում, որն էլ հաճախ անկատար է լինում:

Մեծ տատիս ապրած ինքնուհուճեց տարիներ չհերիքեցին, որպեսզի իր երգանքը իրա-

կանացած տեսներ: Երգազանքը սուրբ հայրենիքն էր՝ և՛ մոտ, և՛ հեռու: Այդ հայրենիքը նաև իմ հայրենիքն է: Ճիշտ է, ես այնտեղ չեմ ծնվել, բայց տատիս պատմածներից գիտեմ՝ ինչպիսին է նա...

Յիմա այնտեղ՝ խորունկ ծորում, տատասկն է իշխում, թեկուզ գարունն է իր վայրի քնքշանքը վառում, բայց ճնճաղկի աչքից կապույտ արցունք է ծորում՝ նման տատիս արցունքին: Եվ ամենուրեք երկինք կարկառած ձեռքեր, անձև կարոտներ ու թախտի, անգոր անեծքներ, հավատով լեցուն աղոթքներ... Ամենուրեք ծայրեր են, որոնք ինչ-որ ժամանակ մանկան ճիչ են եղել և մոր օրորոցային, հողվորի հորովել են եղել եւ տերունական աղոթք, երեխաներին դարձնող կանչող գանգի ձայն և պանդուխտին տուն բերող աղերս...

Ես լսում եմ այդ ձայները, որոնք դառնում են մի անհուն մեղեդի, զրոգացնում կարոտիս ձայնալարերը և տիրոջ իրավունքով պահանջում.

- Վերադարձու՞մ եր հայրենիքը:

Ներհի՛ր, Մեծ տատ, որ այս ապրիլին էլ ուրիշների բախտը տնօրինող խոշոր տերությունը ոչ միայն չհաստատեց, այլև չհերքեց սուտը: Ուրիշը մեր ցավը չի հասկանա, բանի դեռ ինքն իր մաշկի վրա չի զգացել այն: Ես քո ցավն ու տառապանքը կողմ վերջին շառավիղն եմ և պատրաստ եմ արմատափնի անել չարն ու անտարբերությունը: Ես խոստանում եմ՝ երբևէ տուն կբերեմ քո սուրբ հայրենիքը, քո վաթանը, ինչպես դու ես ասում: Ինձ ժառանգած բանալիով կբացեմ քո պապեական տան դռան կողպեքը, կմտնեմ նկուղ, կհամտեսեմ օճորքից կախված զամբյուղի խաղողն ու սերկկիլը, նուռն ու թուզը, կխամեմ արդեն հարյուրիսունամյա գինին: Չեմ մոռանա կարմիր խորոզը, այն մատաղ կանեմ Ամենափրկչին և մոմեր կվառեմ սուրբ խորանի առաջ ու կասեմ.

- Շնորհակալ եմ, Տեր, որ ինձ վերադարձիր իմ սուրբ, հեռավոր ու մոտիկ հայրենիքը՝ գերյալ հայաստանս:

Անի ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՈՒՄ
ԽՄԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ
Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 111, 94-38-99,
E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ զրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 4.5 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 02.05.2015թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությանը: